


Մեր ՀԱՅՐԸ սուրբ Ավետարանն է, ՄԱՅՐԸ մեր՝ Առաքելական սուրբ Եկեղեցին (Եղիշե, Ե դար):


Որոյա՛կ իմ, ՀՈՐԴ խրատը լսիր ու ՄՈՐԴ օրենքը մի մերժիր (Առակ. 1:8):

Այն աչքը, որ իր ՀՈՐԸ կծաղրի և իր ՄՈՐԸ հնազանդվելը կանարգի, ծորերի ագռավները պետք է փորեն ու արծիվների ձագերը պետք է ուտեն (Առակ. 30:17):

Եվ դարձյալ տալիս եմ ձեզ խորհուրդը սուրբ ԵԿԵՂԵՑՈՒ. ինչ բարի գործ որ կատարեք, թող լինի բարեգործություն և փառք հանդերձյալ կյանքի համար: Ամեն (Արձակում):



ԽՐԱՏԱՆԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ





*Մերերի պսակը բազմաՀմտութիւնն է և նրանց
պարծանքը՝ երկյուղը Աստուծոց (Սիրաք 25:8)*



«Խրատանի
ապաշխարութեան»
մատենաշար.

ԳԻՐՔ Է

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՍԱՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

1. Ս. Հովհան Օձնեցի, 2. Ս. Ներսես Շնորհալի,
3. Ս. Մեսրոպ Վարդապետ, 4. Ս. Մովսես Խորենացի

Լսեցեք ձեր առաջնորդներին և հնազանդվեցեք
նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների
համար (Եբրայ. 13:17):

Առաջաբան

Աղոթքը և ողորմությունն առաջնային դեր են խաղում քրիստոնյայի կյանքում, քանզի սրանք պատճառ են, որպեսզի մահկանացու և հողեղեն մարդը հիշվի Ամենակալ Արարչի առջև. «Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Մաղմ. 8:5): Ինչպես որ այս առաքինություններին հետևելու պատճառով Տիրոջ առջև հիշվեց Կռնելիոսը. «Քո աղոթքներն ու ողորմությունները հիշատակվելով, Աստծո առաջ ելան» (Գործ. 10:4):

Երատանիի այս համարը ընթերցողի ուշադրությանն է հրավիրում ոչ միայն աղոթքի և ողորմության բաժինների վրա, այլ նաև Աստծո երկյուղի մասին վերնագրերին, առանց որի քրիստոնյան չի կարող դիմակայել այս հոգևոր պատերազմում, չունենալով իմաստություն, քանի որ «Իմաստության սկիզբը Աստծո հանդեպ ունեցած երկյուղն է»: Քանզի վերը նշված այս բոլոր վերնագրերի մասին բավականին նյութ կա, դրա համար էլ առաջաբանի մեջ ավելի կշեշտվի Աթանաս Մեծի ուղերձը, առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ այս ուղերձի բովանդակությունը (թե ինչպես կարող է նման հարցեր ծագել և խոչընդոտել քրիստոնյայի հոգևոր ընթացքին): Սակայն եթե այն քննենք Տիրոջ ողորմությամբ, կարող ենք տեսնել, որ մեծ օգուտներ կարող ենք քաղել այս ուղերձի բուն իմաստն ընկալելուց, իսկ եթե այն անտեսենք՝ շատ մեծ վնասներ կստանանք:

Այստեղ սուրբ հայրը քրիստոնյաների համար ջանում է բացահայտել նենգ թշնամու՝ սատանայի խարդավանքները, որով սա ցանկանում է շեղել քրիստոնյային փրկարար ուղուց: Եվ քանի որ մեր պատերազմը մարդկանց՝ այսինքն, «մարմնի և արյան» դեմ չէ այլ սատանայի, դրա համար էլ շատ կարևոր է իմանալ թշնամու պատերազմելու ոճը և ջանալ ըստ այնմ դիմադրել նրան, նաև հուսալով առ Աստված, անցնել հակահարձակման:

Չոգևոր պատերազմում զուրկ լինելով այս գիտությունից, մենք շատ հաճախ ընկնում ենք թշնամական խաբեության մեջ և մեր բոլոր ջանքերը վատնում ենք իզուր և անօգուտ: Իսկ ամենաահավոր խաբկանքն այն է, որ այդ ունայն ջանքերի մեջ լինելով, համարում ենք, որ մեծ-մեծ գործեր ենք անում, և այսպես մնում ենք անպտուղ: Երկրորդ, ընկնում ենք ինքնագոհության մեջ՝ համարելով, որ վաստակավորներ ենք Տիրոջ այգու մեջ, սակայն իրականությունը, ցավոք, շատ է տարբերվում նման կարծիքից. «Ասում ես՝ մեծատուն էի և առավել հարստացա ու ոչ մի բանի կարոտ չեմ, - և չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ և աղքատ, մերկ և կույր» (Չայտ. 3:17):

Թշնամին հարուցում է մեր մեջ ամենատարբեր մտքեր և խորհուրդներ,

իսկ մենք մեր կողմից պարտավոր ենք այն քննել, և եթե դրանք չեն համապատասխանում սուրբ հայրերի տեսակետին, ապա պարտավոր ենք դրանք անմիջապես մերժել, քանզի սուրբ հայրերը մեծ փորձառություն են ունեցել այս անտեսանելի պայքարում: Եվ ինչու առաջնային չենք համարում այս պարագայում Սուրբ Գիրքը և ավելի տեղ ենք տալիս սուրբ հայրերի մեկնությանը, սա այն պատճառով, որ իրենք՝ հայրերն իսկ ասում են, որ Աստվածաշնչի ինքնակամ մեկնություններից է, որ առաջանում են բազում շեղումներ և աղանդներ: Դրա համար էլ արհամարհել նման փորձառու մարտիկների փորձառությունը և պատերազմել ինքնակամ, դա միշտ էլ պիտի բերի ցավալի անկումների: Եվ այսպես, ըստ սբ. Աթանաս Մեծի, չարը կարող է մարդուն մղել կասկածելու, թե նույնիսկ բնական պահանջները, որ տրված են մարդ արարածին, դրանք էլ կարող են մեղք համարվել: Տրվելով նման մտածմունքների և այն միանգամից չմերժելով, մարդն սկսում է գիշեր ու զօր խորհել անօգուտ բաների մասին:

Չարը մեր առջև դնում է կեղծ թիրախներ և մեզ մղում նրանց դեմ պատերազմել՝ ներշնչելով, թե հենց այդ է սատանայի դեմ մղված պայքարը: Սրանով նա մեր թանկագին ժամանակը, որի համար գրված է, թե. «Ծախու առեք», ստիպում է վատնել դատարկ բաների վրա: Նա մեզ խաբելով աշխատում է հանդգել, որ մենք այդպես վարվելով մեծ-մեծ վնասներ ենք հասցնում իրեն և երկրնքում բազում զանձեր դիզում: Այսպիսով, մեզ ոչ միայն բարի պտուղներից է զրկում, այլ այնպես է անում, որ պտղաբերենք չար պտուղներ, որոնք են՝ ինքնահավանությունը, փառամոլությունը, հպարտությունը, մարդահաճությունը, ինքնավստահությունը և սրանցից էլ, իրենց հերթին ծագած բազում այլ չարիքներ: Այդ խաբեությունը կարող է իր մեջ գրավել այնպիսի ուղորտներ, որոնց մեջ, առաջին հայացքից, չեն կարող չար բաներ լինել:

Օրինակ՝ աղոթքը համարվում է ամենամեծ առաքինությունը, սակայն հերիք է աղոթքի գենքը ճիշտ ուղու վրա չդնել, և սա ոչ միայն բարիքի, այլ մեծ չարիքի պատճառ կարող է դառնալ: Այսինքն, աղոթքով, եթե չի փնտրվում սեփական մեքերի տեսություն, նրանցից ձերբազատվելու շնորհ, երկյուղ, խոնարհություն, դժխոտքից խուսափում և երկնքի արքայությանն արժանանալու ուղի, այլ մոռանալով իր անձի համար վերը նշված խնդրանքները, տրվելն ունայնաբանության, այսինքն՝ ամբողջ ջանքով աղոթել այս կամ այն պետությանը քրիստոնեության դառնալու համար և նմանօրինակ այլ բաներ: Սրանք իրականում չարի խարդավանքներ են, ո՛չ Գրիգոր Նարեկացու Աղոթագրքի և ոչ էլ Ներսես Շնորհալու աղոթքների, և ոչ էլ այլ հայրերի աղոթքների մեջ նմանօրինակ բաները առաջնային չեն եղել: Նրանք լացել են իրենց մեղքերի վրա և մեր համար էլ դարձել օրինակ, քանի որ հայրերի մոտ ասված է. «Փրկվիր դու, և շուրջ

բոլորը կփրկվեն շատերը»:

Իսկ չարի մղումով, մեր անձի փրկության հարցերն արդեն իսկ լուծված համարելով, սկսում ենք աղոթել այլ բաների համար՝ մնալով անպտուղ և ոչ մի բանով օգուտ չենք տալիս նաև նրանց, ում համար որ աղոթում ենք: Շատ հաճախ աղոթքն արվում է որպես ճգնություն և ոչ որպես փրկություն գտնելու միջոց: Նման աղոթքները կարող են ժամեր տևել, որովհետև աղոթքի բուն նպատակից շեղվելով, թշնամին չի հակառակում այդ աղոթքին, այլ էլ ավելի մղում է նմանօրինակ աղոթողին՝ առաջանալու աղոթքի մեջ: Իսկ ճշմարիտ աղոթական վիճակի մեջ լինելու ժամանակ չարն ամեն կերպ սկսում է խոչընդոտել ձանձրույթի, հիվանդությունների, ամենատարբեր այցելությունների, պիղծ և ունայն մտքերի, նաև շատ այլևայլ բաների միջոցով: Իսկ ինչպես արդեն ասվեց, եթե աղոթքը ցավ ու անհանգստություն չի պատճառում թշնամուն, վերջինս նման աղոթքին ոչ միայն չի դիմակայում, այլև խրախուսում է: Այսինքն՝ աղոթքի զենքը անգիտության պատճառով գործածվում է ոչ ճիշտ նպատակի, այլ կեղծ թիրախի վրա:

Նմանօրինակ ձևով երկրպագությունները հոգուն մեծ շահ են բերում, եթե այն կատարում է այնպես, ինչպես հարկն է. «Աղոթական կարգիդ ընթացքում սիրի որ նաև երկրպագություններ անել» (Իսահակ Ասորի): Եվ փոխանակ երկրպագությունները մեղավորության զգացումով արվի՝ այն գործելով ահով և դողով, գիտակցելով, թե Ում առաջ է այն կատարվում, շատ հաճախ տրվում են մոլորության և ընկնում ահավոր մի վիճակի մեջ: Սկսում են Աստծո առջև ոչ թե ըստ պատշաճի երկրպագություններ անել, այլ մեծ ջանքով և եռանդով քրտնաթաթախ կատարում են մարմնամարզություն:


«Ցրվածությամբ երկրպագություններ անողը նման է քանուց տատանվող եղեգի» (Թեոփիլոս ճգնավոր): Եվ կարծում են, թե դա աստվածաշտություն է, բայց կողքից դիտողի համար իսկ տհաճ է, քանի որ ընդամենը զգացմունքներից զուրկ տարօրինակ վարժությունների մի շարան է, ուր մնաց Աստծո մոտ: Չէ որ Աստված սրտագետ է և արտաքին բաներին չէ, որ նայում է, որի վրա և մեր ուշադրությունն է սեռում նույն Թեոփիլոսը: «Սիրեցիք դուք երկրպագություններ անելը, և դա շատ լավ է: Սակայն մի մոռացեք, որ երկրպագությունների խորքում պիտի ընկած լինի սրտից ելնող աղոթքներն առ Աստված, ի սրտե գոհությամբ և խնդրանքներով քո խոսքերով կամ անգիր սովորած աղոթքներով: Կարևորը, որ ամեն պարագայում էլ գործի սիրտը»: Եվ նորից, չարը ոչ միայն խափանում է նման ձևով ճշմարիտ երկրպագությունը, այլ օգուտ է մեղքի մեջ՝ մղելով դատելու նրանց, որոնք իրենց պես ջանասեր չեն այդ ունայն վարժությունների մեջ: Չարի խարդավանքներին տեղիք տալը շեղել է ճանապարհից ոչ միայն սովորական քրիստոնյաներին, այլ նաև վանքի

պատերից ներս գտնվող ճգնավորներին: Վեր-

ջիններս մասին մոտավորապես այսպիսի բան է գրում հայր Նիկողեմոսը. վանքերում կան վանականներ, որոնք գիշեր ու զօր գտնվում են ծոմապահության, աղոթքի, երկրպագությունների մեջ, նաև գիշերն անքուն անցկացնում են ոտքի վրա և թափում են այլ ջանքեր: Սակայն, ցավոք, այդ բոլոր գեներն ուղղված չեն եղել թշնամու դեմ, այլ նրա կողմից դրված թիրախների դեմ: Եվ քանի որ այս բոլոր ջանքերը նպատակ չէին ունեցել խոնարհություն, երկյուղ և այլ բարիքներ ձեռք բերելու համար, այլ արվել է ուղղակի որպես ճգնություն, վանականներին օգել են հպարտության և ինքնահավանության մեջ: Իբր իրենք արդեն հասել են մեծ բարձունքների: Սակայն ըստ սուրբ հոր նրանց ընկած վիճակն իսկույն երևում է, երբ հանկարծ խանգարում են նրանց աղոթքի կամ նման մի այլ պահի: Նրանք դրանից ընկնում են բարկության մեջ և պատրաստ են կոպտելու և նույնիսկ հարվածելու: Որոնց համար ասում է, թե ոչ մի մարդկային ուժ չի կարող նրանց շտկել այս շեղումից, այլ միայն Աստծո ամենակարող զորությունը: Ամբողջ կյանքն անցկացնելով վանքում, հրաժարվելով ամեն աշխարհային մխիթարություններից և տրվելով նման խստակրոն վարքի, սրանք ամեն ինչ զոհում են, ցավոք, կեղծ թիրախի դեմ պատերազմելով և մնում ձեռնունայն: Վանականների դասը երկնքում ամենամեծը և պայծառներից է, սակայն եթե այդ ճգնությունները ճիշտ նպատակին ուղղված լինեն:

Նաև շատ հաճախ Սուրբ Գիրքն ընթերցվում է և սերտվում մեծ ջանասիրությամբ, ոչ այն բանի համար, թե. «Քմենք ձեր անձերը, արդո՞ք հավատքի մեջ եք», այլ ուղղակի ժամանակը կարծես ինչ-որ հոգևոր բաներով անցկացնելու նպատակով: Սրանից հիմնականում ծագում է միայն վեճեր և բարկություններ, նաև գլուխը լցվում է բազում այնպիսի գիտելիքներով, որոնք հոգուն շահ չեն բերում, այլ միայն այն, ինչի մասին ասում է առաքյալը. «Գիտությունը հպարտացնում է» (Ա Կորնթ. 9:1), կամ, ինչպես ասում է Իսահակ Ասորին. «Ամեն մի ընթերցում չէ, որ օգտակար է»:

Մեծագույն սրբերից հայր Պիմենի մասին ասում էին, որ նա ընդհանրապես չէր խոսում, երբ խոսքը գնում էր աստվածաշնչյան խրթին հարցերի և երկնային զաղտնիքների մասին: Խոսում էր, երբ հարցնում էին մեղքերից ազատվելու, կրքերից ձեռքազատվելու, մի խոսքով, ճշմարիտ սրբության կյանքի մեջ առաջանալու մասին: Քանզի գիտեր, որ Դատաստանի օրը Տերը չի հարցնի, թե ինչո՞ւ այս բաները չսերտեցիր, այլ ինչո՞ւ չջանացիր, որ Սուրբ Գրվածքները պատճառ դառնային, որ անձը մատուր և սուրբ անոթ լիներ Աստծո ձեռքին ծառայելու համար: Քանզի Սուրբ Գրքի նման ուսումնասիրությունը հիշեցնում է այն հիվանդին, որը կենարար դեղը խմելու փոխարեն, ջանասիրաբար զբաղվում է միայն այն ուսումնասիրելով: Համարելով, որ դա բավական է բժշկվելու համար: Եվ նման




ուսումնասիրությունը նույնպես կեղծ թիրախի դեմ

պայքարի մի վիճակ է:

Նման ձևով նաև ողորմությունը, եթե ըստ Սուրբ Գրքի չի տրվում, միայն դրամի իզուր վատնում է, փառամոլության և մարդահաճության պատճառ: Եվ այն, ինչի համար ասվում է, թե. «Երանի ողորմածներին, որովհետև ողորմություն պիտի գտնեն», սրա սխալ օգտագործումը կարող է ավելի մեծ վնասներ պատճառել, քան եթե այն ընդհանրապես չարվեր:

Շատ անգամ էլ մարդիկ իրենց անձնական հոգևոր կյանքն անտեսելով, ամբողջովին ծանրաբեռնվում են ուրիշներին քարոզելու և դարձի բերելու խնդրով և շատ քիչ, կամ ընդհանրապես ոչ մի օգուտ չեն բերում ոչ իրենց հոգուն, ոչ էլ նրանց, ում քարոզում են: Սբ. Իսահակ Ասորին ասում էր իր ժամանակների համար, որ վանքերում կան բազում այնպիսի ճգնավորներ, որոնք ամիսներով և նույնիսկ տարիներով դուրս չէին գալիս իրենց խցից և միայն զբաղվում էին իրենց հոգու փրկության գործով: Բայց երբ նրանց մոտ մեծ քանակությամբ ժողովուրդ էր հայտնվում, նրանք այդ երկարաժամկետ առանձնությունից դուրս էին գալիս այս մարդկանց հոգևոր կարիքներին բավարարվածություն տալու համար: Սակայն նրանք, ըստ սբ. հոր, համարյա թե ոչինչ չէին խոսում, քանի որ նրանց միայն ներկայությունը և իրենց հոգուց և դեմքից բխող ջերմությունը օրհնության պատճառ էր այդ բազում ուխտավորների համար, որոնք մեծ խնդությամբ, օրհնությամբ և բավարարվածությամբ էին հեռանում այդ ճգնավորների մոտից: Ուրեմն, սեփական փրկության հարցերը լուծած համարելը և միայն ուրիշներին քարոզելը նույնպես կեղծ թիրախի վրա ջանք թափել է նշանակում: «Հարանց վարքուն» մի պատմություն կա, որը շատ լավ բնորոշում է այս խաբեությունները: «Մի մարդ՝ ապրելով աշխարհում, աչքի էր ընկնում իր աստվածապաշտությամբ՝ երկարատև աղոթքներով, ծոմապահությամբ, ողորմությամբ, և այլ բարի վկայություններով: Սա մի օր մտածեց, որ եթե այսքան առաջադիմություն ունի հոգևոր կյանքի մեջ, էլ ինչ է անում աշխարհում: Լավ է զնալ վանք և էլ ավելի առաջանալ այս ճգնությունների մեջ: Գալով վանք միառժամանակ հետո մեծ վիատությամբ և տրտմությամբ գալիս է վանահոր մոտ և խռովված ասում. «Հայր, ես աշխարհում մեծ առաջադիմություն ունեի, իսկ այստեղ՝ վանքում, իմ մոտ ամեն բան վերացավ, ոչ կարգին աղոթք եմ կարողանում անել, ոչ կարդալ, և ընդհանրապես, ոչ մի լավ բան»: Իսկ վանահայրը պատասխանում է՝ ասելով. «Ձավակս, աշխարհում կատարած քո բոլոր այդ գործերը արժեք չունեին, քանզի դրանք արվում էին մարդահաճության և փառամոլության ծածուկ մղումներով: Դրա համար էլ չարը չէր դիմակայում քո հոգևոր ջանքերին, իսկ այստեղ դու արդեն սկսում ես ճշմարտության մեջ հաստատվել, դրա համար էլ քո դեմ մեծ ընդդիմություն է ելել»: Վանականը զարմացած ասում է. «Բայց ես հիմա այս վիճակով ինձ կատարյալ ոչնչու-



թյուն եմ զգում», իսկ վանահայրը պատասխանում է. «Լավ է, զավակս, միշտ քեզ այդպես ոչնչություն համարիր ու կփրկվես»:

Չգարմանանք այս բանի վրա, քանզի մեծ վանական և ճգնավոր Գրիգոր Նարեկացին իր բոլոր ճգնություններն ուղղում էր՝ հասնելու ճշմարտապես իրեն ոչնչություն համարելու հետինը բոլոր արարածներից: Եվ ոչ միայն նա, այլև բոլոր սբ. հայրերը, քանզի գիտեին, ինչքանով որ կարողանային խոնարհեցնել իրենց հանուն Աստծո, այնքան Աստված իրենց վեր կբարձրացնի: Նրանց սուրբ աղոթքներով թող Աստված մեզ էլ նման իմաստություն պարզևի, որպեսզի թշնամու կողմից դրված կեղծ թիրախների դեմ պատերազմելով, ունայնությամբ չանցկացնենք մեր կյանքը և ձեռնունայն կանգնենք Տիրոջ առջև. «Զգույշ եղեք ինքներդ ձեր հանդեպ, որպեսզի չկորցնեք, ինչ որ վաստակեցիք, այլս ստանաք բովանդակ վարձք» (Բ Հովհ. 8):

Բազում են այդ կեղծ թիրախները, և եթե ջանանք նրանց ի հայտ բերել, Աստծո ողորմությամբ կհաջողենք և կխուսափենք դատարկ ջանքերից:

Նույնիսկ, եթե մեզ միտք է գալիս, թե այս կամ այն մարդը քո ետևից ծիծաղեց, կամ բամբասեց և այլն, մեղսուտենք, արդեն կեղծ թիրախ է, որովհետև այդ բանն իրականում կարող է եղած չլինել, այլ կարող է միայն չարի ներգործության արդյունք լինել: Բայց եթե իրականում անգամ ծաղրեն կամ վատաբանեն, վիրավորեն, ու այդ բոլորին մենք տեղիք տանք, ապա կընկնենք հիշաչարության մեղքի մեջ և մշտապես կսկսենք մտածել այդ վիրավորողի մասին: Այսինքն, մեր պատերազմը, որ մղում ենք սատանայի դեմ, շուռ կգա կեղծ թիրախի, այսինքն՝ մարդու դեմ: Իսկ ինչպե՞ս կարելի է խուսափել այդ խաբեություններից: Չէ՞ որ մարդու սիրտը տկար է և խկույն վշտանում է նման բաներից, շուտ վիրավորվում, և շատ դժվար է նրա դեմն առնել: Սակայն դրա դիմաց, ըստ հայրերի, շատ լավ պաշտպանական միջոց կա: Այսպիսի մի ասացվածք կա. «Սեպը սեպով են հանում», այսինքն՝ ցավը ցավեցնելով են բժշկում, ինչպես հիմնականում անում են բժիշկները:

Երբ մեկի կողմից վիրավորանք ես ստանում, ջանա լռել: Սիրտդ կստիպի, որ նույն ձևով պատասխանես վիրավորողին: Ջանա այդ ցավը ցավով բժշկել, այսինքն՝ լռիր և ինքդ քո մեջ ասա. «Գոհանում եմ քեզից, Տեր, որ այս հոգատար եղբոր կամ քրոջ միջոցով խրատում ես անարժանիս, քանզի ես էլ ավելի վիրավորանքների էի արժանի իմ բազում մեղքերի պատճառով: Սակայն Դու այս փոքր վշտով միայն ինձ հանդիմանեցիր, որով և ցույց տվեցիր Քո սերն իմ հանդեպ ըստ Քո խոսքի. «Ում որ սիրում եմ, նրան էլ հանդիմանում և խրատում եմ: Եթե խրատի համբերող եք, ուրեմն, հարազատ որդիների պես եք»: Շնորհիք ինձ՝ զոհությամբ և համբերությամբ Քո օրհնյալ ձեռքից ընդունեմ այս վիրավորանքը, քանզի

գրված է. «Ամեն բան գոհությամբ Տիրոջ ձեռքից ընդունեք»: Որպեսզի ես էլ արժանանամ այստեղ անորտունջ Քո տառապանքների մասնակից լինել, որպեսզի երկնքում էլ արժանանամ Քո փառքին: Այս եղբորն էլ օրհնես այս բարի գործի համար, որ արեց իմ հանդեպ, և իր սուրբ աղոթքներով էլ ինձ ողորմի»:

Սա, իհարկե, նմանօրինակ վիճակից ելնելու աղոթքի մի ոճ է: Վարժեցնելով սրան մեր անձը, նմանօրինակ ամեն մի իրավիճակում էլ կարելի է ձևակերպել նման մի աղոթք: Համոզված եղեք, որ սա մեծ հարված կլինի ոչ թե կեղծ թիրախին, այլ բուն թշնամուն՝ սատանային և նրա դաշնակից մեր հին մարդուն, որն ամեն կերպ արգելք կհանդիսանա նման աղոթքին և կստիպի անպայման պատասխանել, կամ գոնե մտքի մեջ հայիոյել վիրավորողին: Սակայն եթե վարժվենք այս բանում Տիրոջ ողորմությամբ առաջընթաց կարող ենք ունենալ և նմանօրինակ հաջող աղոթքից հետո մեր հոգիներում ջերմություն և խնդություն կզգանք, որը և ապացուցում է. հաղթանակը ոչ թե կեղծ, այլ իրական թիրախի, այսինքն՝ սատանայի դեմ է:

Երբեմն էլ մարդիկ սատանայի դեմ իրենց թշնամությունն արտահայտում են՝ նրան հայիոյելով, նզովելով և բարկանալով, բայց դրանք նույնպես չարի կողմից դրված կեղծ թիրախների վրա կրակել է նշանակում:

Եվ այսպես, մենք էլ ընթերցելով Աթանաս Մեծի ուղերձը, աշխատենք չտրվել թշնամական խաբեություններից, և մեր ժամանակը և ջանքերը ընդունայն չծախսենք՝ կռվելով բազում կեղծ թիրախների դեմ, այլ աշխատենք քայլել արքայական պողոտայով ու չչեղվել նրանից: Ավելի հաստատվենք նրանում՝ սուրբ հայրերի խրատներով և բարեխոսական աղոթքներով, որպեսզի այդ ճշմարիտ ընթացքով արժանանանք փառավորել Ամենասուրբ Երրորդությանը, Հոգով և ճշմարտությամբ, հավիտյանս.

**ՍՈՒՐԲ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԿԻՐ ՀԱՅՐ ԱԹԱՆԱՍ
ՄԵԾԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԱՆԱԿԱՆ ԱՄՈՆԻՆ**

Աստծո բոլոր արարածները բարի են և մաքուր, դրա համար էլ Աստծո Խոսքը չի ստեղծել ոչ մի անմաքուր և անպիտան բան: Քանի որ մենք ըստ առաքյալի. «Քրիստոսի բուրմունքն ենք Աստծո առաջ՝ և փրկվածների մեջ» (Բ Կորնթ. 2:15): Բայց սատանայի նետերը տարբեր են և տարատեսակ սրանք պարզամիտ մարդկանց մեջ շփոթմունք և խռովք են առաջացնում, արգելք են հանդիսանում եղբայրներին՝ սովորական հոգևոր վարժանքի մեջ, նրանց ներշնչելով անմաքուր և պիղծ մտածումներ: Բայց մեր Փրկչի շնորհով ետ մղենք չարի խաբկանքները, ամրացնենք պարզամիտ մարդկանց մտքերը: «Ամեն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար» (Տիտոս 1:15), իսկ անմաքուրների թե՛ խիղճը, և թե՛ ամեն ինչ պղծված է: Բայց զարմանում եմ սատանայի խորամանկության վրա, քանզի ինքը հանդիսանում է պիտեղություն և կորուստ, բայց կարծես թե մաքրության մղող մտածումներ է հարուցում: Սակայն նրա գործած այս հնարքները իրականում միայն խարդավանքներ են և որոգայթ: Որպեսզի շեղի աստվածապաշտներին, ինչպես որ ես արդեն ասացի, սովորական դարձած փրկարար զբաղմունքից, նման ձևով տիրելու նրանց վրա: Հենց սրա համար էլ նա սկսում է նրանց ականջներին բզբզալ այնպիսի բաների մասին, որ ոչ մի օգտակարություն չի բերում կյանքի համար, այլ առաջացնում է միայն դատարկ հարցեր և ունայնաբանություն,

որից և պետք է խուսափել: Օրինակ, ասա ինձ սիրելի և երկյուղած մարդ, ի՞նչ մեղք կամ անմաքրություն կամ մարդու բնական պահանջները կատարելու մեջ: Կցանկանա՞, արդյոք, մեկնումները հանցանքների շարքում մտցնել քթանցքներից ելնող խոնավությունը կամ բերանից դուրս եկող թուրք: Իսկ կարո՞ղ ես նաև սրանցից ավելի կարևորը մատնանշել՝ որովայնի դատարկումը, որ կենդանի արարածի համար անհրաժեշտ է կյանքի պահպանման համար: Եվ եթե հավատում եք, որ մարդը Սուրբ Գրքի համեմատ Աստծո ձեռքի գործն է, ապա մի՞թե հնարավոր է այդ Սուրբ Զորության կողմից առաջանա ինչ-որ պիղծ բան: Եվ եթե աստվածային առաքյալների Գործքում ասվածի պես է, թե. «Աստծո զարմ ենք» (Գործք 17:21), ուրեմն, ոչ մի անմաքուր բան չունենք մեր մեջ, և պղծվում ենք միայն այն ժամանակ, երբ գործում ենք չարաղետ մեղքեր: Իսկ այն արտաթորանքները, որոնք լինում են բնականաբար, ըստ բնական պահանջի, ինչպես ասացիք, սրանք մենք համբերությամբ կրում ենք մյուս կարիքների հետ միասին: Բայց նրանք, ովքեր ցանկանում են միայն հակաճառել, այն, ինչի մասին խոսվեց արդարությամբ, և նույնիսկ այն բանի, ինչ-որ ստեղծվել է Աստծո կողմից, օրինակ են բերում Ավետարանի այս ասույթը, թե. «Մարդուն պղծում է ոչ թե մտնողը, այլ դուրս ելնողը»: Սակայն պետք է դատապարտության մատնել սրանց անմտությունը, և չեն ասի, թե դա իրենց գործն է: Ինչպես կուզեն, թող վարվեն: Նախևառաջ, դեռ հաստատված չլինելով հավատի մեջ, իրենց սեփական տգիտության համեմատ, սրանք մեկնում են Սուրբ Գիրքը: Աստվածային խոսքերի իմաստն այսպիսին է. նախ ասենք, որ ոմանք այս սուտ մեկնիչների մամն, կասկած ունեն նաև կերակուրի հանդեպ: Սակայն Ինքը՝ Տերը, ցրեց նրանց անգիտությունը, և ի հայտ հանելով սրանց մոլորվածությունը, ասաց. «Ներս մտնողը չի, որ պղծում է մարդուն, այլ դուրս ելնողը», և որտեղի՞ց դուրս ելնողը՝ «Արտից» (Մատթ. 15:15), ասում է վերը նշվածին ավելացնելով: Քանզի գիտի, որ այնտեղ է չար գանձարանը պիղծ խորհուրդների և այլ մեղքերի: Իսկ առաքյալն այս բանի մասին ասում է ավելի համառոտ. «Ուտելիքը չէ, որ մեզ Աստծու առջև է կանգնեցնում» (Ա Կորնթ. 8:8): Եվ հիմա մեկը կարող է արդարացիորեն ասել. «Այն, ինչ բնական արտաթորանք է, մեզ դատապարտության չի մատնի»: Բժիշկները նույնպես կասեն՝ ի պաշտպանություն այս բանի, որ կենդանի մարմնին տրված է որոշ անհրաժեշտ արտաթորումներ, որով և մեր ամեն մի սնուցվող անդամ հեռացնում է իրենից ավելորդը: Այսպիսին է, օրինակ, գլխի ավելորդությունները մազերը և գլխից ելնող խոնավությունը, նաև որովայնի դատարկումը և սերմային հյուսվածքների ավելորդությունները: Սրա համար էլ, ով աստվածասեր ծեր, ի՞նչ մեղք կա Աստծո առջև այս բաներում, երբ ինքը՝ անենակալ Տերը, ստեղծել է կենդանի արարածներին: Այսպես ցանկացավ և ստեղծեց այս անդամները, որպեսզի սրանք ունենան նման ավելորդություններից հեռացումներ: Բայց հարկ է զգուշացնել նենգավոր մարդկանց, որոնք կարող են ասել. «Ուրեմն, կարելի է այսպես հասկանալ, որ ճշմարիտ օգտագործումը մեղք

չէ, քանի որ մարմնավոր անդամները ստեղծված են Արարչի կողմից»: Բայց ստիպենք սրանց լռել՝ առաջարկելով նրանց այսպիսի մի հարց. «Ինչպիսի՞ օգտագործումն է պետք հասկանալ այն, ինչ օրինական է, որ թույլատրել է Աստված ասելով. «Աճեցեք և բազմացեք և լցրեք երկիրը» (Ծննդ. 1:28), որի մասին ասում է նաև առաքյալն այսպես. «Ամուսնությունն, ըստ ամենայնի, հարգելի է, և ամուսնական անկողինը՝ սուրբ» (Եբր. 13:4), թե օգտագործումը, չնայած բնական, սակայն գաղտնի գործվողը՝ այսինքն շնությունն»: Քանզի այն, ինչ վերաբերվում է նմանօրինակ բոլոր բաներին, որոնք կատարվում են կյանքում, կարող ենք սրանց տարբերությունը գտնել հետևյալ բացատրություններում: Սպանելն արգելված է, բայց ոչնչացնել թշնամուն պատերազմի դաշտում, օրինական է և արժան գովասանքի: Պատերազմում աչքի ընկածները արժանանում են մեծ փառքի, նրանց համար կանգնեցնում են արձաններ, որոնք պատմում են այն սխրանքների մասին, որ գործել են սրանք: Այսպես, նույն բանը, որ կատարվում է, մի դեպքում կախված մի իրավիճակից, անթույլատրելի է, իսկ մի այլ դեպքում՝ կախված այլ իրավիճակից, արգելված չէ, այլ թույլատրելի: Այս նույն օրենքը գործում է նաև մարմնավոր միացության մասին խորհելիս:

Երանելի է նա, ով երիտասարդության ժամանակ մտնում է ազատ և թույլատրելի միության մեջ և իր բնական ուժերը ներդնում որդեծնության համար: Իսկ եթե անում է այդ վավաշտությունից, այնժամ պոռնիկների և շնացողների պատժին է արժանանալու, ըստ Առաքյալի գրվածքի (Ա Կորնթ. 6:9-10): Քանզի այստեղ այս իրավիճակում կյանքի երկու ուղի կա, առաջին՝ չափավոր և կենցաղային, նկատի ունեն ամուսնությունը, մյուսում՝ իրեշտակային և դժվարացանելի, այսինքն՝ կուսակրոնությունը: Եթե մեկն ընտրում է աշխարհային ուղին, այսինքն՝ ամուսնությունը, չնայած այն բանին, որ նա դրա համար չի արժանանա նախատիքի, սակայն չի արժանանա նաև բազում շնորհների: Այլ միայն այն չափով, որքանով որ ինքը կարող է պտուղ բերել այդ վիճակում, այսինքն՝ «Երեսուն» (Մատթ. 13:23): Իսկ ով սիրի մաքուր, նեղ և անձուկ ճանապարհը, չնայած առաջինի համեմատ սա խիստ է և դժվար, սակայն սրանով գնացողը ձեռք է բերում սքանչելի շնորհներ, որովհետև կունենա կատարյալ պտղաբերություն, այսինքն՝ «Յարյուր»: Այսպիսով, սրանց անմաքուր և նենգ հարցերին կան լուծումներ, որոնք վաղուց արդեն տվել է Սուրբ Գիրքը: Սրանից ելնելով, ով Յայր, հաստատիր Քո խնամքին տրված հոտը, մխթարելով առաքելական գրվածքներով, ոգևորելով Ավետարանական խոսքերով, առաջարկելով խորհուրդներ սաղմոսներից և ասելով. «Ապրեցրու ինձ Քո խոսքի համեմատ» (Մաղմ. 118:107): Իսկ խոսքը հանձնարարում է ծառայել Իրեն մաքուր սրտով: Սա գիտեր նաև մարգարեն, և կարծես թե բացատրելով, ինքն իրեն ասում է. «Սուրբ սիրտ հաստատիր Իմ մեջ, Աստված» (Մաղմ. 50:12), որպեսզի չխռովեցնեն ինձ պիղծ խորհուրդները»: Եվ էլի ասում է Դավիթը. «Եվ Քո տիրական Յոգով հաս-

տատիր ինձ» (Սաղմ. 50:14), որպեսզի եթե ինձ խռովեցնեն խորհուրդները, ամուր պահիր ինձ կարծր վեմի նման Քո ամենակարող զորությունը»: Այսպիսով և դու, տալով այս և նման խորհուրդներ, ասա դանդաղորեն ճշմարտության առջև խոնարհվողներին. «Կտոլորեցնեն անօրեններին Քո ճանապարհը» (Սաղմ. 50:15): Եվ ամուր վստահելով Տիրոջը, կհամոզես նրանց, որպեսզի հեռու մնան նման չարիքներից: Եվ երգիր այսպես. «Եվ ամբարիշտները դարձի կզան դեպի քեզ» (Սաղմ. 50:15): Ախ, եթե չարա-մտությամբ հարցեր տվողները, թողնեին այդ ունայն ճանապարհը, և իրենց պարզության պատճառով, կասկածանքների մեջ ընկնողներն ամրանային ամենակալ Հոգով: Իսկ դուք, անկասկած ճշմարտություն իմացողները, պահեք այն անխախտ և անտատանելի, մեր Տեր Հիսուս Քրիստոսով: Նրա հետ փառք և իշխանություն, Հորը և Սուրբ Հոգուն հավիտյանս. Ամեն:



**ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ
ՏԱՐԲԵՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ԾԱՂԿԱՔԱՂՆԵՐ ԱՂՈԹՔԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Այն մասին, որ աղոթքի համար տեղը արգելք չպիտի հանդիսանա

Մշտապես ջանանք մերձենալ Աստծուն և ամեն ինչ խնդրենք նրանից: Ոչ մի բան չկա հավասար աղոթքին, նա անհնարին էլ դարձնում է հնարավոր, դժվարինը՝ հեշտ, անհարմարը՝ հարմար: Այն կատարել է և երանելի Դավիթը, որի համար և ասաց. «Օրվա մեջ յոթ անգամ Քեզ պիտի օրհնեմ Քո արդար դատաստանների համար» (Սաղմ. 118:164): Եվ եթե թագավորը ծանրաբեռնված անհա-մար հոգսերով և ամեն կողմից զբաղվածությամբ այդքան անգամ օրվա մեջ աղոթում է Աստծուն, ուրեմն, ի՞նչ արդարացում կան ներում կարող ենք ստանալ մենք, որ ունենք այսքան պարապ ժամանակ և չենք աղոթում Նրան անդադար և այն էլ այնժամ, երբ կարող ենք ստանալ դրանից մեծագույն օգուտ: Քանզի

անհնարին է, որ մարդն աղոթի ըստ պատշաճ ջանասիրությամբ՝ կանչելով Աստծուն անդադար, և երբևէ կընկնի մեղքի մեջ: Իսկ ինչո՞ւ է այդպես, ես հիմա կասեմ: Ով բոցավառում է իր միտքը, բորբոքում հոգին, տեղափոխվում երկինք և նման ձևով Տիրոջն անվանում է իրեն որպես Տեր, նա հիշելով իր մեղքերի մասին, զրուցում է Նրա հետ իր ներման համար և խնդրում լինել ողորմած և հեզ: Այդպիսինը նման զրույցի վարժության ժամանակ հետաձգում է ամեն մի կենցաղային հոգս և թևավորվում ու վեր է ելնում մարդկային ամեն մի կրքից: Եթե աղոթքից հետո աղոթողը տեսնում է թշնամի մեկին, այլևս որպես թշնամու չի, որ տեսնում է: Եթե տեսնում է գեղեցիկ կնոջ, էլ չի գայթակղվում, որովհետև բոցը, որ բռնկվել է աղոթքից, դեռ մնում է նրա մեջ, և քշում դուրս է հանում նրանից ամեն մի ապակամյալ միտք: Բայց քանի որ, որպես մարդ մեզ բնորոշ է ընկնել անհոգության մեջ. և երբ անցնում է մի քանի ժամ աղոթքից հետո, և դու նկատում ես, որ աղոթքի միջոցով քո մեջ առաջացած ջերմություն սկսում է սառչել, իսկույն ևեթ նորից դիմիր աղոթքին և ջերմացրու քո սառչող հոգին: Եվ եթե դա անես ամբողջ օրվա ընթացքում, հաճախակի աղոթքներով ջերմացնելով նրանց, միջև իսկ եղած ժամանակահատվածները, այդ դեպքում սատանային թույլ չես տա մտտենալու քո մտքերին: Ինչպես որ ճաշելու ժամանակ երբ տեսնում ենք, որ պատրաստված կերակուրը և կամ հեղուկը սառչում է մենք այն նորից դնում ենք կրակին, որպեսզի նորից տաքանա: Այդպես և վարվենք այս դեպքում, աղոթքի վրա, ինչպես վառվող ածուխի, դնենք մեր շուրթերը, որպեսզի նման ձևով բոցավառվի մեր հոգին երկյուղածության մեջ: Սակայն հարց կառաջանա, թե ինչպես աշխարհիկ մարդուն, որ ծանրաբեռնված է կենցաղային գործերով, հնարավոր է աղոթել՝ օրը երեք ժամ և գնալ եկեղեցի: Հնարավոր է, և բավական հեշտությամբ: Եթե հնարավոր չէ գնալ եկեղեցի, սակայն հնարավոր է դատարան կանչվածի համար աղոթել՝ կանգնելով դատարանի մոտ, որովհետև սրա համար այնքան խոսք չի, որ հարկավոր է, որքան միտք: Ոչ այնքան ձեքերի պարզելը, այլ անձի տրամադրվածությունը, ոչ այնքան մարմնի աղոթական դիրքը, որքան հոգու կեցվածքը: Անցան էլ՝ Սամուելի մայրը, լսվեց ոչ այն բանի համար, որ բարձրածայն և ուժգնորեն աղոթեց, այլ այն բանի համար, որ ամբողջ ներքնապես աղաղակում էր իր սրտում: «Նրա ձայնը չէր լսվում», -ասում է Սուրբ Գիրքը (Ա թագ. 1:13), սակայն Աստված լսեց նրան: Այս բանը հաճախ անում էին և շատ ուրիշները: Երբ պետք դատարանի ներսում աղաղակում և սպառնում է, սրանք կանգնած դռան առաջ խաչակնքելով իրենց, մտովի և կարճ աղոթք անելով, մտնում են դատարան և փոխում են դատավորին՝ սարձնելով նրան և դարձնելով հեզ: Եվ ո՞չ ժամանակը, ո՞չ տեղը, ո՞չ լռությունը նրանց համար արգելքներ չեղան նման աղոթքների կատարման համար: Այսպես արա և դու, դառնապես հոգոց հանիր, հիշիր քո մեղքերի մասին, նայիր դեպի երկինք և ասա մտովի. «Ողորմիր ինձ, Աստված»: Ահա սրանով և ա-վարտվեց քո աղոթքը: Ով որ ասաց

«Ողորմիր», նա խոստովանություն գործեց և գիտակցեց իր մեղքերը, որովհետև ցանկանում է ողորմություն, որը հատուկ է մեղավորներին: Ով ասաց՝ «ողորմիր ինձ», նա ստացավ մեղքերի թողություն: Ով թողություն է ստանում, նա պատժից զերծ է մնում: Ով ասաց՝ «ողորմիր ինձ», նա ստացավ երկնքի արքայությունը: Քանի որ ում Աստված ողորմում է, նրան ոչ միայն ազատում է պատժից, այլև արժանացնում է գալիք երանությունների: Ուրեմն, չասենք մեզ՝ արդարացնելու համար, թե աղոթքի տունը հեռու է: Հոգու շնորհը մեզ արդեն դարձրել է Աստծո տաճարներ, և եթե միայն մենք արթուն ենք, այնժամ կարող ենք մշտապես և շատ հեշտությամբ աղոթել: Մեր աստվածաշտությունը այնպիսին չէ՝ ինչպես որ էր նախկին հրեաներին: Քանզի նրանք ունեին շատ զգայական բաներ, և պահանջվում էր բազում ծեսեր: Այնտեղ աղոթողը պարտավոր էր մտնել տաճար և գնել տատրակ, իր հետ պետք է բերեր փայտ և կրակ, վերցնելով նաև դանակ, պետք է կանգներ զոհասեղանի առջև և կատարեր բազում այլ որոշված կարգեր: Իսկ այժմ կարիք չկա ոչ մի այդպիսի բանի, այլ որտեղ էլ որ դու լինես քեզ հետ է զոհասեղանը, դանակը և զոհը, որովհետև դու ինքդ հանդիսանում ես որպես զոհ մատուցողը և թե զոհասեղանն ու զոհը: Որտեղ էլ որ դու լինես, ամենուր էլ կարելի է զոհասեղան դնել: Միայն ցույց տուր առույգ կամք, և տեղանքը քեզ համար արգելք չի հանդիսանա և ոչ էլ կխանգարի ժամանակը: Եթե դու նույնիսկ ծնկի չես գալիս, չես ծեծում կուրծքդ և չես պարզում ձեռքերդ դեպի երկինք, այլ միայն ցուցաբերում ես ջերմեռանդ հոգի, այդժամ ամեն բան արած կլինես աղոթքի համար: Այս ասում են ձեզ, որպեսզի համոզեն, որ հաճախակի գաք եկեղեցի, և տանն էլ աղոթեք՝ լռության մեջ ծնրադրելով և ձեռքերը վեր բարձրացնելով: Եթե ինչ-որ մի ժամանակ կզտնվեք ինչ-որ մի տեղ, բազմաթիվ այլ մարդկանց շրջապատում, այնժամ էլ մի թողեք աղոթքը, այլ այն ձևով, ինչպես որ ես ասացի աղոթեք, կանչելով Աստծուն և իմացեք, որ նման աղոթքից մեծ օգուտ կստանաք: Եթե մենք այսպես տրամադրենք մեզ, այնժամ թե՛ այս կյանքը կանցկացնենք հանդարտությամբ, և թե կստանանք երկնքի Արքայությունը:

(Ամենայի մասին զրույցից)

Այն մասին, որ Աստծուց պետք է խնդրել հոգևոր բարիքներ

Գոհանանք Աստծուց, սիրելիներ, զգայական բարիքների համար, բայց առավել ևս, հոգևորի համար: Այս ուզում է և Նա: Տալով զգայականը, դրա հետ միասին, ներքաշում է հոգևորի մեջ նրանց, ովքեր անուր կերպով կապվել են աշխարհի հետ: Սակայն եթե նրանք ստանալով այս զգայական բարիքները, դրա վրա էլ կանգ են առնում, այդժամ տրվում են

դատապարտության և պատժվում: Եվ չի լինի այս բանը մեզ հետ, հավատացնում են ձեզ, եթե հոգևոր բարիքները լինեն մեր մտահոգության առարկան: Ինչո՞ւ, որովհետև, երբ կան հոգևոր բարիքներ, ոչ մի վնաս չենք կրի մարմնավորի պակասությունից: Իսկ եթե հոգևորը չունենանք, ի՞նչ հույս կմնա մեզ և կամ ի՞նչ մխիթարություն: Դրա համար էլ այս բանի համար պետք է մշտապես աղոթել Աստծուն և այն խնդրել: Այս հոգևորի մասին աղոթել սովորեցնում է մեզ նաև Քրիստոսն: Եվ երբ մենք ուսումնասիրում ենք այս աղոթքը, տեսնում ենք, որ ոչ թե մարմնավոր, այլ միայն հոգևոր բաներ է պարունակում այն: Եվ նույնիսկ այն մի փոքր զգայականը, որ խնդրում ենք այդ աղոթքի ժամանակ, խնդրելու ձևից այն էլ է հոգևոր դառնում: Եվ միայն ուսուցանում է չուզել, չխնդրել ավելին համապատասխան հացից առավել, որովհետև նման ձևով խնդրելը հոգևոր մտածողության նշան է: Հիմա տես, թե ինչ է այդ խնդրվածքից առաջ. «Սուրբ թող լինի Քո անունը, Քո թագավորությունը թող գա, թող Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» (Մատթ. 6:9-10): Եվ այս բոլորից հետո նոր ասաց զգայականի մասին: Սակայն նույն պահին խուսափեց զգայականից՝ անցնելով հոգևորին, ասելով. «Թող մեզ մեր պարտքերը, ինչպես որ մենք թողնում ենք մեր պարտապաններին»: Եվ չխնդրեց ոչ պաշտոնի, ոչ հարստության, փառքի, ոչ էլ իշխանության, այլ միայն հոգու օգուտի համար: Ոչ մի երկրային բան, այլ միայն երկնային: Եվ այսպես, եթե մեզ պատվիրված է ժուժկալել կենցաղային և ներկա ժամանակում եղող այլ բաներից, ի՞նչ խղճուկ և դժբախտ կլինենք մենք, եթե սկսենք Աստծուց խնդրել այն, ինչ Նա մեզ պատվիրել է մերժել: Իսկապես, նման բաները աղոթքի ժամանակ միայն դատարկաբանություններ են: Սրա համար էլ մենք աղոթում ենք և չենք գտնում հաջողություն: Իսկ ինչպե՞ս են հարստանում չար մարդիկ: Ինչպե՞ս են հարստանում խարդախները, հանցագործները, կողոպտիչները և ազահները: Աստված չի, որ տալիս է այդ նրանց: Իսկ ինչպե՞ս է Աստված այդ թույլ տալիս: Այնպես, ինչպես թույլ տվեց հարուստին՝ պահելով նրան մեծ պատժի համար: Ահա լսիր, թե ինչ ասաց նրան (Աբրահամը). «Որոյակ, հիշի՛ր, դու քո բարիքները ստացար այնտեղ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարիքները: Հիմա այստեղ սա մխիթարվում է, իսկ դու այդտեղ տանջվում ես» (Ղուկաս 16:25): Եվ այսպես, որպեսզի մենք էլ, որ ունայնությունով և անմտության մեջ անցկացնում ենք մեր կյանքը, ճոխություններին ավելացնելով մեղք, մեղքի վրա չլսենք այդ խոսքերը, ջանանք ձեռք բերել ճշմարիտ հարստություն և կատարյալ ողջախոհություն: Եվ այս միջոցով կարժանանանք խոստացված բարիքներին:

(Հովհաննու ավետարանի մասին 43-րդ զրույցից)

Այն մասին, որ սրտի խորքից հղած աղոթքը մեծ ուժ ունի

Հարկ է աղոթել ոչ միայն բերանով, ոչ միայն լեզվով, քանզի խոսքերը հեղվում են նաև այն ժամանակ, երբ մտքերը թափառում են, այլ պետք է աղոթել սրտի խորքից, մեծ ջանասիրությամբ և նախանձախնդրությամբ, հոգու հիմնաքարերից: Այսպիսին է սգավորների հոգիները: Նրանք ամբողջովին ցնցվում են, բուն սրտի մեջ կենտրոնանում և դիմում Աստծուն՝ մեծ զղջումով: Դրա համար էլ լսելի են լինում: Այսպիսի աղոթքները մեծ ուժ ունեն: Սրանք ցրվածության չեն ենթարկվում և չեն տարուբերվում, եթե նույնիսկ սատանան հարձակվում է մեծ ուժգնությամբ: Ինչպես ամուր ծառը, որն ունի խոր արմատներ, որոնցով և ամուր բռնվում է ընդերքից, դիմակայում է քամու ամեն ուժգնության, իսկ այն ծառը, որ մակերեսի վրա է ամրացված, օրորվում է քամու մի փոքր շարժումից, դուրս քաշվում արմատներով, և ընկնում գետնին: Եիշտ այդպես էլ այն աղոթքները, որոնք դուրս են գալիս հոգու խորքից և ունեն խորունկ արմատներ ամուր են մնում և տկարանալով այս ու այն կողմ չեն շարժվում, եթե նույնիսկ մոտենում են նրանց անհամար մտքեր և դևերի բազում զնդեր: Իսկ աղոթքը, որ դուրս է ելնում բերանից և լեզվից, սակայն դուրս չի գալիս հոգու խորքից, չի հասնի Աստծուն՝ աղոթողի անհոգության պատճառով, որովհետև փոքրիկ թխկոցն իսկ խռովքի է մատնում նրան և ամեն մի աղմուկ շեղում է աղոթքից: Նրա բերանը ծայն է հանում, սակայն սիրտը դատարկ է, և միտքը՝ անգործ: Այդպես չեն աղոթում սրբերը, այլ այնպիսի նախանձախնդրությամբ, որ խոնարհվում էր նրանց ամբողջ մարմինը: Երանելի եղիան, պատրաստվելով աղոթել, առաջին հերթին փնտրում էր առանձնություն, հետո գլուխը խոնարհեցնելով ծնկների մեջ բոցավառում իրեն մեծ ջերմով և նոր միայն այդ կերպով կատարում էր իր աղոթքը: Եթե ուզում ես տեսնել կանգնած աղոթողի, նորից նայիր նրան, երբ նա դիմում էր երկինք և աղոթում այնպիսի լարվածությամբ, որ երկնքից կրակ իջեցրեց: Նմանապես և ցանկացավ կենդանացնել այրի կնոջ որդուն, ամբողջովին տարածվեց նրա վրա և կատարեց այդ հարությունն առանց ցրվածության և ոչ մեր պես հորանջելով, այլ բոցավառվեց նախանձախնդիր աղոթքով: Սակայն ինչո՞ւ համար խոսել եղիայի և մյուս սրբերի մասին: Ես շատ հաճախ տեսել եմ կանանց, որոնք ամուսինների բացակայության կամ երեխաների հիվանդության ժամանակ այնպես էին աղոթում հոգու խորքից և հեղում արցունքների այնպիսի վտակներ, որ սրանց աղոթքները հասնում էին իրենց նպատակին: Եթե այսպիսի ջերմեռանդությամբ աղոթում է կինն իր երեխայի կամ ամուսնու բացակայության համար, մի՞թե կարող է ներում ստանալ այն մարդը, որ աղոթքներ է հղում մեռած հոգով: Սրա համար էլ մենք շատ հաճախ աղոթքից հեռանում ենք անպտուղ: Հիշիր, թե ինչպես էր աղոթում Աննան հոգու խորքերից, ինչպիսի արցունքներ էր հեղում և ինչպես էր

բոցավառվում աղոթքի միջոցով: Նման ձևով աղոթելիս, մինչև աղոթքի խնդրվածը ստանալը աղոթողը մեծ բարիք է ստանում հենց միայն աղոթքի բուն կատարումից: Սանձահարում է բոլոր կրքերը, խոնարհեցնում բարկությունը, քշում նախանձը, ճնշում տռփանքը, տկարացնում սերը կենցաղային իրերի նկատմամբ, տալով հոգուն մեծ հանդարտություն և բարձրանում երկինք: Հոգին ինքն իրենով նուրբ է և դյուրընկալ, սակայն երբ ջուրը սառում է և քարանում, այնպես էլ մեր հոգին մեղքի և անհոգության պատճառով կարծրանում է և դառնում քարեղեն: Դրա համար էլ մեզ պետք է մեծ ջերմություն, որպեսզի փափկեցնենք նման կարծրությունը: Սա առավելապես անում է աղոթքը: Ուրեմն, աղոթքի ժամին հոգ մի տար միայն խնդրվածի մասին, այլ ջանա, որ հենց այդ աղոթքի ժամանակ հոգիդ ավելի լավը դարձնես, քանզի դրա կարողությունն ունի աղոթքը: Նման ձևով աղոթողը բարձր է կանգնում ամեն մի կենցաղայինից, թևավորում է միտքը՝ դարձնելով այն թեթև և չի շեղում ոչ մի կրքով:

(129-րդ սաղմոսի մասին գրույցից)

Այն մասին, որ պետք է աղոթել Թշնամիների համար

Քրիստոս ցույց տվեց իր անսահման մարդասիրությունը, երբ իրեն խաչողների, անարգողների և ծաղրողների համար աղոթում էր ու ջանում փրկել նրանց. «Հայր, -ասում էր Նա, - ներիր նրանց, քանի որ չեն հասկանում, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34): Ինչ, ներե՞ց նրանց Աստված այդ մեղքը: Ներեց միայն նրանց, ովքեր ցանկացան ապաշխարել: Մենք էլ նմանվենք մեր Տիրոջը և աղոթենք մեր թշնամիների համար: Տեսնելով կատարվածի մեծությունը, օրինակ վերցնենք Տիրոջից: Նա խաչված էր, սակայն աղոթում էր խաչողների համար: Բայց ինչպե՞ս ես կարող եմ նմանվել Ամենակալին: Եթե ցանկանաս՝ կարող ես, եթե դա անհնարին լիներ, Նա չէր ասի. «Սովորեցեք ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. 11:29): Եթե մարդու համար անհնարին լիներ նմանվել Նրան, Պողոսը չէր ասի. «Ինձ նմանվեք, ինչպես որ ես՝ Քրիստոսին» (Ա Կորնթ. 11:1): Եթե դու չես ուզում նմանվել Ամենակալին, այնժամ աշխատիր նմանվել քեզ նման ծառային, այս ասում եմ Ստեփանոսի մասին, որն առաջինը բացեց նահատակության դռները, ահա նա նմանվեց Տիրոջը: Քանզի ինչպես որ Տերը գամված լինելով խաչին, աղոթում էր խաչողների համար, այնպես էլ այս ծառան, գտնվելով իրեն քարկոծողների մեջ, և իր վրա ընդունելով քարի ամպերը, ուշադրություն չդարձրեց իրեն պատճառած տառապանքներին, այլ ասաց. «Տեր, սա մեղք մի համարիր դրանց» (Գործք 7:60): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է Որդին գրուցում և ինչպես ծառան աղոթում: ...Ուզո՞ւմ ես քեզ ցույց տամ մի ուրիշ քեզ նման

ծառայի, առավել մեծ մեկին, որ նույնպես աղոթք էր հղում թշնամիների համար: Լսիր երանելի Պողոսին, որ ասում էր, թե որքան է նեղություն կրել. «Հրեաներից հինգ անգամ քառասունից մեկով պակաս ծեծ կերա, երեք անգամ ծաղկվեցի, մեկ անգամ քարկոծվեցի: Այլև վտանգներ ազգականներից, ...վտանգներ սուտ եղբայրներից» (Բ Կորնթ. 24:25): Թվարկելով այս վշտերը և խարդավանքները, որոնք կրում էր նրանցից, ամեն օր, ասում է. «Ես ինքս երդումով փափագում էի նզովվել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար, որ խրայելացիներ են» (Հռոմ. 9:3): Ուզո՞ւմ ես տեսնել նաև ուրիշներին, ոչ միայն նոր, այլև հին ուխտի շրջանում, որոնք էլ արեցին նույն բանը: Սա հատկապես զարմանալի է, քանի որ այնժամ չունենալով թշնամուն սիրելու պատվիրան, այլ ունենալով ուսմունք՝ աչքի փոխարեն՝ աչք և առամի փոխարեն՝ ատամ, այսինքն՝ հավասարապես վրեժխնդիր լինել, նրանք հասան առաքելական բարձունքների: Լսիր, թե ինչ է ասում Մովսեսը, որի վրա հաճախ քարեր էին նետում հրեաները. «Արդ, եթե ներելու ես իրենց մեղքերը, ներիր, իսկ եթե չես ներելու, ուրեմն, իմ անունն էլ ջնջիր քո մատյանից, որ գրել ես ինձ» (Ելից. 32:32): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես արդարներից ոչ մեկն իր անձի անվտանգությունը ավելի չէր գերադասում ուրիշների փրկությունից: ...Ես բերում եմ բազում օրինակներ, որպեսզի գոնե այս կերպով մենք շտկենք մեզ և դուրս վանենք մեր միջից այս ծանր հիվանդությունը, այսինքն՝ թշնամուն չար ցանկանալը: Լսիր երանելի Դավթին, ինչ էր ասում նա, երբ Աստված բարկացավ և ուղարկեց հրեշտակի՝ ժողովորդին պատժելու համար: Երբ նա տեսավ հրեշտակին, որն իր ձեռքին ուներ երկաթյա սուր և պատրաստվում էր հարվածի. «Ահավասիկ, ես եմ մեղավոր, ես՝ հովիվս եմ հանցավոր, այս ոչխարներն ի՞նչ են արել: Թող քո ձեռքը բարձրանա իմ ու իմ հոր տան վրա» (Բ Թագ. 24:17): Սամուել մարգարեն այնպես էր վիրավորվել, արհամարհվել և ստորացվել հրեաների կողմից, որ Աստված ցանկանալով նրան մխիթարել, ասաց նրան. «Նրանք ոչ թե քեզ անարգեցին, այլ չուզեցին, որ ես թագավորեմ իրենց վրա» (Ա Թագ. 8:7): Իսկ ի՞նչ արեց նա, որին հարգանքի չեն արժանացրել, այլ արհամարհել, ստորացրել և վիրավորել են: Լսիր, թե ինչ է ասում նա. «Քավ լիցի, որ ես մեղանչեմ Տիրոջ դեմ՝ հրաժարվելով ձեզ համար աղոթելուց» (Ա Թագ. 12:23): Նա մեղք էր համարում թշնամիների համար չաղոթելը: Թող իմ վրա այդպիսի մեղք չծանրաբեռնվի, որ ես չաղոթեմ ձեր համար: Տեսնո՞ւմ ես, թե ինչպես էին բարեպաշտներից ամեն մեկը ջանում նմանվել Տիրոջն այս բանում: Իսկ ինչպիսի՞ արդարություն պիտի գտնենք մենք, երբ բոլորը, թե՛ նոր և թե՛ հին ուխտի ժամանակվա ապրողները մղում են մեզ աղոթել թշնամիների համար, ուրեմն, մենք էլ ջանանք մեծ պատրաստակամությամբ կատարել այն: Եվ այսպես, հորդորում եմ ձեզ ամհոգ չլինել: Որքան շատ են օրինակները, այնքան մեծ կլինի պատիժը, եթե չնմանվենք նրանց: Ավելի կարևոր է աղոթել թշնամիների համար, քան բարեկամների: Լսիր Քրիստոսին, որ ասում է. «Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ են

սիրում, ձեր վարձն ի՞նչ է: Չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Եվ եթե միայն ձեր բարեկամներին ողջուն տաք, ի՞նչ ավելի բան եք անում, չէ՞ որ մաքսավորներն ու մեղավորները նույնն են անում» (Մատթ. 5:45): Եվ այսպես, եթե մենք աղոթում ենք բարեկամների համար, դեռ ավելին չենք, քան մաքսավորները: Իսկ եթե սիրենք և աղոթենք թշնամու համար, այնժամ կնմանվենք Աստծուն: Նմանվեցեք ձեր Հորը՝ ասում է Նա. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին և աղոթեցեք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է» (Մատթ. 5:45): Եվ այսպիսով, թե՛ Տիրոջ և թե՛ ծառաների մեջ մենք օրինակ ունենք, ուրեմն, նմանվե՛ք նրանց, ջանանք կատարել այս առաքիլությունը, որպեսզի մենք էլ արժանանանք ստանալու Երկնքի Արքայությունը:

(Խաչի և ավազակի մասին գրույցից)

Այն մասին, թե ինչպես պետք է աղոթել, որպեսզի լսելի լինենք Աստծուն

Մենք չգիտենք, թե որքան մեծ է աղոթքի օգտակարությունը, դրա համար էլ այն չենք անում ամբողջ ուշադրությամբ և ջանասիրությամբ և չենք վարժվում նրանով, Աստծո օրենքի համեմատ: Երբ մենք մտադրվում ենք խոսել մարդկանցից մեկի հետ, որը բարձր է մեզանից, այնժամ կարգի ենք բերում մեր արտաքին տեսքը, անգամ մեր քայլվածքը, մեր հագուստը և ամեն ինչ, և նոր մտնում ենք խոսակցության մեջ: Իսկ երբ մոտենում ենք Աստծուն, սկսում ենք հորանջել, քրոկել, այսուայն կողմ շրջվել, լինում ենք անփույթ, ծնրադրում, ենք իսկ ինքներս մտովի թափառում ենք այս ու այն կողմ: Բայց եթե մենք մոտենայինք համապատասխան երկյուղածությամբ և այնպես, ինչպես հարկն է գրուցել Աստծո հետ, մենք կհասկանայինք, թե ինչ մեծ օգուտ կարող ենք ստանալ հենց միայն աղոթքի կատարումից, դեռ չստացած իսկ աղոթքի պատասխանը:

...Իսկ Աստծո կողմից լսելի լինելը կախված է հետևյալ պայմաններից. նախ, եթե մենք արժանի ենք ստանալու խնդրվածը, երկրորդ՝ եթե մենք աղոթում ենք Աստծո օրենքի համաձայն, երրորդ՝ եթե աղոթում ենք անդադար, չորրորդ՝ եթե չենք խնդրում ոչ մի կենցաղային բան, հինգերորդ՝ եթե խնդրում ենք օգտակարը, վեցերորդ՝ եթե կատարում ենք մեզանից պահանջվող պարտավորությունները: Այս կերպ շատերը լսելի եղան: Կոռնելիոսը լսելի եղավ իր վարքի համար, փյունիկացի կին աղոթքի պնդության համար, Սողոմոնը՝ խնդրվածքի բնույթի համար, մաքսավորը՝ խոնարհության համար, ուրիշներն էլ՝ ուրիշ այլ բաների համար: Ինչպես որ այս ամենի կատարումից է կախված աղոթքի լսելի լինելը, այնպես էլ սրանց չկատարելուց կախված է այն լսելի չլինելը, եթե նույնիսկ աղոթող-

Գերը արդարներ են: Ո՞վ էր Պողոսից առավել բարեպաշտ, բայց երբ նա խնդրեց անօգտակարը, լսելի չեղավ:

«Երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ Նա ինձանից հեռացնի: Բայց ասաց ինձ, -Իմ շնորհը քեզ բավ է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է անբողջական դառնում» (Բ Կորնթ. 12:8-9): Ո՞վ էր նաև արդար Մովսեսից, բայց նա էլ լսելի չեղավ և Տերը նրան ասաց. «Բավական է, այլևս Ինձ հետ այդ մասին չխոսես» (Բ Օրինաց 3:26): Նա խնդրում էր այն բանի համար, որ մտնի Ավետյաց երկիր: Բայց դա անօգուտ էր, դրա համար էլ Աստված թույլ չտվեց նրան: Բացի այս մենք լսելի չենք լինում նաև այլ պատճառով, երբ աղոթում ենք՝ չհրաժարվելով մեր մեղքերից: Այս բանը մատնանշեց Տերը և ասաց Երեմիային Իսրայելի մասին. «Դու մի՛ աղոթիր այս մարդկանց համար, մի՞թե չես տեսնում, թե ինչ են անում» (Երեմ. 7:16): Նրանք ասում են, որ չեն հեռանում անմաքությունից, իսկ դու խնդրում ես նրանց համար: Բայց ես չեմ լսի քեզ: Նմանապես, երբ մենք խնդրում ենք ինչ-որ բան՝ մեր թշնամիների դեմ, այդժամ ոչ միայն լսելի չենք լինում, այլև վիրավորում ենք Աստծուն: Աղոթքը բժշկարար սպեղանի է, և եթե մենք չենք իմանում, թե ինչպես պետք է օգտագործվի այդ սպեղանին, այդժամ չենք էլ ստանա նրանից ոչ մի օգուտ:

(7-րդ սաղմոսի մասին գրույցից)

Այն մասին, որ չպետք է խուսափել եկեղեցում արվող աղոթքներից

Ես ուզում եմ սիրելիներիդ ասել մի բան՝ եկեղեցում եղող մի ծանր հիվանդություն արմատախիլ անելու վերաբերյալ: Ինչ հիվանդություն է դա: Ի՞նչ աներևակայելի քանակությամբ ժողովուրդ է հավաքվել այսօր եկեղեցում, և ի՞նչ ուշադրությամբ է լսվում այս գրույցը, իսկ ամենաահավոր պահին ես շատ հաճախ փնտրում եմ այն և չեմ տեսնում, և հույժ տրտմում եմ, որ երբ ծառայողը գրույց է անցկացնում, այնժամ լինում է մեծ ջերմեռանդություն՝ լսելու մեջ, լարված նախանձախնդրությամբ, և մնում են մինչև վերջ: Բայց երբ հասնում է ժամը Քրիստոսի հայտնության Սուրբ Խորհուրդներում, այնժամ եկեղեցին լինում է դատարկ մարդկանցից: Կարո՞ղ է այս բանն արժանանալ ներման: Նման անհոգության պատճառով դուք զրկվում եք նաև այն գովքից, որ ուշադրությամբ լսել էք հոգևոր ուսուցումը: Բայց ինչպիսի՞ սառն արդարացում են բերում ո՞նց: Աղոթել կարող եմ նաև տանը, իսկ լսել քարոզ և ուսմունք, տանն անհնարին է: Ինքդ քեզ ես խաբում, ով մարդ, իհարկե, աղոթել կարելի է և տանը, բայց աղոթել այնպես, ինչպես եկեղեցում, որտեղ այդքան հոգևոր հայրեր կան, որտեղ միահամուռ կերպով երգեր է հղվում առ Աստված, անհնար է: Այնքան լսելի չես լինի Տիրոջ առաջ տանը, ինչքան եկեղեցում՝ եղբայրների հետ:

(Անունեականների դեմ եղած գրույցից)

Այն մասին, որ պետք է խնդրել անձանձրույթ

Երբ ես մեկնում եկին ասում եմ. «խնդրիր Աստծուց, աղոթիր Նրան, մոտեցիր Իրեն աղոթքով», ինձ պատասխանում են. «Ես խնդրեցի մի անգամ, երկու անգամ, երեք, տաս և քսան անգամ և դեռ չստացա խնդրվածս»: Մի՛ դադարիր խնդրելուց, մինչև որ չստանաս, աղոթքի վերջը խնդրվածքի ստացումն է: Դադարիր այն ժամ, երբ կստանաս, կամ ավելի լավ է, որ այնժամ էլ չդադարես, այլ հարատև մնաս աղոթքի մեջ: Եթե դու չստացար, աղոթիր, որ ստանաս, իսկ եթե ստանաս, հայտնիր գոհությունդ՝ ստանալու համար: Շատերը գալիս են եկեղեցի և նրանց բերաններից աղոթքի հագարավոր բառեր են դուրս գալիս սակայն դուրս են գալիս չիմանալով, թե ինչ աղոթեցին: Նրանց բերանը շարժվում է, սակայն չի հասնում սեփական ականջներին: Դու ինքդ չես լսում քո աղոթքները, իսկ ինչպե՞ս ես ուզում, որ Աստված այն լսի: Դու ասում ես, թե ծնրադրում ես, սակայն մտքերդ թափառում են դրսում, բերանդ աղոթքի խոսքեր են բարբառում, իսկ միտքդ խորհում եկամուտներիդ, պայմանագրերիդ, դաշտերիդ, ունեցվածքիդ և ընկերական հարաբերություններիդ մասին: Չար է սատանան և գիտի, որ մենք աղոթքի ժամանակ ձեռք ենք բերում մեծ օրհնություններ, դրա համար էլ հենց այդ պահին հարձակվում է մեզ վրա: Հաճախ անկողնին հանգիստ պառկած, մենք ոչ մի բանի մասին չենք խորհում, իսկ երբ ելնում ենք աղոթելու, այնժամ հայտնվում են հագարավոր մտքեր, որպեսզի մենք աղոթքից ձեռնունայն ելնենք: Եվ այսպես, սիրելիս, իմանալով, որ նման բաներ են լինում աղոթքի պահին, նմանվիր քանանացի կնոջը: Չնայած տղամարդ ես, սակայն որի՞նակ վերցրու այս այլազգի, տկար, մերժված և արհամարհված կնոջից: Դու չունես այսահար աղջիկ, բայց ունես մեղավոր հոգի: Ի՞նչ ասաց քանանացի կինը. «Ողորմիր ինձ, քանզի իմ աղջիկն այսահար է»: Այսպես ասա և դու. «Ողորմիր ինձ, քանզի իմ անձն այսահարվում է»: Քանզի մեղքը դա մեծ դև է: Դիվահարը առաջացնում է խղճահարություն, իսկ մեղավորը ատելություն, նա արժանի է ներման, իսկ սա չունի արդարացում: «Ողորմիր ինձ», սա կարճ նախադասություն է, սակայն արժանացնում է ծով մարդասիրության, քանզի որտեղ ողորմությունն է, այնտեղ է նաև բոլոր բարիքները: Եթե դու նույնիսկ եկեղեցում էլ չես, միևնույն է, կանչիր և ասա. «Ողորմիր ինձ», ասա թեկուզ և առանց շուրթերդ իսկ շարժելու, դիմիր մտովի: Աստված լսում է և նրանց, որոնք լռում են: Աղոթքի համար ոչ թե տեղն է կարևոր, այլ հոգևոր տրամադրվածությունը: Երեմիան գտնվում էր տղմոտ գուբի մեջ և դեպ իրեն դարձրեց Աստծո ուշադրությունը: Դանիելը գտնվում էր առյուծների մեջ և իր հանդեպ բարի տրամադրվածությունն առաջացրեց Աստծո մոտ: Երեք մանուկները գտնվում էին հրաբորբոք փռի մեջ և փառավորվելով արժանացան Աստծո ողորմությանը: Ավագակը գամված էր խաչին, և խաչն արգելք չհանդիսացավ նրան, այլ բացեց դրախտի դռները: Հորը նստած էր փտության վրա և օգտվեց Աստծո ողոր-

մութիւնից: Գոյնանը գտնվում էր կետի որովայն-
նում, և Աստված լսեց նրան: Դու էլ, գտնվելով լվացարանում,
աղոթիր, կլինես ճանապարհին կամ կպառկես անկողնին և որտեղ էլ
որ լինես՝ աղոթիր: Դու Աստուծո տաճար ես, տեղ մի փնտրիր: Միայն
պետք է հոգևոր տրամադրվածություն: Եթե դու գտնվում ես դատավորի
առջև՝ աղոթիր: Ժամանակին նեղության մեջ լինելով Մովսեսը ոչինչ
չարտաբերեց, սակայն Աստված ասաց նրան. «Ինչո՞ւ ես Ինձ աղաղա-
կում» (Ելից 14:15): Նրա շուրթերը չէին շարժվում, իսկ միտքը ձայնում էր:
Այդպես արա և դու, սիրելիս, երբ կանգնած ես անգութ և անողոք դատա-
վորի առջև, և մրրկածուփ ալիքները կհանդարտվեն: Մի՞թե Աստված մարդ
է, որ փնտրես Նրան ինչ-որ տեղ: Աստված միշտ մոտ է:

(Քանանացի կնոջ մասին գրույցից)

Գիշերը կատարվող աղոթքների մասին

Գիշերը տրված չէ այն բանի համար, որպեսզի այն ամբողջովին անց-
կացնենք քնով և անգործությամբ: ...Արթնացեք, ուրեմն, ասում են սա՝ թե՛
տղամարդկանց և թե՛ կանանց: Ծնրադրիր, հոգոց հանիր, աղոթիր քո
Տիրոջը, որ ողորմած լինի քո հանդեպ: Նա հատկապես զթասրտության և
կարեկցանքի կողմն է դառնում գիշերային աղոթքների ժամանակ, երբ դու
հանգստի ժամը դարձնում ես աղոթքի ժամ: Հիշիր թագավորին, թե ինչպես
էր նա ասում. «Ես հոգնեցի իմ հառաչանքներից, ամեն գիշեր
հեծեծանքներով լվացի մահիճն իմ և արտասուքով անկողինս թրջեցի»
(Սաղմ. 6:7): Որքան էլ դու բարիքներ ունենաս, նրանից առավել չես ունե-
նա, որքան էլ դու հարուստ լինես, միևնույն է, Դավթից հարուստ չես լինի:
Ահա նա մի ուրիշ տեղ էլ ասում է. «Կեսգիշերին ելնում էի գոհություն
մատուցելու Քեզ, Քո արդար դատաստանների համար» (Սաղմ. 118:62):
Այդ ժամին փառամոլությունը չի անհանգստացնի քեզ, քանզի անհնարին
է, որովհետև բոլորը քնած են: Այնժամ չեն հարձակվի ծուլությունը և
անհոգությունը, քանզի շատ բա-ներ այդ ժամին անձին մղում են աղոթքի:
Նման հսկումներից հետո քունն էլ հաճելի է լինում և երազներն էլ
սքանչելի: Սա արա նաև դու՝ տղամարդ, և ոչ միայն կինը: ...Քանի որ, երբ
երկու հոգին մեկտեղ աղոթում են, Տերն այնտեղ է՝ նրանց մեջ (Մատթ.
18:20), իսկ որտեղ որ ներկա է Քրիստոս, այնտեղ են և հրեշտակները, և՛
հրեշտակապետերը և մնացած զորությունները: Ուրեմն դուք միայնակ չեք
քանզի բոլորի Տերը ձեզ հետ է: Եվ լսիր, թե ինչ է ասում Իմաստունը. «Լավ
է մի արդարը, քան բազում մեղավորները» (Սիրաք 16:3): ...Եթե դու
երեխաներ ունես, արթնացրու նաև նրանց, և թող գիշերն ամբողջ տունը
վերածվի եկեղեցու: Եթե նրանք անչափահաս են և չեն կարող տանել
գիշերային հսկումը, այդժամ թող կատարեն կամ լսեն ծայրահեղ դեպքում,
գոնե մի կամ երկու աղոթք, և թող հանգստանան: Իսկ դու արթնացիր և

դարձրու դա քեզ համար բարի սովորություն: Ոչ
մի ավելի գեղեցիկ բան չկա այն բնակավայրից, որտեղ նման
աղոթքներ են կատարվում: Լսիր, թե ինչ է ասում մարգարեն. «Երբ
Քեզ հիշում էի իմ անկողնում, առավոտյան կանուխ խոսում էի Քեզ
հետ» (Սաղմ. 62:7): Սակայն դու կասես, թե ցերեկվա գործերից հոգնել
եմ և չեմ կարող, դա լոկ պատրվակ է և պատճառաբանություն:
...Անաչենք, եթե ոչ ուրիշ շատերից, գոնե գիշերային պահակներից,
նրանք ենթարկվելով մարդկային օրենքին, շրջում են սառնամանիքին,
երբեմն բարձր աղա-ղակելով, շատ հաճախ անձրևի տակ սառելով
ցրտից՝ քո պահովության և քո ունեցվածքի պահպանման համար: Սա
նյութական և բանավոր բաների համար այսքան ջանք է թափում, իսկ դու
չե՞ս ուզում այդ անել քո հոգու համար: Բայց ես քեզ չեմ ստիպում, որ նրա
պես շրջես բաց երկնքի տակ, ոչ բարձր աղաղակես, ոչ էլ ուժասպառ
լինես, այլ գտնվելով քո իսկ բնակարանում, քո ննջարանում ծունկ
խոնարհեցնել և աղոթքով դիմել Աստուծու: Ինչի՞ համար ինքը՝ Քրիստոս,
լեռան վրա անցկացրեց ամբողջ գիշերը (Ղուկ. 16:12): Այն բանի համար,
որ մեզ օրինակ ցույց տա: Գիշերը բուսականությունը վերականգնում է իր
ուժերը, այդ ժամ նաև հոգին առավել ցողվում է հոգևոր ցողով: Այն, ինչ
ցերեկը տոչորվում է արևից, թարմանում է գիշերով: Գիշերային
աղոթքները ամեն տեսակի ցողից էլ առավել են իջնում ամենատարբեր
ցանկությունների՝ բորբոքուն կրքերի վրա և թույլ չեն տալիս, որ անձը կրի
ոչ մի վնասակար բան: Եթե նա (հո-գին) չկերակրվի այս ցողով, կայրվի
օրվա ընթացքում: Եվ թող ոչ ոք ձե-գանից չտրվի այրման այն կրակ
(զեհեմի) կողմից, այլ մնա զովության մեջ, պահպանությամբ Աստուծո
մարդասիրության, և թող արժանանանք մենք բոլորս՝ ազատվել մեղքի
լծից՝ շնորհով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որի հետ
և Հորը, Սուրբ Հոգու հետ միասին, փառք, իշխանություն և պատիվ, այժմ
և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

(Գործք Առաքելոցի մասին գրույցից)



ՆԱՐԵԿ

ԲԱՆ (ԻԲ)

Ահա կամովին ինքս իմ հանդեպ
 Եղա անձնամատն ու մարմնակործան,
 Ընդմիշտ մտախաբ ու հոգեկորույս,
 Սաստիկ կամակոր, սրտաբեկ ու խենթ,
 Անզգա, անմիտ ու խելացնոր,
 Հայրատահայաց ու եղեռնալուր:
 Բոլոր կողմերից համակ մահաբեր երկունքով լափված՝
 Պիտանի չեմ ես, Տե՛ր իմ, ոչնչով ընտիր գործերիդ.
 Ողբում եմ հիմա այն որովայնը, որ ծնել է ինձ,
 Ստինքները այն, որ ինձ սնեցին.
 Ինչո՞ւ կաթի տեղ ես չծծեցի մակարդված լեղի,
 Քաղցրի փոխարեն, ինչպե՞ս չստացա դառը կերակուր:
 Եթե ես ինքս եմ կանգնել իմ հանդեպ
 Այսքան խոսքերով դժնի դատախազ,
 Եվ բարկությանս սուրն է տակավին անխոնարհելի,
 Երկրածիններից ո՞վ, ո՞վ կարող է էլ ինձ ողորբել:
 Պիտի ծանակեմ, ինչ որ կա իմ մեջ,
 Պիտ պատժապարտեմ էությունս ողջ
 Ու գանակոծեմ այս վնասակար գնդերը համայն,
 Պիտի ընդվզեմ անձս խոցոտող բանակների դեմ,
 Զգայությանս գլխավորներին պիտի կշտամբեմ:
 Մեղանչեցի ես ամեն ինչի մեջ
 Եվ ամեն ինչով, ողորմի՛ր, գթա՛ծ.
 Նոր չէ, որ գտար իմ մեջ մառախուղն հանցապարտության,
 Այլ նույնն եմ հավետ, մեղապարտության նույն արատներով.
 Անկարկատելի ձործերով ահա
 Նույն հանցավորն եմ, կանգնած քո առաջ:
 Եվ դո՛ւ, միայն դո՛ւ, իսկապես գթա՛ծ, օրհնյալ մարդասեր,

Անայլալելի քո նեղությամբ
 Շտապեցիր ինձ փրկելու համար աջ կողմս կանգնել:
 Արդ, խնամակալ, երկնավոր, բարի,
 Հաստիչ ամենքի՛ անգոյությունից,
 Կայծակը հզոր քո իմաստության,
 Մատուցի՛ր լեզվիս ներագդող բոլոր գործարաններից՝
 Մաքրելու համար քո ձեռակերտած
 Զգայարաններն իմ գոյացության,
 Որ կարողանամ ես էլ նրանցով,
 Որոնք ստեղծել ու բուժել ես դու,
 Նոր պատրաստությամբ, աննվազ ձայնով, անհատ բարբառով
 Վերընծայել քեզ գովաբանություն՝
 Ի փառս մեծության քո Հոր՝ մեր Աստծո, հավիտյանս. ամեն:

(Սբ. Գրիգոր Նարեկացի)

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Խրատ մերժողը իր հոգին կանարգի, բայց հանդիմանության ականջ դնողը խելք կվաստակի (Առակ. 15:33):



Աստվածաշնչից

1. Այսպես, մեկ ժամ էլ չկարողացաք Ինձ հետ արթուն մնալ: Արթուն մնացեք, աղոթք արե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք (Մատթ. 26:40-41):
2. Ամենայն աղոթքներով և աղաչանքներով ամեն ժամ աղոթեցե՛ք Հոգով. և այդ բանի մեջ հսկեցե՛ք կատարյալ հարատևությամբ և աղաչանքներով (Եփես. 6:18):
3. Ամբարիշտի գոհը Տիրոջ առջև պիղծ է, բայց արդարների աղոթքը Երա մոտ ընդունելի է (Առակ. 15:8):
4. Արդարը թող ինձ խրատի և հարվածի ողորմությամբ, բայց անօրենության յուղը թող չօժի իմ գլուխը, քանի որ անդադար նրանց չարության դեմ պետք է աղոթեն (Սաղմ. 140:5):
5. Ձգույշ եղե՛ք, արթուն մնացե՛ք և աղոթք արե՛ք, քանի որ չգիտեք, թե երբ է ժամանակը... Եվ ինչ որ ձեզ են ասում, բոլորին են ասում. Արթուն մնացե՛ք (Մարկ. 13:33):
6. Աղոթելուց առաջ նախապատրաստիր քեզ և մի՛ եղիր այն մարդու նման, որ փորձում է Տիրոջը: Հիշիր վախճանի օրվա ցասումը և վրեժ-խնդրության ժամանակը, երբ Տերը քեզանից կշրջի Իր երեսը (Սիրաք 18:23-24):
7. Պետք է արեգակի ծագելուց առաջ ելնել գոհություն տալու և աղոթքի կանգնել լույսը բացվելուց առաջ (Իմաստություն Սողոմոնի):
8. Երկու մարդ տաճար ելան՝ աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և ինքն իրեն այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ քեզանից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, և կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում

եր կուրծքը և ասում. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Ասում են ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետև, ով որ բարձրացնում է իր անձը՝ կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի» (Ղուկ. 18:1-8):

9. Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան (Ղուկ. 18: 1-8):
10. Արթուն կացեք այսուհետև, ամեն ժամ աղոթք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու Մարդու Որդու առաջ (Ղուկ. 21:36):
11. Ինչո՞ւ եք քնել. վե՛ր կացեք, աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք (Ղուկ. 22:46):
12. Միմյանց համար աղոթեցե՛ք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի աղոթքը խիստ զորավոր է՝ օգնելու համար (Հակ. 5:16):
13. Աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է (Մատթ. 5:44):
14. Եվ երբ աղոթես, չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան. ճշմարիտ են ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը: Այլ դու, երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները և ծածուկ աղոթի՛ր քո Հորը, և քո Հայրը, որ տեսնում է...ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես (Մատթ. 6:5-6):
15. Գրված է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն է կոչվելու, իսկ դուք այն դարձրել եք ավազակների որջ (Մարկ. 11: 17):
16. Ասում են ձեզ. ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ: Եվ երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ բան ունեք, ներեցե՛ք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները (Մարկ. 11:24-25):
17. Տիրոջը ծառայեցե՛ք. հույսով ուրախացեք. նեղության համբերեցեք, հաճախակի աղոթեցե՛ք (Հռոմ. 12: 11-12):
18. Եղբայրներ, աղաչում են ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսով և Հոգու սիրով՝ մարտակից լինել ինձ, ինձ համար Աստծուն ուղղված աղոթքների մեջ (Հռոմ. 15: 30):
19. Արդ՝ ամենից առաջ աղաչում են աղոթք անել, խնդրել, պաղատել, գոհություն մատուցել բոլոր մարդկանց համար, մանավանդ, թագավորների և բոլոր իշխանավորների համար, որպեսզի խաղաղությամբ և հանդարտությամբ վարենք մեր կյանքը, կատարյալ աստվածապաշտությամբ և սրբությամբ. այդ է բարին և ընդունելին մեր Փրկչի՝ Աստծո առաջ (Ա Տիմ. 2:1-3):
20. Ամեն տղամարդ, երբ աղոթքի կանգնի կամ մարգարեանա և գլուխը ծածկած պահի, անպատվում է իր գլուխը: ... Պետք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի, որովհետև նա պատկերն ու փառքն է Աստծու. իսկ կինը՝ մարդու փառքն է, որովհետև ոչ թե մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց.

քանզի մարդը չստեղծվեց կնոջ համար, այլ կինը մարդու համար: Դրա համար կինը պարտավոր է քող դնել գլխին: ...Եվ դուք ինքներդ դատեցեք. վայել է կին արարածին գլխաբաց աղոթքի կանգնել Աստծո առաջ (Ա Կորնթ. 11:4,9-13):

21. Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի վեր, առանց բարկության և երկմտության (Ա Տիմ. 2:8):

22. Պայքարում եք, կռվում և ձեռք չեք բերում, որովհետև չեք խնդրում: Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում, որպեսզի այն ծառայեցնեք ձեր ցանկություններին (Չակ. 4:2-3):

23. Սաղմոս ասացեք Տիրոջը, ով նրա սուրբեր, և փառաբանեցեք նրա սրբության հիշատակը (Սաղմ. 29:4):

24. Տիրոջը կօրհնեն ամեն ժամանակ. նրա փառաբանությունը միշտ իմ բերանում պիտի լինի (Սաղմ 33:1):

25. Բարի է գոհանալ Տիրոջից և սաղմոս ասել Քո անունին, ով Բարձրյալ: Առավոտյան պատմել քո ողորմությունը և գիշերը քո ճշմարտությունը (Սաղմ. 91:1- 2):

26. Եկե՛ք երկրպագենք Նրան, խոնարհվենք ու լաց լինենք մեր Արարչի՝ Տիրոջ առջև (Սաղմ. 94:6):

27. Չորս կենդանիներն ու քսանչորս երեցներն ընկան Գառան առաջ. և յուրաքանչյուրն ուներ քնար և խնկով լի ոսկե բուրվառ, որ սրբերի աղոթքներն են (Չայտ. 5:8):



Հայրերից



1. Անփութորեն ու ծուլությամբ կատարված աղոթքը դատարկախոսություն է (Անտոն Անապատական):

2. Դռների ետևում են մնում այն աղոթքները (չեն հասնում Աստծուն), որոնք իրենց մեջ սեր չեն պարունակում, որովհետև միայն սերն է բացում աղոթքի դռները (Եփրեմ Ասորի):

3. Թող քո շուրթերը միշտ սաղմոսեն, որովհետև Աստծո անվան արտաբերումը փախուստի է մատնում դեերին: Եթե ձեռքերդ աշխատում են, թող լեզուդ սաղմոսի, իսկ միտքդ աղոթի (Եփրեմ Ասորի):

4. Երբ միտքը սկսում է կենտրոնացած կերպով, առանց ցրվածության աղոթել, այն ժամ պատերազմի ուղղությունը փոխվում է, և այն գիշեր ու գօր սկսվում է մղվել անձի ջղագրգիռ կողմի վրա (Եվագր Պոնտացի):

5. Երբ միտքը աղոթքի պահին չի պատկերացնում ոչ մի աշխարհային բան, ուրեմն նա ամրապնդվել է (Եվագր Պոնտացի):

6. Մեծ բան է, երբ աղոթում ես անզբաղ, բայց առավել մեծ բան է, երբ երգում կամ սաղմոսում ես անզբաղ (Եվագր Պոնտացի):

7. Սաղմոսների բառերը ոչ միայն լեզվով արտաբերիր, այլ և երգիր սըրտիդ մեջ (Եվագր Պոնտացի):

8. Անցկացրու գիշերը աղոթական ջանքերով, և հոգիդ ձեռք կբերի մխիթարություն (Եվագր Պոնտացի):

9. Հարկադրիր քեզ գիշերվա մեջ բազում աղոթքների, քանզի աղոթքը լույս է քո անձին: Հանապազ խորհի՛ր, թե որտեղ ես սայթաքել, և եթե աղոթես դրանց համար, Աստված քեզ թողություն կշնորհի (Չայր Սրապիոն):

10. Եթե քեզ մոտենա մտքիդ հետ պատերազմող խորհուրդ, զգույշ եղիր, որպեսզի աղոթքի մեջ անհրաժեշտի փոխարեն այլ բան չխնդրես, այլ աղոթքիդ սուրը սրի՛ր ընդդեմ թշնամու՛. նրա հետ ընդդիմամարտելու համար (Եպիփան Կիպրացի):

11. Աղոթքով փնտրե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, որ մեր ներսում է (Մարկոս ճգնավոր):

12. Երբ աղոթում ես, ասա սրտումդ թշնամական մտքերի և ներգործությունների դեմ. «Տերը ամեն ինչ է ինձ համար», և այսպես, ամբողջ կյանքում, երբ կրքերը գլուխ կբարձրացնեն, և երբ բոլոր թշնամական ներգործությունները քո վրա ելնեն, այսինքն հիվանդություն, հուսալքություն, դժբախտություններ և այլ հարձակումների ժամանակ միշտ ասա. «Ամեն ինչ է ինձ համար Տերը, ես ինքս ոչինչ անելու կարողություն չունեմ, ոչնչի չեմ կարող համբերել, դիմակայել և հաղթահարել: Նա է իմ զորությունը» (Մակար Մեծ):

13. Սակայն ինչպե՞ս ես ասում դու, որ բազում հոգսեր ունեցող աշխարհիկ մարդը չի կարող օրը երեք ժամ աղոթել և եկեղեցի այցելել: Հնարավոր է, և շատ հեշտությամբ: Նույնիսկ եթե անհնար է եկեղեցի գնալ, կարելի է աղոթել ամենուրեք: Ոչ այնքան խոսքն է կարևոր, որքան միտքը, ոչ այնքան մարմնի դիրքը, որքան սրտի տրամադրվածությունը: Սամվելի մորը՝ Աննային, Աստված լսեց ոչ թե բարձր ձայնով աղերսելու, այլ սրտում ունեցած աղաղակի շնորհիվ (Ա թագ. 1-13): Շատերի համար աղոթքի արգելք չեն եղել ո՛չ վայրը, ո՛չ ժամանակը, ո՛չ լռության բացակայությունը: Դու էլ այդպես արա: Հառաչիր դառնորեն, հիշիր մեղքերդ և մտքումդ ասա. «Ողորմիր ինձ, Աստված»: Ահա և աղոթեցիր:

Նույնիսկ, եթե ծունկի չես եկել, եթե կուրծքդ չես ծեծում, եթե ձեռքերդ չես պարզել դեպի երկինք, բայց սրտումդ ջերմեռանդ ես, աղոթքդ կարող է լսելի դառնալ: Կինը խոհանոցում կամ կար անելիս, տղամարդը արհես-

տանոցում կամ ճանապարհին, շուկայում թե ծառայության մեջ կարող է ջերմեռանդ աղոթել: Հիշիր, ինչպես բանտախցի հատակին պառկած աղոթեց Պողոսը, և սասանվեց բանտը, սարսափեց բանտապետը և ի վերջո մկրտվեց: Հիշիր եզեկիային, որ պառկած էր հիվանդ և այդ վիճակում ջերմորեն աղոթեց, ու Աստված փոխեց իր վճիռը և առողջացրեց նրան: Նույնիսկ մեծ մեղավորներն աղոթքով Աստծո ողորմությունն ստացան: Ավազակը եկեղեցում ծունկի եկած չէր, այլ զամված էր խաչին և երկնքի արքայությանն արժանացավ: Մեկը՝ հոտի, մյուսը՝ զազանների մեջ, մյուսը՝ ձկան որովայնում Աստծուն կանչելով՝ ազատվեցին և Աստծո հաճությանն արժանացան:

Հաճախեցեք եկեղեցի, ծունկի եկեք և ձեռքերը պարզած աղոթեցեք: Նաև տանը աղոթեցեք՝ առանձնության մեջ: Սակայն, երբ անհնար է այդպիսի աղոթքը, մի՛ թողեք այն, և ինչպես ասացի, ջերմեռանդ կերպով աղոթեցեք և օգուտ կստանաք: Եթե այսպես տրամադրվեք, թե՛ այս կյանքում խաղաղություն կունենաք, թե՛ երկնքի արքայությանը կարժանանաք (Հովհան Ոսկեբերան):

14. Ոչ թե մարմնի կեցվածքով և մեծածայն խոսքերով, այլ կամավոր հոժարությամբ աղոթք մատուցենք: Ոչ թե հանդուգն աղաղակով և ի ցույց մարդկանց, այլ հեզությանբ ու հանդարտությամբ, մտքերի ստորջանքով ու մեղմ արտասուքով պետք է սիրտն արթնացնել (Հովհան Ոսկեբերան):

15. Առանց աղոթքի մեր հոգևոր կյանքը թռչնում, ծարավում ու մեռնում է (Հովհան Ոսկեբերան):

16. Ոմանց շրթունքներին մաքսավորի խոսքն է, բայց սիրտն ու մտքերը՝ փարիսեցունը (Գրիգոր Երկխոս):

17. Ով սրտում մի բան ունի, իսկ լեզվին՝ մի ուրիշ, նրա ջանքերն ու աղոթքներն իզուր են (Հայր Եսայի):

18. Նա է կարողանում լավ ապրել, ով կարողանում է լավ աղոթել (Օգոստինոս Երանելի):

19. Ինչպես տեսողությունը պատվական է բոլոր զգայարանների մեջ, այնպես էլ աղոթքը ամենաբարձրն է առաքինությունների մեջ (Նեղոս Սինայեցի):

20. Նախ աղոթիր, արտասուքներ ստանալու համար, որպեսզի սզի միջոցով կակղեցնես անձիդ վրա ներգործած խստությունները և խոստովանելով անձիդ անօրեցությունը Քո Տիրոջը՝ Նրանից մեղքերի թողություն ստանաս (Նեղոս Սինայեցի):

21. Ջանա աղոթքի ժամանակ միտքդ խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամեն տեսակ արկածներից, որպեսզի աղոթքն ընդունելի լինի (Նեղոս Սինայեցի):

22. Աղոթքը հեզության, անբարկության, անհիշաչարության և սիրո բխումն է (Նեղոս Սինայեցի):

23. Աղոթքը տրամության, տարակուսանքների և վշտերի հրաժարադեղ ու սփոփանք է (Նեղոս Սինայեցի):

24. Ցանկանո՞ւմ ես աղոթել ինչպես պետք է, մի՛ տրտմեցրու որևէ մեկի

անձը, ապա թե ոչ՝ ունայն կլինի քո վաստակը և այդ ընթացքը (Նեղոս Սինայեցի):

25. Ջգույշ եղիր, միգուցե, փորձելով բժշկել ուրիշներին, քեզ անբժշկելի դարձնես Տիրոջ առաջ և խափանես քո աղոթքը (Նեղոս Սինայեցի):

26. Եթե ցանկանում ես աղոթել, հրաժարվիր ամեն ինչից, որպեսզի շահես այն (Նեղոս Սինայեցի):

27. Աղոթիր նախ՝ ախտերից սրբվելու, երկրորդ՝ անգիտությունից և մոռացումից, երրորդ՝ բոլոր փորձություններից և ծուլությունից ազատվելու համար (Նեղոս Սինայեցի):

28. Ով սիրում է Աստծուն, Նրա՝ որպես Հոր հետ միշտ զրուցում է՝ հեռանալով բոլոր ախտավոր խորհուրդներից դեպի հոգևորը (Նեղոս Սինայեցի):

29. Չես կարող մաքուր աղոթել՝ պաղատելով մարմնավոր իրեր, քանզի աղոթքը հեռացնում է այս աշխարհի նյութական ակնկալությունից (Նեղոս Սինայեցի):

30. Ոչ թե փարիսեցու պես, այլ մաքսավորի պես աղոթիր՝ տաճարում, որպեսզի դու էլ արդարանաս Աստծուց (Նեղոս Սինայեցի):

31. Մի՛ ցանկացիր որևէ կերպարանք, կամ ձև, կամ գույն աղոթքի ժամանակ (Նեղոս Սինայեցի):

32. Երջանիկ է այն միտքը, որ աղոթքի ժամին աննյութական և անստացիկ է լինում՝ սրբվելով ամեն ինչից (Նեղոս Սինայեցի):

33. Ամբողջովին հեռու մնա ստությունից, երդումից և բարկությունից և աղոթել փափագիր (Նեղոս Սինայեցի):

34. Եթե կամենում ես հոգով աղոթել, ոչ մեկին մի՛ ատիր և չես ունենա մառախուղ, որ դիմադրում է քեզ աղոթքի լուսավորության ժամին (Նեղոս Սինայեցի):

35. Եթե կանգնել ես աղոթելու ամենակալ Աստծո և Արարչի առջև, ինչո՞ւ ես այդպես անասնաբար կանգնել. մի կողմ ես թողել Նրա երկյուղը և ճանճից ու մժեղից ես երկնչում: Կամ չե՞ս լսել՝ «Քո Տիրոջից երկյուղիր» (Բ Օր. 10:20) (Նեղոս Սինայեցի):

36. Թեպետև կարծես թե Աստծո հետ ես, զգույշ եղիր պոռնկության դեկից, քանզի հույժ պատրող և նախանձ է և կամենում է ավելի սրընթաց լինել, քան քո մտքերի շարժումն ու սբափությունը, որպեսզի նրան Աստծուց անջատի, երբ Աստծո առջև ահով ու երկյուղով կանգնած ես (Նեղոս Սինայեցի):

37. Ով հոգ է տանում մաքուր աղոթքի համար, նա կլսի դևերի ճայթյուններ, թնդուններ, սոսափյուններ և խշխշոցներ և դիվային հեծեծանքներ, սակայն չպետք է վարանի և մատնվի այդ խորհուրդներին, այլ ասի Տիրոջը. «Չերկյուղեցի չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. 22:4): Ինչպես նաև սրանց նման աղոթքի խոսքեր (Նեղոս Սինայեցի):

38. Եթե դևերը հանկարծակի երևալով, սպառնան և զարհուրեցնեն քեզ և հափշտակեն միտքդ կամ զազանների պես վնասեն մարմինդ, մի՛

սարսափիր նրանցից և ուշադրություն մի՛ դարձրու նրանց սպառնալիքներին, քանզի փորձելով վախեցնում են. արդյոք ուշադրության կարժանացնե՞ս նրանց, թե՞ արհամարհում ես (Նեղոս Սինայեցի):

39. Երբ աղոթելիս զգում ես ուրախություն, որ վեր է այս աշխարհի ուրախություններից, այնժամ իսկապես ձեռք ես բերում սուրբ աղոթքը, որ կատարվում է ի փառս Ամենասուրբ Երրորդության այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Նեղոս Սինայեցի):

40. Հարց. -Երբ ինչ-որ բանի համար ողբում եմ, աղոթում եմ և Աստծու անսպառ ողորմությունն եմ ստանում, ապա սկսում եմ ամբարտավանորեն մտածել՝ աղոթքս լսվեց: Ինչպե՞ս վարվել:

Պատ. -Երբ աղոթես, ստանաս խնդրածդ և գոռոզանաս, ապա ակընհայտ է դառնում, որ աղոթքդ Աստծուն չէր հղված, և Աստծուց չէր, որ օգնություն ստացար, այլ դևերը հապճեպորեն օգնեցին քեզ, որպեսզի սիրտդ ամբարտավանությամբ լցվեր: Քանզի եթե օգնությունն Աստծուց է, հոգին չի գոռոզանում, այլ ավելի է հաստատվում հեզության մեջ և սքանչանում է Աստծու անսահման ողորմությամբ:

Ինչպե՞ս է Նա ողորմում մեղավորներին, անտարակույս անարժան և Իրեն միշտ զայրացնողներին, և սրանք էլ անսահման զոհություն են հայտնում Նրան՝ փառավոր և անճառելի օգնության համար, որ ոչ թե ըստ մեր մեղքերի է մեզ տալիս, այլ համբերում և ողորմում է համաձայն Իր անսահման ներողամտության: Այդ իսկ պատճառով, հոգին չի գոռոզանում, այլ թրթռում և փառաբանում է (Բարսիլիսկոս Մեծ):

41. Հարց. -Բազմաթիվ անգամ սաղմոսերգելիս համակվում եմ բարձրախոությանմբ, ի՞նչ պետք է ասեմ ես այդ ժամանակ այս ծածուկ մտքերիս:

Պատ. -Երբ սիրտդ զոռոզանում է սաղմոսերգելիս, հիշիր գրվածը. «Թող նրանք չպարծենան իրենց հոգունե (Սաղմ. 65:7): Նաև ստուգիր, թե սաղմոսերգելիս արդյոք միտքդ չի՞ զբաղված այլ մտածումներով, և անպայման կտեսնես, որ միտքդ հափշտակվում է, հետևաբար վշտացնում ես Աստծուն (Բարսիլիսկոս Մեծ):

42. Հարց. -Եթե սաղմոսերգելիս, աղոթելիս կամ էլ ընթերցելիս մեղսալից խոհեր են առաջանում, հա՞րկ է, արդյոք, միառժամանակ ընդհատել սաղմոսերգությունը, աղոթքը կամ ընթերցանությունը՝ դրանց անաղարտ մտքերով ընդդիմանալու համար:

Պատ. -Խուսափիր այդ խոհերից, ավելի խորացիր սաղմոսերգության, աղոթքի և ընթերցանության մեջ, որպեսզի զորանաս աղոթքիդ արտաբերած խոսքերից: Իսկ եթե սկսեմք մարզվել հակառակորդի թշնամական մտադրությունները քննելու մեջ, միշտ խորամուխ լինելով, թե ինչ է թշնամին ներշնչում, ապա երբեք ի վիճակի չենք լինի որևէ բարի բան անելու: Երբ տեսնում ես, որ նրա որոգայթները խանգարում են սաղմոսերգությանը, աղոթքին, ընթերցանությանը, ապա նրա հետ բանավեճի մի բռնրվիր: Որովհետև դա քո ուժերից վեր է: Սակայն աշխատիր Աստծու անունը կանչել, և Աստված կօգնի քեզ՝ քանդելու թշնամու որոգայթները, քանի որ

Նրանն է զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից, ամեն (Բարսիլիսկոս Մեծ):

43. Հարց. -Երբ ես փորձում եմ ամենայն մանրակրկիտությամբ թափանցել սաղմոսի խոսքերի մեջ, այդ ժամանակ պատահում է, որ սաղմոսի խոսքերի համեմատ մտքովս չար խորհուրդներ են անցնում:

Պատ. -Եթե կտեսնես, որ թշնամին նենգորեն, սաղմոսի բառերով քո գլխին լուսանք է թափում, ապա հարկ չկա առանձնահատուկ ջանադրությամբ խորամուխ լինելու սաղմոսների խորհուրդների մեջ, այլ պետք է կարդալ ուշադիր և միտքն այլ բաներով չզբաղեցնել: Քանզի եթե միայն արտաբերես սաղմոսի բառերը, ապա թշնամիները գիտենալով դրանց զորությունը, չեն կարող դիմակայել քեզ: Եվ նման սաղմոսերգությունը կծառայի քեզ որպես աղոթք և թշնամիներին հաղթելու միջոց (Բարսիլիսկոս Մեծ):

44. Հարց. -Երբ սաղմոսերգության ժամանակ կամ մարդկանց հետ զրուցելիս ինձ անհանգստացնում են չար մտքեր, և ես հնարավորություն չունենալով շուրթերով առ Աստված աղաղակելու, կարելի՞ է օգնություն հայցեմ մտքիս մեջ, կամ միայն հիշեմ Տիրոջ մասին, և սա արդյո՞ք բավական չէ օգնություն ստանալու համար:

Պատ. -Եթե սաղմոսերգության ժամանակ կամ մարդկանց հետ հանդիպելիս ստիպված լինես Աստծուն աղաղակելու, մի կարծիր, թե առանց բանավոր արտաբերման չես կարող կանչել նրան:

Սակայն հիշիր, որ նա սրտեր քննող է, և սիրտն է քննում, ուստի և սրտիդ մեջ Նրան դիմիր: Հենց սա է Սուրբ Գրքի վկայակոչումը. «Փակիր քո դռները և ծածուկ աղոթիր քո Հորը» (Մատթ. 6:6) (Բարսիլիսկոս Մեծ):

45. Հարց. -Լա՞վ է արդյոք, միշտ Աստծու մասին խորհել, կամ սրտանց աղոթել Նրան՝ առանց լեզվի մասնակցության: Երբ պատահում է, որ ես այս վարժանքների մեջ եմ լինում, միտքս ցրվում է, ծանրություն եմ զգում և աչքիս կարծես առարկաներ և տեսիլքներ են երևում: Եվ ընկնում եմ երազային անուրջների գիրկը:

Պատ. -Ստացրվածությունից զերծ մնալ և չթաղվել երազային անուրջների մեջ, կարող են միայն կատարելության հասածները, որոնք կարողանում են ղեկավարել իրենց մտքերը և միշտ Աստծու վախի ներքո մնալ: Իսկ նա, ով Աստծու հանդեպ հարատև սթափ վիճակում չէ, և մտքում աղոթելիս մտքերը ցրվում են, այդժամ թող սկսի բարձրաձայն աղոթել և քիչ անց նորից թող անցնի մտքով աղոթելուն, մինչև որ կամաց-կամաց ամրապնդվի մտքով անզբաղ աղոթելու մեջ: Այս նույնը կարելի է տեսնել ծովում լող տվողների օրինակով: Նրանք, ովքեր ավելի փորձառու են, համարձակորեն առաջ են մղվում՝ իմանալով, որ վարժված լողորդը ծովում չի կարող խեղդվել: Իսկ սկսնակները, որոնք լողալ են սովորում, համակվում են խեղդվելու վախով, ուստի և խոր տեղերից շտապում են ափ դուրս գալ: Փոքր-ինչ հանգստանալով, նորից նետվում են խոր տեղերը, և այսպես մարզվելով, տիրապետում են լողի արվեստին (Բարսիլիսկոս Մեծ):

46. Հարց. -Երբ աղոթում եմ տարբեր հարցերի

շուրջ, կարիք կա՞ աղոթքի մեջ առանձին-առանձին հիշատակելու բոլորը:

Պատ. -Եթե ցանկանում ես տարբեր հարցերի շուրջ աղոթել, հիշիր որ Աստված գիտի ինչի կարիք ունենք և այսպես աղոթիր. «Տեր մեր Հիսուս Քրիստոս, առաջնորդիր ինձ ըստ քո կամքի: Եթե կրթերին է խոսքը վերաբերվում, ապա. «Բժշկիր ինձ՝ համաձայն քո կամքի»: Իսկ երբ գայթակղության մասին, ապա ասա. «Դու գիտես, թե որն է բարի: Օգնիր իմ տկարությանը և, համաձայն քո կամքի, շնորհիր ինձ ազատվել գայթակղությունից» (Բարսիլիսկոս Մեծ):

47. Հարց. -Երբ ընթերցանությամբ եմ զբաղված կամ որևէ գործ եմ անում, և այդ պահին ուզում եմ աղոթել, միտքս հուշում է դեպի արևելք դառնալ, ինչպե՞ս վարվեմ, հայր իմ:

Պատ. -Նստած ես, թե քայլում ես, կամ թե զբաղված ես որևէ բանով, ուտում ես կամ մարմնական պետքերդ հոգալու համար որևէ այլ բանով ես տարված, արևելք ես նայում, թե՛ արևմուտք, մի երկմտիր աղոթել, քանզի մեզ պատվիրված է անդադար և ցանկացած տեղում աղոթել: Սուրբ Գիրքն ասում է. «Ծանապարհ տվեք Նրան, Ով նստում է արևմուտքում, և Տեր է անունը Նրա» (Սաղմ.67:5): Իսկ դա վկայում է, որ Աստված ամենուր է: Եթե անգամ գլուխդ ծածկված է, մի թող աղոթելը, այլ միայն հետևիր, որ այս բանն առանց քամահրանքի արվի (Բարսիլիսկոս Մեծ):

48. Հարց. -Եթե աղոթքի ժամանակ միտքս շեղվի՞ ի՞նչ անեմ:

Պատ. -Երբ աղոթում ես, և միտքդ շեղվում է, ապա ջանա նույն աղոթքը կրկնել այնքան ժամանակ, քանի դեռ առանց մտացրիվության չես աղոթել: Եվ աշխատիր միտքդ արթուն պահել, որպեսզի չշեղվես: Եթե այս մտացրիվ վիճակը երկար տևի, ապա գոնե աղոթքի վերջում հանդիմանիր ինքդ քեզ և թախանձագին խնդրիր, ասելով. «Տեր Աստված, ողորմիր ինձ և ներիր իմ բոլոր մեղքերը»: Եվ աղոթքի ժամանակ գործած բոլոր մեղքերիդ և մտացրիվությանդ համար թողություն կստանաս (Բարսիլիսկոս Մեծ):

49. Հարց. -Աղոթիր ինձ համար, հայր իմ, և ասա ինձ, թե ինչ է սա նշանակում, երբ ուզում եմ սաղմոսերգել, ծուլություն եմ զգում, և առավել ևս այն ժամանակ, երբ ցուրտ է: Այդ իսկ պատճառով, արդեն քանի գիշեր նստած եմ սաղմոսերգում և աղոթում: Վախենամ, ծուլության արդյունք լինի: Այսպես, հայր իմ, արժանի արա քո խրատին և աղոթիր, որպեսզի անեմ այն ամենը, ինչ որ կպատվիրես ինձ:

Պատ. -Բոլորին պատվիրված է միմյանց համար աղոթել (Հակ. 5:16): Իսկ ի՞նչ է տեղի ունենում: Իմացիր, հաճախ դիվային հարձակման արդյունք է դա, կամ էլ մարմնական տկարության և թուլության արգասիք է: Եվ այսպես, եթե դու պետք է նստած սաղմոսերգես կամ նստած աղոթես, սրտաբուխ արա, և դա չի խանգարի, որ ծառայությունդ Աստծուն հաճելի լինի: Քանզի նա, ով կանգնած է աղոթում, սակայն մտացրիվ, ապարդյուն է աշխատում: Թող Աստված օգնական լինի քեզ, եղբայր (Բարսիլիսկոս

Մեծ):

50. Հարց. -Ո՞րն է ինձ ավելի օգտակար. «Հիսուս Քրիստոս, Աստծու Որդի, ողորմիր ինձ» աղոթքի մեջ մարզվե՞լ, թե՞ սերտել Սուրբ Գիրքն ու սաղմոսերգել:

Պատ. -Հարկ է երկուսն էլ հերթազայելով անել՝ գրվածքին հետևելով.

«Որ հարկ էր այս անել և այն չթողնել» (Մատթ. 23:23) (Բարսիլիսկոս Մեծ):

51. Հարց. -Երբ ես ծառայության ժամանակ աչքերս փակում եմ, մըտքերս ժողովվում եմ: Բայց արդյո՞ք սա լավ է: Միգուցե, կողքիս կանգնած իմ եղբայրներին տարօրինակ թվա, և նրանք գայթակղվեն:

Պատ. -Եթե դու իսկապես կենտրոնանում ես, երբ ծառայության ժամանակ հանում Աստծու փակում ես աչքերդ, ապա ոչ մեկի վրա ուշադրություն մի դարձրու, անգամ եթե դա տարօրինակ թվա որոշ եղբայրների (Բարսիլիսկոս Մեծ):

52. Հարց. -Երբ աշխատանքի ժամանակ միրի մեջ ենք ընկնում, որը խոչընդոտում է մեր կատարելիք գործին, պե՞տք է արդյոք վեր կենալ, թե շարունակել նստած մնալ և գործն անել:

Պատ. -Պետք է ոտքի կանգնել և Տիրոջն աղոթել, և Տերը միրին աղոթքով կփոխարինի (Բարսիլիսկոս Մեծ):

53. Հարց. -Ինչպե՞ս կարող է մարդը հարատև աղոթել:

Պատ. -Երբ որևէ մեկը մենության մեջ է, ապա պետք է վարժանքներ անի՝ սաղմոսերգելով, բարձրաձայն ու սրտաբուխ աղոթելով: Իսկ եթե որևէ մեկը առևտրի է գնացել, կամ առհասարակ ուրիշ մարդու հետ է, ապա կարիք չկա բարձրաձայն աղոթելու, այլ միայն մտքով: Եվ այս պարագայում պետք է ուշադրությունը չբևեռել շրջապատի վրա, որպեսզի միտքը չշեղվի և չընկնի թշնամու որոգայթը (Բարսիլիսկոս Մեծ):

54. Պետք է խուսափել թշնամու այն խորամանկությունից, երբ նա աղոթողից աննկատ՝ աշխատում է հափշտակել աղոթքը՝ ոչ ճիշտ տրամադրվածության մեջ օգնելով նրան: Շատ նրբորեն է սրտի մեջ մղում այն միտքը, թե մեր աղոթելով Աստծո համար մի կարևոր և հաճելի բան ենք անում: Աստված մեր աղոթքների կարիքը չունի, մենք ենք, որ աղոթքի կարիք ունենք, նման այն բանին, որ աղքատը կարիք ունի հարուստից ողորմություն հայցելու, և ոչ թե հարուստը աղքատից (Բարսիլիսկոս Մեծ):

55. Հարց. -Հայր, արդյոք օգուտ կա՞ այն բանից, երբ ես աղոթում եմ կամ սաղմոսերգության վարժանքներ անում և չեմ զգում իմ արտասանած բառերի գորությունը սրտիս անզգայության պատճառով:

Պատ. -Թեպետև չես զգում (քո արտասանածի ուժը), բայց դներն զգում են, լսում և դողում են: Եվ այսպես, մի դադարիր սաղմոսերգության վարժանքներ կատարելի, աղոթել: Եվ քիչ-քիչ, Աստծո օգնությամբ, քո անզգայությունը կփոխարկվի փափկության (Բարսիլիսկոս Մեծ):

56. Հարց. -Իսկ եթե ընթրիքի սեղանի շուրջն աշխարհիկ մարդիկ լինեն, ինչպե՞ս վարվեմ, երբ ընթրիքի սեղանն օրհնող չլինի:

Պատ. -Աշխարհիկ մարդկանց էլ չէր խանգարի ուսելուց առաջ գոհանալ Աստծուց, քանզի ուղղակի Աստծուն հիշելով էլ կերակուրը սրբվում է:

Սակայն այս օրհնությունը նույնը չէ, ինչ քահանայի օրհնությունն է: Առաջինը միայն փառաբանում և հիշատակում է Աստծուն, որովհետև հարկ է բոլորը հիշեն ու փառք տան Նրան: Հետևաբար, լավ է աշխարհիկ մարդիկ էլ նույնն անեն, եթե իրենց մեջ չկա մեկը, որ օրհնի սեղանը (Բարսիլիսկոս Մեծ):

57. Հարց. -Արդյո՞ք լավ է եկեղեցի գնալ գիշերը (հսկում անելու), թե տանը կարեցածի չափով հսկում անել:

Պատ. -Լավ է տանը հսկում անել, քանի որ եկեղեցում հաճախ զրույցի են բռնվում (Բարսիլիսկոս Մեծ):

58. Թեպետև բարձրանաս առաքինության բոլոր աստիճաններով, աղոթի՛ր մեղքերիդ թողության համար, ինչպես լսեցիր Պողոսից, որն աղաղակում էր մեղավորների մասին, որոնց առաջինը ես եմ (Ա Տիմ. 1:15) (Հովհաննես Սանդուղք):

59. Ա՛յլ է աղոթքի աղտեղությունը, ա՛յլ՝ խանգարումը, ա՛յլ՝ գողացումը և ա՛յլ՝ բիծը: Աղոթքի աղտեղությունը Աստծո առջև կանգնելն ու չար խորհուրդներ խորհելն է: Խանգարումն աղոթքի ժամին սնուտի հոգսերից գերված մտքերն են: Գողացումը՝ միտքն անզգայացնելն (անուշադիր դարձնել, թմրեցնել, բթացնել) ու ցրելն է: Եվ բիծն այն ժամին մեզ մերձեցած ունայն խորհուրդներն են (Հովհաննես Սանդուղք):

60. Սրտում վառվող սիրո հուրը հարություն է տալիս աղոթքին, իսկ երբ հարուցյալ աղոթքը երկինք է ելնում, աստվածային լույսն իջնում է հոգու տաղավարը (Հովհաննես Սանդուղք):

61. Երբ գնաս կանգնելու Տիրոջ առջև, թող քո հոգու հարսանյաց հանդերձն անհիշաչարությամբ հյուսված լինի, ապա թե ոչ՝ նման աղոթքից ոչ մի օգուտ չկա (Հովհաննես Սանդուղք):

62. Մեր մաղթանքների գործվածքներում ամենից առաջ հոժարությամբ գրենք զոհությունը, երկրորդ տողում՝ խոստովանությունը, երրորդում՝ հոգու և զգայարանների զղջումը, ապա միայն խնդրվածքները ծանուցենք ամենքի Տիրոջն ու Աստծուն, քանի որ աղոթքի ընտրված կարգն այս է՝ ինչպես ոմն եղբոր ծանուցվեց Աստծո հրեշտակից (Հովհաննես Սանդուղք):

63. Եթե քաղցրանում է աղոթքը և կամ զղջում ես ապրում այդ պահին աղոթքի խոսքերում, մի դադարեցրու և շա՛տ կրկնիր խոսքը, քանզի այդ պահին մեր պահապանը (պահապան հրեշտակը) մեր աղոթակիցն է (Հովհաննես Սանդուղք):

64. Աղոթքի սկիզբն ընդդիմակաց խորհուրդների արտաքսումն է, միջինը՝ միտքն ու ուշադրությունը սևեռելը, իսկ աղոթքի կատարելությունը՝ առ Աստված հափշտակությունն է (Հովհաննես Սանդուղք):

65. Ինչպես երկրավոր թագավորին գարշելի է նա, ով իր առջև կանգնած, երեսը շուռ տված, խորհրդակցում է թագավորի թշնամիների հետ, այնպես էլ Տիրոջը գարշելի է նա, ով կանգնած է աղոթելու և սրտում պիղծ խորհուրդներ է գործում ու խորհում (Հովհաննես Սանդուղք):

66. Երբ թշնամիներդ մոտենում են, ընդդիմացիր նրանց և անդադար

աղաչի՛ր Տիրոջը և վստահ եղի՛ր, որ բնավ չես չարչարվի, քանի որ իրենք իրենց անձերով կհեռանան քեզանից, քանզի չար հոգիները չեն կանենում քեզ աղոթքների շնորհի պսակազգեաց տեսնել, որոնք կատարում ես նրանց պատերազմների պատճառով, այլ քո աղոթքների հրից սաստկապես գանահարված, փախստական կլինեն (Հովհաննես Սանդուղք):

67. Սքափությամբ քննիր քեզ աղոթքից հետո, և կտեսնես, որ աղոթքի ժամանակ մեր կողմից պարտված դևերի ոհմակները ջանում են աղոթքից հետո պղծել մեզ անմաքուր անուրջներով (Հովհաննես Սանդուղք):

68. Ես տեսել եմ, որ շատերը սրտանց աղոթել են իրենց սիրելիների համար՝ առաջնորդվելով վավաշտության դևից, և կարծել են, թե կատարում են հիշատակի և սիրո օրենքը (Հովհաննես Սանդուղք):

69. Երբ աղոթքի ժամանակ թեթևություն, ջերմություն և քաղցրություն ես զգում, դա ցույց է տալիս, որ Աստված մխիթարում և պարգևատրում է այդ ջանքի համար, իսկ եթե ծանրություն, մռայլություն և չորություն, ապա դա նշանակում է, որ Աստված մաքրում և զորացնում է հոգին և այդ օգտակար համբերությամբ փրկում նրան, պատրաստելով խոնարհության հաղորդ լինելու գալիք փորձություններին (Աբբա Դիադոխ):

70. Քեզ համար որպես քաղցր աղոթքի պահ ընտրիր մշտական գիշերային հսկումը, որով բոլոր հայրերը ձերբազատվեցին հին մարդուց և հասան մտքի նորոգման:

Այդ գիշերային ժամերին անձը զգում է անմահ կյանքը, թոթափում է իր վրայից խավարային հանդերձը և ընդունում Սուրբ Հոգուն (Հարանց վարք):

71. Ուշադիր եղի՛ր քո հանդեպ և կտեսնես հետևյալը:

Երբ Աստված ողորմություն է անում անձիդ և ուղարկում աղոթքի շնորհ, այնժամ սատանան հիշեցնում է որոշ առօրեական գործեր, ասելով, որ սրանք կարևոր գործեր են, դրանք հիմա արա կամ գնա այցելության եղբորդ, որովհետև նա հիվանդ է:

Եվ նմանօրինակ բաներ է մտցնում մեր միտքը: Չարը այս ամենը անում է, որպեսզի արգելք հանդիսանա աղոթքով և քաղցր լացով հագենալու:

Եթե մարդ գլխի է ընկնում, որ դրանք լոկ սատանայական խարդավանքներ են, և մերժում է այդ մտքերը, և էլ ավելի ամրապնդվում աղոթքի մեջ, այդ դեպքում անմիջապես կհետևի փորձություն մարդկանց կամ դևերի կողմից, որոնք աղոթքից հետո կաշխատեն նրան օգել բարկության և խռովության մեղքի մեջ, քանի որ բարկությունը և ցասումը դուրս են մղում լացն ու խանդաղատանքը և արմատահան են անում հեզությունը մարդու անգուց:

Երբ նստած ես լինում սենյակումդ, պատահում է, որ չար մտքերը գազանի պես հարձակվում են վրադ, դու մի՛ երկնջիր նրանցից, այլ արիաբար կանգնիր և ջանադիր աղոթի՛ր Աստծուն, կամ աղոթելով զբոսնիր բակում, քանի որ նրանք չեն դիմանում աղոթքին և իսկույն չքվում են (Հարանց Վարք):

72. Անդադար աղոթել չի նշանակում ամբողջ

որը կանգնել սրբապատկերի առջև և աղոթել, թեև դա անհրաժեշտ է որոշակի ժամերի: Այլ անհրաժեշտ է բոլոր գործերի ընթացքում աղոթել: Այսպես, զբաղվելով կենցաղային գործերով, կարելի է աղոթել տեսանելի առարկաների միջոցով՝ միտքը տեղափոխելով անտեսանելիներին: Այսպես օրինակ, նայում ես կրակին, ասա. «Փրկեա զիս, Տէր, ի հրույն հաւիտենից», լվանում կամ մաքրում ես որևէ առարկա, ասա մտովի. «Առաւել լուս զիս ի յանօրէնութիւնէ իմնէ, եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս»: Ճաշակում ես ուտելիք կամ խմում ես որևէ բան, հիշիր Տիրոջը և ասա. «Ետուր ըմպել Քեզ զլեղին եւ զքացախ ի ծարաւին»: Պառկում ես քնելու՝ հիշիր, որ Տերը զլուսն դնելու տեղ չուներ: Արթնանալիս, երբ տեսնում ես լույսը՝ ասա. «Առաւուտ լուսոյ, Արեգակն արդար առ իս լոյս ծագեա»: Հագնվելիս՝ «Ձգեցո զիս զպատմունճանն գառաջին, զոր մերկացայ մեղօք»: Սագերդ սանրելիս, հիշիր Փրկչի չարչարանքները, երբ հռովմեացի զինվորները Նրա մաքրամաքուր մագերն էին քաշում, երբ տանում էին խաչելության և ասա. «Փառք Սուրբ Խաչիդ, Ալելուիա, Սուրբ չարչարանացդ, Ալելուիա»: Լվացվելիս խաչակնքիր՝ վռնդելու համար ջրից չարի ներգործությունները, նաև ասա. «Տողեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղեց, լուս, եւ քան զծիւն սպիտակ եղեց»: Դուռը բացելիս. «Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց, դասեցոյ վերնոցն»: Երբ լուսավորում ես տունդ՝ ասա. «Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանավորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոց ի կոչման աւուրն», երբ կհանդիպես ավազաթմբի՝ ասա. «Այլ եղեր ապաշխարութիւն վասն իմ՝ մեղավորիս, զի մեղայ ավելի, քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ»: Երբ կտեսնես մի որևէ փոս տեղ, ասա մտովի. «Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր, եւ մի՛ յիշեր զչարիսն իմ եւ մի պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք»: Քնից առաջ հիշիր հավիտենական մահվան մասին:

Եվ այսպես, սովորեցրու ինքդ քեզ նյութեղենից անցնել հոգեղենին և կամաց-կամաց կսովորես հարատև աղոթքի մեջ մնալ:

73. Սաղմոսներ կարդալիս, երբ խոսվում է թշնամիների մասին, պետք է նկատի ունենալ աներևույթ թշնամիներին, խորամանկ, չար ոգիներին, որոնք անհամազստացնում են մեզ մեղսալից խորհուրդներով և դրդում են մեզ դեպի մեղքը:

74. Աղոթքը և Աստծո մասին հիշողությունը միմյանց համազոր են: Կարելի է քայլել կամ ինչ-որ բան անել և մտածել Աստծո մասին. սա նույնպես աղոթք է (Հովհաննես Միայնակյաց):

75. Մի անտեսեք սաղմոսերգությունը, որովհետև սաղմոսները վանում են հոգուց նեճ ոգիներին և ներբնակեցնում Սուրբ Հոգուն («Հարց և պատասխան» գրքից):

76. Հրեշտակները, ննջեցյալ արդարները աղոթում են ողջերի համար և այդ իսկ հիմքն է սրբոց բարեխոսության: Այս մտքով կարելի է մեկնել նաև Հայտնության այն խոսքը, ուր նկարագրված են քսանչորս երեցները,

որոնք իրենց ձեռքերում ունեն «խնկով լի ոսկե բուրվառ, որ սրբերի աղոթքներն են» (Հայտ. 5:8) (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան):

77. Պետք է առաջ գնալ աղոթքի մեջ և տեղում չդուրսնալ, եթե ոտքի վրա կանգնած էիր աղոթում, հիմա ծունկի վրա աղոթիր: Եթե առաջ պահեցողությամբ էիր աղոթում, հիմա ծոնապահությամբ էլ աղոթք արա: Առաջ եթե ցերեկներն էիր աղոթում, հիմա գիշերներն էլ աղոթիր, մինչև որ Քրիստոսի ասած փոփոխություններն ընդունես սրտիդ մեջ: Քանի որ այս բանից կախված է հանդերձյալ աշխարհի մեջ ունենալիք վիճակդ: Ահա այս սրտով ու եռանդով սկսիր աղոթել և քիչ ժամանակ անց պետք է զգաս այդ երանելի փոփոխությունները քո սրտի մեջ (Տեր Գաբրիել քահանա):

78. Ըստ սուրբ վարդապետների ինչպես որ երկիրը երկմքի կարիքն է զգում, որ ընդունի նրանից ցող, անծրև, ջերմություն և այլն, որովհետև առանց դրանց գոյատևել չի կարող, այնպես էլ մարդը կարոտ է աստվածային պես-պես շնորհների և օգնությունների, առանց որոնց ասես մեռած է հոգով, թեպետ և մարմնով կենդանի լինի: Ուրեմն՝ ինչպես որ դիմում են աղքատները հարուստներին, հիվանդները՝ բժիշկներին, թույլերն՝ ուժով կարողներին և ծարավներն՝ աղբյուրին, այնպես էլ մարդն ամեն ինչի կարոտ լինելով, ըստ հոգու և մարմնի անզոր, պարտավոր է միշտ դիմել Աստծուն ու մնալ աղոթքի մեջ և Նրանից օգնություն խնդրել (Սիմոն Երևանցի կաթողիկոս):

79. Աղոթքների մեջ Տերունական աղոթքից ավելի մեծը չկա, այսինքն՝ «Հայր մերից», որ նույն Ինքը Քրիստոս՝ մեր Տերն ուսուցանեց, որից հետո՝ սաղմոսները, որ Դավիթ մարգարեն գրեց Սուրբ Հոգու ազդմամբ, ապա՝ եկեղեցական աղոթքներն ու երգերը, որ սուրբ հայրերը սուրբ Հոգու շնորհով խորհրդաբար կարգեցին:

Եվ թեպետ աղոթքները հույժ բազում են, բայց նրանց մեջ արեգակի պես փայլում է մեր սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթական մատյանը: Ազդու է և պարզ սուրբ Շնորհալու «Հավատով խոստովանիմը», որը թե՛ տղամարդ և թե՛ կին պարտավոր են ուսանել և նրանով առ Աստված աղոթել ամեն օր, ուր էլ գտնվեն (Պողոս Պատրիարք):

80. Մարմնական տրտմություններն ու կենցաղի հոգսերը խափանում են աղոթքի զորությունը և անպտուղ դարձնում այն: Իսկ մեղքերի համար զղջացող սրտից ելնող տրտմությունն՝ ապաշխարության կանոնի հետ օգնում է աղոթքի զորությանը և արդյունավորում շնորհների պարգևները (Պողոս Պատրիարք):

81. Առանձնական աղոթքը հույժ օգտակար է, բայց անհրաժեշտ է նախ հրապարակայինը կատարել եկեղեցում և ապա՝ առանձնականը: Իսկ եթե որևէ մեկը ծուլության պատճառով չգնա եկեղեցի և համարի, որ առանձնական աղոթքով ազատվում է պարտքերից, մեծապես խաբվում է, քանզի եթե կա եկեղեցին, և ինքը կարող է գնալ այնտեղ, ապա զանց առնելով մեղանչում է (Պողոս Պատրիարք):

82. Որքան մարդիկ օտարանում են աղոթքից, այնքան Աստծո շնորհը

հեռանում է նրանցից՝ մինչև մեծամեծ մեղքերի մեջ ընկնելը, որ հոգու մահն է (Պողոս Պատրիարք):

83. Ով չի աղոթում Աստծուն, անբաններից էլ անբան է, անարժան Աստծո խնամքին, ապերախտ և ապաշնորհ՝ իր Բարերարի հանդեպ, քանզի ստանում է բարիքներն ու վայելում և չի ճանաչում բարիքները Տվողին ու չի փառավորում (Պողոս Պատրիարք):

84. Աղոթքն անպարտելի զենք է դևերի դեմ պատերազմում, և քանզի դևերը գիտեն, թե աղոթքով պարտվում են մարդկանցից, այդ իսկ պատճառով առավելապես ջանում են խափանել կամ անպտուղ դարձնել մարդկանց աղոթքը:

Ուստի,, ով աղոթելիս ինչ-ինչ ձանձրույթ և նեղություն է զգում, թող գիտենա, այն դևերի որոգայթն է, և ոչ մի դեպքում չթուլանա աղոթելուց, այլ առավել ջանք անելով զորանա՝ օգնություն հայցելով Տիրոջից: Եվ Աստված, որ մերձ է նրանց, ովքեր փշրված սրտով են աղոթում Իրեն, անմիջապես օգնության կհասնի, իսկ դևերն իսկույն կհալածվեն ու կչքվեն (Պողոս Պատրիարք):

85. Աղոթքի մեջ կարևոր է և օգտակար դիմել Աստծո սուրբերին՝ բարեխոսելու առ Աստված, մանավանդ, սուրբ Աստվածածնին: Ուստի և Եկեղեցին իր բոլոր պաշտամունքներում կարգել է արժանավոր մաղթանքներ սուրբ Աստվածածնին՝ ապավինելով նրա անդամալի բարեխոսությանը (Պողոս Պատրիարք):

86. Աղոթելիս պետք է խնդրել, որ Աստված մեզ ջերմեռանդության շնորհ տա, քանզի ինչպես խունկն առանց հրի չի բուրում իր հոտը, նույնպես էլ աղոթքն առանց ջերմեռանդության արդյունք չի տալիս (Պողոս Պատրիարք):

87. Երբ աղոթում ես, նպատակդ որոշիր, ապա սաղմոսիր (Եզնիկ Կողբացի):

88. Եթե մեկից որևէ բան ես ստանում, հիշիր սովորական աղոթքի մեջ (Եզնիկ Կողբացի):

89. Աղոթականին պետք չեն շատ խոսքերի հյուսվածքներ. մաքսավորը մի բարբառ արձակեց, և նրա աղոթքն ընդունելի եղավ, և մեղքերի բազմաքանքար բեռները թեթևացրեց (Հովհան Մանդակունի):

90. Շատերը բազում բարիքներ ստացան աղոթքի միջոցով և հաճելի եղան Աստծուն, որով մեղքերի թողություն և հոգիների փրկություն գտան: Եվ մանավանդ նրանք, ովքեր արտասուքներով և տնանկներին գթալով են աղոթում, ոչ միայն մեղքերի թողություն են գտնում, այլև ստանում են մարմնի խնդրանքները և երկնքի բարիքները (Հովհան Մանդակունի):

91. Ահա Եղիայի աղոթքը երկինքը փակեց ու բացեց, Դավթի աղոթքը հրեշտակի սուրը կանգնեցրեց, Հովնանի աղոթքն իրեն կենդանի հանեց կետի փորից, քանաճառու աղոթքը հալածեց դևին իր դատեր միջից, աղոթքը սրբեց պոռնիկներին, բժշկեց հիվանդներին, մաքրեց բորոտներին, լուսավորեց կույրերին և արդարացրեց մեղավորներին (Հովհան Մանդակունի):

92. Ով քե՛ն ունենա ընկերոջ նկատմամբ, անհնար է, որ նրա աղոթքները ելնեն առ Աստված (Հովհան Մանդակունի):

93. Եկեղեցու ներսում ծունկի ենք եկել աղոթելու համար, իսկ մեր միտքը շրջում է՝ բազում ցնորքներով թափառելով դրսում: Քանզի աղոթելիս խորհում ենք տան և անդաստանների հոգուերի մասին. աղոթելիս հաշվում ենք դաշտերի արդյունքները և այգիների պտուղները, թե քանի աման կլինի իմ հացը կամ քանի սափոր՝ գինին. նաև աղոթելիս մտաբերում ենք հոտերն ու նախիրները, թե քանի արջառ կամ քանի ոչխար կա. այնտեղ նաև հիշում ենք վարձկանների գործն ու վարձը, թե՛ ափսոս, որ այս կամ այն ելնում է իմ տանից: Այլև աղոթելիս հիշում ենք նույնիսկ ընկերոջ դատաստանները և իսկույն դատում Աստծո առաջ. և մինչդեռ աղոթքի ենք կանգնած, տակավին նաև ամբաստանություններ ենք խորհում եղբոր մասին և եկեղեցուց դեռ չարձակված, սկսում ենք ուսիսին ամբաստանել՝ ասես լեղիով դառնացնելով աղոթքի քաղցրությունը: Եվ այնպես է սատանան մեր միտքը հափշտակում, որ աղոթելիս մինչև իսկ աղտեղի խորհուրդներն է հիշեցնում: Աղոթելիս հաշվում ենք փողերի վաշխերը և տոկոսները, աղոթելիս հիշում ենք ընկերոջ նկատմամբ թշնամանքը և նախանձը: Այս ամենն արժանի չէ՝ արդյոք Աստծո ահեղ բարկությանը և գեհեմի բորբոքված բոցին, բազում տանջանքների և անճշյուլ խավարի, որովհետև այսչափ անօրենություններ ենք գործում Աստծո առաջ և, դատապարտությամբ պատուհասված դուրս ելնում աղոթքից և ո՛չ թե որպես աղոթականներ պատվում, այլ որպես հայիոյիչներ և արհամարհողներ՝ պարտավորվում և պատժվում (Հովհան Մանդակունի):

94. Այսպես պետք է հուսալ և հավատալ սուրբերի ժողովին և բարեխոսություններին՝ որպես քահանաների, որոնք կանգնած են Նրա առջև, ով նստած է Հոր աջ կողմում, և թող յուրաքանչյուրին աղոթքով պատարագ ընծայեն՝ կենդանի և վախճանված հավատացյալ ժողովրդի կամա և ականա սխալների հաշտության համար (Գրիգոր Լուսավորիչ):

95. Ամենուր հոգևորապես, անխափան կատարի՛ր աղոթքի ծառայությունը՝ թե՛ տանը նստած, թե՛ ճանապարհ գնալիս, թե՛ աշխատելիս, թե՛ ննջելիս և թե՛ արթնանալիս (Գրիգոր Լուսավորիչ):

96. Դու աղոթում ես, որ թողնվի քեզ և խոստովանում, որ դու ևս թողնում ես: Խորհիր քո մտքում նախ թողնո՞ւմ ես դու, և սուտ մի՛ լինիր Աստծո առաջ՝ ասելով՝ թողնում եմ, բայց չես թողնում: Մի՞թե մարդ է քեզ համար Աստված, որ ստում ես Նրան: Եթե մարդ իր ընկերոջ դեմ մեղք է գործում, Տիրոջից է խնդրում քավություն, ապա եթե Աստծո դեմ մեղք գործի, ումի՞ց խնդրի քավություն: Մի՞ դատապարտիր անձո՞ք քո աղոթքներով (Հակոբ Օժբնա Չայրապետ):

97. Աղոթքի ժամանակ հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես, որպեսզի նրանց հետ փառավորես Աստծուն. ինչպես որ դու նրանց հետ ես միաբանվում, նույնպես էլ նրանք քեզ հետ երգակից են լինում աղոթքների և օրհնությունների ժամանակ (Եղիշե):

98. Մի՛ շտապեք (աղոթքի ժամանակ) մարմնավոր աչքով տեսնել Աստծուն, որպեսզի տարածանա ձեր սիրտը (Եղիշե):

99. Եթե Պողոսն աշակերտների աղոթքների կարիքն ուներ, որչափ առավել ևս մենք կարիք ունենք միմյանց համար աղոթելու: Ուրիշների համար աղոթելով, ուրիշների աղոթքները կշահենք մեզ համար (Խոսրով Անձևացի):

100. Աղոթքն առավել հարազատ և մերձավոր է Աստծուն, քան ամեն մի առաքինություն, քանզի բոլոր մյուսները որպես հանդերձանք և պատրաստություն են Աստծո մոտ մուտք գործելու համար, իսկ սա դեմ-հանդիման խոսակցություն է Աստծո հետ (Գրիգոր Նարեկացի):

101. Ուսուցանելիս ասաց. «Մի՛ եղեք շատախոս հեթանոսների պես» (Մատթ. 6:7), և որպեսզի չկարծեն, թե երկար աղոթելն անշնորհ բան է, նույնիսկ Ինքն, որ աղոթքի կարիք չուներ, ողջ գիշեր աղոթում էր Աստծուն, որպեսզի սովորենք, թե շատախոսություն է ոչ թե բազում աղերսները, այլ՝ դատարկ և անհաճ բարբառելը (Իգնատիոս վարդապետ):

102. Աղոթենք անդադար, քանզի սա է անուշահոտ խունկը, որ ծխվում է Աստծո առաջ ոսկե բուրվառով, որն էլ հաճելի է Աստծուն: Աղոթքով միշտ բախենք Արարչի գթառատության դուռը: Աղոթքը սանդուղք է երկրից մինչև երկինք, լույս է խավար ճանապարհին, մնայուն պաշար է մշտնջենավոր կյանքի համար: Ուստի ջանանք սուրբ մտքով արիաբար աղոթել այս կյանքում, որպեսզի սրանից հետո արժանանանք անպատում բարիքներից ու հավիտենական կյանքին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ (Վարդան Այգեկցի):

103. Աստված կամենում և ուրախանում է, երբ մենք աղոթում ենք ողջ աշխարհի համար՝ արդարների ու մեղավորների, կենդանիների, մեռելների, հեռավորների ու մերձավորների, առավել ևս՝ նրանց համար, ովքեր չարիք են կամենում կամ գործում մեր նկատմամբ (Վարդան Այգեկցի):

104. Աղոթքով մարդ զրուցում է Աստծո հետ և հավասարվում հրեշտակներից: Առավել ևս այն ժամանակ, երբ ջերմ արծաթափայլ արտասուքը բխելով իջնում և լվանում է աչքն ու մորուքը և միևնույն ժամանակ ջնջում մարդու ներսում եղած մեղքերի շարավը: Եվ սիրտն սկսում է փղծկալ և ճմլվել և բորբոքվել Աստծո սիրո կրակով: Ապա միտքը, համբառնալով առ Աստված, տեսնում է հանդերձյալ աշխարհն ու արդարների հանգիստը (Վարդան Այգեկցի):

105. Մեծ գորություն ունի աղոթքը, մանավանդ՝ գիշերային աղոթքը: Պետք է միշտ հիշել Աստծուն, մանավանդ՝ գիշերը, երբ միտքը բաժանվում է զգայարաններից: Թեև ցերեկն էլ ենք հիշում, սակայն այլ հոգսեր մեր մեջ մտնելով, ջնջում են Նրա հիշատակը: Իսկ գիշերը դուրսին է Նրա մասին մտածելը, ինչպես ասում է Դավիթ մարգարեն. «Ինչ որ ասեք ձեր սրտերում, գիշերն անկողնում զղջացեք» (Քարսեղ Մաշկարցի):

106. Ինչպես խունկը հրին չհափվելով անուշ հոտ չի բուրում, այնպես էլ

աղոթքի խունկը՝ սրտի սիրո ջերմությանը չհըպվելով, հաճելի չէ Աստծուն: Եվ ինչպես խնկի ծուխը դրսից երևում է, իսկ անուշ հոտը՝ ո՛չ, այնպես էլ աղոթքի խոսքերը, առանց սրտի բաղձանքի, ծխի բարդում են միայն և ընդունելի չեն (Գրիգոր Տաթևացի):

107. Աղոթքը հոգու կենդանության նշանն է, ուստի և պետք է միշտ եռանդուն լինել աղոթելու մեջ, իսկ եթե աղոթքը դադարում է, նշանակում է, թե մեռած է հոգին (Գրիգոր Տաթևացի):

108. Մեր բոլոր գործերն աղոթքներով հաջողվում են և կատարվում, քանի որ ամեն գործում մարդ օգնականի կարիք է զգում, և երբ աղոթում ենք, Աստված օգնական է լինում լինի վաստակ, թե՛ ձեռագործ, թե՛ ճանապարհ և այլն: Իսկ եթե չենք աղոթում, սատանան ամեն գործում հակառակում և խանգարում է (Գրիգոր Տաթևացի):

109. Չպետք է ննջել աղոթքի տեղում, այլ՝ արթուն մնալ, ըստ այնմ՝ «Արթուն կացեք, քանի որ չգիտեք...»: Եվ եթե այնտեղ ննջում ես, ի՞նչ տարբերություն տանը ննջելուց, եթե քնի համար ես գալիս՝ ավելի լավ է չգաս (Գրիգոր Տաթևացի):

110. Չպետք է առանձնական աղոթքն աղաղակելով ասել, այլ՝ սրտում գոչել, ինչպես Մովսեսը ծնկեց երեսն ի վայր և սրտում աղոթեց. և այս մասին է ասում. «Ինչո՞ւ ես աղաղակում ինձ» (Ելից. 4: 5) (Գրիգոր Տաթևացի):

111. Եթե միայն մեր անձերի համար խնդրենք, անձնասեր և անողորմ կլինենք, ուստի անհրաժեշտ է նաև այլոց համար աղոթել: Իսկ վերջինիս օգտակար լինելը ցույց է տալիս առաքյալի խոսքը. «Արդարի խոսքը հույժ գորավոր է օգնելու համար»: Առաջին հերթին պետք է խնդրել թագավորների և աստվածասեր իշխանների համար: Որպեսզի խաղաղությամբ կատարենք մեր աստվածպաշտությունը: Պետք է աղոթել նաև հոգևոր առաջնորդների համար: Պետք է հայցել նաև խաղաղություն և միաբանություն՝ համայն աշխարհի և Եկեղեցու համար, օդի բարեխառնության, անձրևի ու բերքի առատության, ինչպես նաև պատուհասների և ամեն տեսակ խռովությունների վերացում մարդկանց միջից (Գրիգոր Տաթևացի):

112. Պետք է խնդրել հավատացյալ մեռելների համար, քանզի եթե աղքատներն ու չբավորները կարոտ են ողորմության, առավել ևս՝ նրանք, որոնք զրկվել են բոլոր բարիքներից ու հայտնվել անճարության մեջ: Եվ եթե հաշմանդամներին ենք ողորմություն անում, որքա՞ն առավել պետք է նրանց ողորմել, որոնք ողջ մարմինն է ապականվել ու տարածվել հողի մեջ: Եվ եթե մարդկանց ձեռքը գերի ընկածներին ենք ողորմում, որքա՞ն առավել պետք է նրանց ողորմել, ովքեր մեղքերի պատճառով մատնվել են սատանային: Եվ քանի որ իրենք չեն կարող ապաշխարել մեղքերի համար, և մեռյալներն էլ չեն կարող օգնել մեռյալներին ու տալ խնդրածը (ինչպես որ Աբրահամը հարուստին մի կաթիլ ջուր իսկ չտվեց), ուստի միայն մարդասեր և գթած Աստծո ողորմությունն են ակնկալում և կարո-

տում ողջերի աղոթքներին, ինչպես երանելի Յոհաննիս
էր ասում նրանց անունից. «Ողորմե՛ք, ողորմե՛ք ինձ, բարեկամներ, քանզի Տիրոջ ձեռքը դիպավ ինձ»: Հետևաբար, մենք պետք է ողորմենք և աղոթենք նրանց համար, ովքեր հույսով և հավատով մնջեցին ի Քրիստոս և աշխարհի սխալներից ինչ-ինչ բաներ մնացին նրանց մոտ (Գրիգոր Տաթևացի):

113. Նաև նրանց համար պետք է մեղքերի թողություն խնդրել, ովքեր հանկարծակի մեռելով, չկարողացան խոստովանել իրենց մեղքերը և սուրբ պսակի արժանանան: Եվ այսպես, պետք է հիշել սուրբերին ու արդարներին որպես բարեխոսների, իսկ մեղավորներին՝ նրանց համար ներում խնդրելով: Եվ առհասարակ, պետք է հիշել բոլորին՝ թե՛ ծանոթներից, թե՛ անծանոթներին, թե՛ մեր խնամքին հանձնված երախտավորներին՝ թե՛ սուրբ պատարագի ընթացքում, թե՛ ամենօրյա աղոթքներում (Գրիգոր Տաթևացի):

114. Պետք է խնդրել թշնամիների համար՝ ըստ Տիրոջ հրամանի. «Սիրելի ատելիներին և աղոթել թշնամիների համար»: Եվ պետք է գիտենալ, որ թշնամիները երեքն են. նախ՝ սատանան, որ ատելի է թե՛ Աստծո, թե՛ մեզ համար. երկրորդ՝ անհավատներն ու մեղավորները. և երրորդ՝ մեր վնասարարներն ու թշնամիները: Արդ, սատանային, որ ատելի է Աստծուն, պետք է մենք ևս ատենք ու անիծենք, ինչպես մարգարեն է ասում. «Քեզ ատելիներին, Տեր, ատեցի և Քո թշնամիներից գարշեցի» (Սաղմ. 138:21): Պետք է տրտմել մեղավորների և անհավատների համար, որ դեպի կորուստ են ընթանում: Իսկ վերջիններին ո՛չ օրհնել է պետք, ո՛չ էլ անիծել (Գրիգոր Տաթևացի):

115. Մեր թշնամիները երկուսն են: Եթե մեր անձնական թշնամին է՝ մարմնի կամ ունեցվածքի պակասություն է պատճառել, միշտ պետք է օրհնել և ոչ թե անիծել, ինչպես գրված է. «Օրհնեցե՛ք ձեզ անիծողներին և մի՛ անիծե՛ք, բարի՛ արե՛ք ձեզ ատողներին»: Եվ պետք է մերժենք մեր սրտերից քեզն ու ոխը՝ ըստ այսմ. «Եթե թողնենք մարդկանց իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ կթողնի ձեր հանցանքները»: Իսկ եթե թշնամի են ու վնասակար ընդհանուր եկեղեցու և հավատի նկատմամբ, պետք է աղոթել նրանց համար, որպեսզի ետ դառնան չարիքից: Սակայն եթե անզեղջ մնան, ինչպես չար ու մեղավոր մարդիկ և հերձվածողները, պետք է նախատել և ոչ օրհնել, քանզի նրանք ևս Աստծո հավատի ու կրոնի թշնամիներն են (Գրիգոր Տաթևացի):

116. Խոսքերի տեղեկությամբ աշխատում ենք մեր անձերում ճանապարհ բացել իղձերի ու փափագման, հառաչման ու արտասուքների համար. որպեսզի չլինի թե միայն լեզվով լինենք աղոթքի մեջ և մտքով անպտուղ մնանք նրանից, այլ, մտքի տեսության առջև քննելով աղոթքի վայելչությունը, թերևս, ցանկանք ձեռք բերել այն մտքի մաքրությամբ, հառաչմամբ և արտասուքով (Ներսես Լամբրոնացի):

117. Աղոթքներում չճառենք ունայն խոսքերով, ինչպես արծազանքների սոսկ հնչումը, կամ կապիկների պես՝ ըստ սովորության, միշտ բերանով

պաղատելով, այլ հոգով և մտքով Աստծո կամքի համաձայն պատրաստենք մեզ աղոթքի ժամին: Քանզի նա, ով աղոթքի վայրում մարմնով լինի, իսկ մտքով՝ անկապ, անասունների պես դրսում թափառի, ոչ միայն աղոթքից վարձք չի ստանա, այլ և կդատապարտվի անզգույշ աղոթքի համար (Խոսրով Անձևացի):

118. Ուր պետք էր մեղքերը քավել և հաճոյական աղոթքով Աստծուն հաշտեցնել, այնտեղ շատախոսությամբ և ծաղրածությամբ բարկացնում են Աստծուն և դատապարտված դուրս գալիս աղոթարանից՝ վարձք ստանալու և հոգևոր շնորհներ շահելու փոխարեն: Էլ չեն ասում աղոթքի ժամին հակառակությամբ և նախանձով, նաև կեղծավորությամբ ու փառասիրությամբ միմյանց հանդեպ վարվելու մասին կամ չարությամբ լռելու, կամ երգերը նախանձով եղանակելու: Աստված աղոթքների այդպիսի պտուղները չի ընդունում, այլ առավել զայրանում է և դատապարտում (Խոսրով Անձևացի):

119. Հարածան աղոթքի փութալը տերունական պատվեր է, միշտ և անդադար պետք է աղոթել Նրան: Քանզի, թեպետ այլ առաքինությունների համար չափ և սահման ունենք, այսինքն պահոց պնդությունն ու մարմնի ճնշումը ըստ կարողության են, իսկ ողորմությունը՝ ըստ ունեցվածքի և ժամանակի պատշաճության, սակայն աղոթքի պտուղը Աստված պահանջում է ամեն ժամ և ամեն տարիքում ու դիպվածում (Խոսրով Անձևացի):

120. Աղոթքը սանդարամետական դևերի հալածիչ է, Բելիարին, ջախջախող, բանսարկուհին, կործանող, նրա բոլոր արկածները խափանող: Եվ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղոթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղոթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպեսզի զրկի շնորհներից, որոնք մարդ ստանում է մաքուր աղոթելիս (Խոսրով Անձևացի):

121. Քրիստոնյան պարտավոր է օրեկան երեք առիթով աղոթել, առավոտյան՝ երբ քնից արթնանա, ճաշի ժամին, և գիշերը՝ քնելու պահին: Յուրաքանչյուր աղոթքի ժամանակ այր մարդիկ պետք է 12 անգամ ծնրադրեն, որն անում է օրեկան 36 անգամ. իսկ կանայք և աղջիկները պետք է 20 անգամ ծնրադրեն, որն անում է օրեկան 60 անգամ (Հովհաննես Երզնկացի):

122. Այսպես պետք է ընտրողաբար խնդրել և աղոթել: Եվ Ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ առատածեռն է յուրաքանչյուրիս բարիքներ շնորհելու մեջ, որ փոքր խնդրանքի դիմաց մեծամեծ պարգևներ է տալիս, որ գիտե նախքան մեր խնդրելը և պարգևում է նախքան աղերսելը, մեր բոլոր խնդրվածքները թող ի բարին կատարի: Քանզի տեսնում է անհոգներիս և մեր միտքն ու կամքը դեպի բարին շարժում: Եվ թող Իր արարչական խնամքով թողնի մեր հանցանքները և բոլորիս առատապես լցնի հոգևոր ու մարմնավոր բարիքներով. և Նրան Փառք և գոհությո՛ւն և երկրպագություն Իր Հոր և Ամենասուրբ Հոգու հետ: Ամեն (Գրիգոր Տաթևացի):

Հայրերի վարքից



1. Այսպիսի բան իմացանք Հովհաննեսի մասին, որ գուբի մեջ հանդարտում էր (խաղաղությամբ ճգնում էր), որ մասնակ էր հասակով, առույգ՝ շնորհով, կամավորապես միայնացյալ և անբակտելի Աստծո կցորդությունից: Դևը վիշապի տեսքով փաթաթվել էր նրան, ծամում էր նրա մարմինը և սաստիկ փսխում երեսին, իսկ նա իր ընթացքից (աղոթքից) ամենևին չէր սասանվում (Նեղոս Սինայեցի):

2. Ընթերցե՞լ ես արդյոք տաբենեսացի միայնակյացների վարքը, ինչպես պատմում են մինչդեռ Աբբա Թեոդորոսը խոսում էր եղբայրների հետ և ուսուցանում, երկու իժ եկան, մնացին նրա ոտքերի մոտ, իսկ նա անխռով մնալով, դնելով ոտքը նրանց վրա, անշարժ մնաց մինչև հոգևոր խրատների ու աղոթքի ավարտը, և ապա ցույց տվեց նրանց եղբայրներին և պատմեց այնպիսի բաներ, որ չգիտեին (Նեղոս Սինայեցի):

3. Լսեցինք, որ սուրբերից մեկը, երբ աղոթքի էր կանգնում, չարն այնքան էր հակառակում, որ երբ նա (աղոթքի ժամանակ) տարածում էր ձեռքերը, առյուծի տեսք էր ստանում և, կանգնելով նրա դիմաց, իր ճիրանները երկու կողմից խրում էր ջանացողի ցցված թիակների մեջ և չէր ուզում անջատվել նրանից, մինչև ձեռքերը չիջեցնի: Իսկ սուրբը բնավ չէր զիջում, քանի դեռ սովորական աղոթքն էր կատարում (Նեղոս Սինայեցի):

4. Դարձյալ մեկ այլ հոգևոր եղբոր մասին ընթերցեցինք, թե աղոթելիս մի իժ եկավ, մերձեցավ նրա ոտքերին, իսկ նա չիջեցրեց ձեռքերը՝ մինչև սովորական աղոթքը ավարտելը և բոլորովին չվնասվեց, քանզի Աստծուն իրենից առավել սիրեց (Նեղոս Սինայեցի):

5. Երկու արեղա գիշերը մտել էին իրենց անկողինները և աղոթքի գիշերային կարգն էին կատարում: Եվ ահա հայտնվեց սատանան, սաստիկ գարշահոտությամբ լցնելով սենյակն ասաց. «Նման աղոթական կարգին, նման խնկարկություն է վայել» (Հայելի Վարուց):

6. Մի սրբասեր և աստվածահաճո քարոզիչ էշով շրջում էր գյուղեգյուղ և Կենաց խոսքը սերմանում: Մի օր մտել էր եկեղեցի և էշը թողել էր դռանը: Մինչ «Հայր մեր» էր ասում, նրա միտքը մի քանի անգամ շեղվեց աղոթքից՝ էշի մասին մտածումներով. «Միզուցե մեկը կգողանա»: Այս և նման խորհուրդները խափանում էին նրա աղոթքը: Տեսնելով այս, նա ելավ եկեղեցուց և էժան գնով վաճառեց էշը: Նա չէր կամենում, որ իր միտքը աղոթքի ժամին զբաղված լինի և իրեն հեռացնի Աստծուց (Հայելի Վարուց):

7. Մի վանահայր ունենալով հոգևոր տեսության շնորհ, եկեղեցի գնալու

ճանապարհին անցնում է մի խցի մոտով, որտեղ ապրում էր մի եղբայր: Նա այնտեղ տեսնում է նաև բազմաթիվ դևեր՝ կանացի տեսքով և տարբեր գայթակղիչ տեսակներով: Նրանք խոսում էին անպիտան բաներ, ծիծաղում և ցնծում էին:

Ծերը հոգոց հանելով ինքն իրեն ասաց. «Այս եղբայրը տրվել է ծուլությանը և դրա համար էլ չար ոգիները շրջապատել են նրան և դարձրել իրենց ձեռքի խաղալիք»:

Ավարտելով աստվածային պատարագը, հետդարձի ճանապարհին ծերը մտնում է եղբոր խուցը և ասում. «Եղբայր իմ, ես մի վիշտ ունեմ, բայց հավատում եմ իմ Աստծուն, որ նա ինձ կազատի այդ վշտից, եթե դու ինձ համար աղոթք անես»: Այս խոսքերից եղբայրն ընկնում է մտածմունքի մեջ և ասում ծերին. «Հայր, արժան չեմ քեզ համար աղոթելու»:

Սակայն ծերն սկսում է համոզել նրան ասելով. «Զեմ հեռանա քեզանից, եթե դու խոսք չտաս ինձ համար աղոթք անել գիշերները»:

Եվ եղբայրը խոստանում է կատարել ծերի խնդրանքը:

Այդպես արեց ծերը, որպեսզի նրան դնի Աստվածային վարքի ճանապարհին և հաստատի գիշերային աղոթքի մեջ:

Առաջին իսկ գիշերը եղբայրը ելավ քնից, որպեսզի ծերի համար աղոթք անի: Աղոթքի վերջում վանականն ասաց ինքն իրեն. «Անձ իմ եղկելի, ծերի համար աղոթք արեցիր, իսկ քեզ համար ինչո՞ւ չես աղոթում Աստծուն»:

Եվ իսկույն իր համար էլ սկսեց աղոթք անել:

Այսպես նա վարվեց մի շաբաթ. մի աղոթք ծերի համար անելով, մի աղոթք՝ իր համար: Հաջորդ կիրակի եկեղեցի գնալիս, ծերը դարձյալ տեսավ դևերին, արդեն մի տեսակ ձանձրույթի մեջ ընկած:

Ծերը հասկացավ, որ եղբոր աղոթքը դևերին վշտացրել է:

Նա մտնելով եղբոր խուցը, խնդրեց, որ ամեն գիշեր երկու աղոթք անի իր համար: Եղբայրը երկու աղոթք սկսեց անել ծերի համար, և նորից ինքն իրեն ասաց. «Օ՞, թշվառ անձ, մի աղոթք էլ ավելացրու քեզ համար»:

Եվ այսպես անցկացրեց ևս մեկ շաբաթ:

Հաջորդ անգամ անցնելիս, ծերը տեսավ դևերին ավելի վիատված և պապանձված: Գոհանալով Աստծուց նա մտավ եղբոր մոտ և ասաց, որ նորից մի աղոթք ավելացնի իր համար: Այսպես մեկ շաբաթվա ընթացքում վեցական աղոթք արեց եղբայրը իր և ծերի համար: Եվ նորից ծերը եկավ եղբոր մոտ: Այնժամ դևերը բարկացան ծերի վրա եղբոր փրկության համար, իսկ նա փառավորեց Աստծուն, մտավ եղբոր մոտ, սովորեցրեց նրան ծնունդանալ և անդադար աղոթք անել Աստծուն:

Իսկ դևերը տեսնելով, որ եղբայրը հաստատվել է աղոթքի և ճգնության մեջ, հեռացան նրա խցից (Հարանց Վարք):

8. Մի վանական իր խցում կատարում էր իր ամենօրյա աղոթական կարգը, հանկարծ նրա մոտ ահավոր գլխացավ սկսվեց, և միանգամից բարձրացավ ջերմությունը, ու ամբողջ մարմինը բռնվեց ցավով: Վանականը կարծեց, որ սա մահվան հիվանդություն է, սակայն մտածեց, որ եթե

պիտի մահանա, զոնե աղոթական կարգը մի կերպ ավարտին հասցնի: Եվ երբ վերջացրեց, նույն պահին ցավերն ու ջերմությունն անցան, և նա հասկացավ, որ սա թշնամական հարձակման արդյունք էր, որպեսզի իրեն շեղի աղոթական կարգից (Յարանց Վարք):



Աղոթք

Վայ ինձ, Տե՛ր, քանզի տարակուսանքների ծփանքն է ինձ պատում և ալեկոծում իմ սիրտը: Չգիտեմ, թե ինչ աղոթեմ. սաղմոսում եմ և չեմ հասկանում, շուրթերս բարբառում եմ, իսկ միտքս ճողոպրելով այս ու այն կողմ է թափառում և չունի դադար, կամենում եմ, որ այնտեղ լինի, սակայն կանգ չի առնում, չի տեսնում արդարև և չի ըմբռնում, զուր եմ աշխատում ու չեմ շահում ոչինչ, պղնձի և ծնծղայի ձայնի պես թափուր և ունայն եմ համարվում և անպտուղ գտնվում բոլոր բարիքներից:

Շնորհիք ինձ, Տե՛ր, սրբության և սուգի երկյուղ և հորդորի՛ր իմ մեջ արտասուքների աղբյուրներ, թեթևացրո՛ւ իմ բեռների ծանրությունը և աճեցրո՛ւ իմ մեջ սուրբ աղոթքը: Շտապի՛ր, Տե՛ր, և եկ փնտրելու մոլորյալիս, որ մերձեցել եմ կորստյան վախճանին, քանզի խավարեցի լույսից և խափանվեցի Քո պատվիրանների սիրուց, հաղթվեցի չար թշնամուց և նվազեցի Քո երկյուղից: Տապալվեցի չարի չար խորհուրդներից և ցամաքեցի Քո սիրո արտասուքների շնորհից, խաբվեցի ունայն խոսքերից և մոլորվեցի մտքի լուսավորությունից, աղտեղացա մեղքերով և մոռացա վախճանի օրը:

Յալաճի՛ր, Տե՛ր, իմ բազում ախտաժետությունները, մարմնիս ցավերը և հոգուս ախտերը, գլխիս քունը և որկորիս հազեցումը: Պահի՛ր խորհուրդներս անգբաղ, սիրտս՝ սուրբ և միտքս՝ լուսավոր, ցանկությունս՝ դեպի Քեզ և հոժարությունս՝ աղոթքի մեջ օր ու գիշեր:

Ընդունի՛ր, Տե՛ր, իմ ունայնախոս սակավ աղոթքները, որ կանգնած եմ Քո առաջ դատապարտված, նաև ծուլ՝ զգաստությունից, մոլորված՝ մտքերից և ունայնացած՝ երկյուղից: Բերանս անկապ բաներ է բարբաջում, աչքս՝ ապուշ կտրած նայում, և միտքս՝ թափառում: Չեմ աղոթում անգբոս և չեմ խնդրում, չեմ կանչում Քեզ հավատքով և չեմ աղոթում երկյուղով, չեմ հայցում արցունքներով և չեմ դողում ու սարսում պատասխանատվության օրվա համար:

Բացի մի այլ՝ առավել վատթար բան եմ կրում՝ մարմնի անզղջությունը, որ ավելի դառն է, քան բոլոր չարիքները: Եվ քանզի աղոթելիս ծանձրանում եմ և սաղմոսելիս չեմ հասկանում, երանություն խնդրելիս ծուլանում

եմ և շնորհների երկյուղից՝ դատարկվում, տկարանում եմ մարմնով, սիրտս աղի արծան է լինում, և չի ծագում իմ ներսում անշեջ լույսը:

Իջեցրու, Տե՛ր, Սուրբ Յոզուղ շնորհներն ինձ վրա, որ մենակ եմ պատերազմի մեջ՝ առանց օգնականի: Սրբի՛ր, Տե՛ր, իմ հոգու տաճարը և ինձ հետ եղիր երեկոները: Բաց իմ հոգու աչքերը և լուսավորի՛ր իմ միտքն ու խորհուրդները: Զորություն տու՛ր ինձ, Տե՛ր իմ Յիսուս, և ընդունի՛ր իմ բերանի օրհնաբանությունը: Արթնացրու՛ ինձ գիշերվա խոր քնից՝ գոհանալու և օրհնելու Քեզ, որով քավեմ իմ մեղքերը: Շնորհի՛ր ինձ սուգ և արտասուք՝ լալու, սգալու և անդադար Քո առջև աղոթելու, որպեսզի Քեզանից ընդունելով իմ խնդրանքները, Քրիստոս Աստված մեր, միշտ առաքեն ամենազոր տերությանդ բարձունքները մեծ վայելչական փառաբանություն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):




ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԹՈՒՂԹԸ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Թեև մահու չափ դժվար է հարուստներին ողորմության մղել, սակայն պետք է ասել, ողորմությունն ավելի շահավետ է ու օգտակար, քան բարեպաշտ արարքների առաքինությունը և ավելի վսեմ է, քան պարկեշտության ճգնությունը, որ մինչև իսկ բարեպաշտ գործերի առաքինությունը կարող է նսեմացնել ողորմության պտուղների լուսավորության մեջ: Ի՞նչ ավելացնենք տակավին այլ առաքինությունների մասին: Կուսության սրբությունը, որը թե՛ Յիսն և թե՛ Նոր ուխտի ժամանակների մեջ միշտ պատվված էր, սակայն արհամարհվեց և ստորագնահատվեց, երբ նրան չընկերացավ ողորմությունը: Ոչ նրա համար, որ ընդհանրապես ողորմություն չտվեցին, այլ նրա համար, որ ըստ պատշաճի չտվեցին և այս պատճառով կեսգիշերին յուրի պակասությունից հանգեց նրանց լապտերը: Այսպես էլ նա, որ ունևոր է և քիչ է ողորմություն տալիս, իր տվածը բավական չի լինի իր փրկության համար, քանզի ողորմությունը արժեք է ստանում հա-

րաբերաբար հարստությանը: Նա, որ շատ հարստություն ունի, նրանից շատ ողորմություն է ակնկալվում, իսկ նա, որ նվազ ավելի քիչ: Ինչպես որ խորանի զարդարման համար հարկավոր էր ոսկի, պետք էր նաև ծաղիկ, և նրանք, որ ոսկի ունեին և ծաղիկ բերեցին, անընդունելի եղավ, և պիղծ համարվեցին: Իսկ նրանք, որ աղքատ էին և ծաղիկ մատուցեցին, նրանց ընծան ընդունելի էր, և Աստծուն հաճո թվաց, և Նրա օրհնությանն արժանացան: Որովհետև Աստված տվածի չափին չի, որ նայում է, այլ տվողի տրամադրվածությամբ: Շատ ունեցողից շատ է ընդունվում որպես նվեր, իսկ քիչ ունեցողից քիչ: Քանզի նա, որ տասը դահեկան ունի և նրանից մեկը որպես ողորմություն տա աղքատին, իսկ այդտեղ մի աղքատ, որ ընդամենը տաս լումա ունենալով հանդերձ, մի այլ ավելի խեղճ աղքատի մի լումա տա, իր այս արարքով Աստծուն ավելի հաճեցրած կլինի: Չքավորի համար նման բանն ավելի գարմանալի է, քանի որ աղքատ լինելով հանդերձ, իր ունեցածը վատնեց: Նման բանի վրա նույնիսկ Հիսուս զարմացավ, երբ երկու լումա ունեցող այրի կինը գանձանակի մեջ նետեց իր ամբողջ ունեցածը: Հիսուս ասաց իրեն շրջապատողներին. «Մեծահարուստները իրենց հարստության ավելցուկից տվեցին, իսկ այդ տառապած այրին ինչ որ ուներ, աղքատներին բաժանեց: Քանի որ ունեցածը միայն երկու լումա էր»: Այսպես սատանան խաբում է ունևորներին ու հարուստներին, որպեսզի նրանք չտան իրենց հարստության համեմատ ու մեծամեծ ողորմություններ չբաշխեն, այլ չքավորների նման, չնչին բան նետեն, այնպես հավաստիացնելով, որ այդ քիչը բավարար է իրենց անձի փրկության համար: Իսկ ոմանք իրենց հարստության կեսն աղքատներին բաշխեցին և եղբայրաբար բաժանեցին հասարակ մարդկանց միջև: Ոմանք էլ իրենց ամբողջ ունեցվածքը բաշխեցին իրենք իրենց աղքատացնելով, որովհետև նրանք հավիտենական հարստության ձգտեցին: Առաջիկաները տասանորդ էին վճարում, եկեղեցուն բաժին էին հանում, զոհաբերություններ էին անում, ողջակեզ էին զոհում ու իրենց մեղքերի համար նվիրաբերում էին մարդկանց ու անասունների անդրանիկներին, կալի հունձքի և պտղի առաջին բերքը Աստծուն էին նվիրաբերում: Սրանցից բացի, տարվա ընթացքում բազմաթիվ տոներ էին կատարում Աստծո համար և շատ օրեր ու ամսագլուխներ մեծ ընծաներով երկնավոր Հորն էին նվիրում: Կարոտյալ աղքատներին էին կշտացնում, անթիվ որբերի և այրիների էին կերակրում, տառապյալներին էին մխիթարում և անդամալույծների պետքերն էին մատակարարում: Արդ՝ եթե Աստված կիսակատար հին ժամանակների մեջ, այս արդարության բարեգործություններն էր ակնկալում մարդկանցից, ուրեմն որքան և ավելի ողորմություն և արդարություն կպահանջի Նա մեզանից, երբ ապրում ենք ավելի կատարյալ և ավելի նոր ժամանակների մեջ: Քանզի. «Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան դպիրներինը և փարիսեցիներինը, չեք կարող Արքայություն մտնել» (Մատթ. 5:20):

Ապա թե՛ ոչ, ո՞ր մի ներումով պիտի թողություն ստանանք Քրիստոսի վարդապետության հետևողներս, կատարյալ և նոր քրիստոնյաներս, բայց միայն


գերազանցելով թերակատար հներին և ավելի ողորմություն տալ, քան հրեաները: Եթե միայն հրեայի արդարություն պիտի գործադրենք, իրավ մեզ համար զուր է Քրիստոսի աշխարհ գալը: Քանզի այլևս թե՛ հարուստները, և թե՛ աղքատները մեկ մարմին են Քրիստոսով: Եթե Քրիստոսի ծառան ես, պիտի պահես նրա պատվիրանները, ապա ուրեմն պարտավոր ես խնամակատար լինել ընկերոջդ որպես քո մարմնի անդամի, քանզի երբ մարմնի մեկ անդամը ցավա, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավ կզգան: Ուրեմն, եթե Քրիստոս գլուխն է, և մենք Նրա մարմինն ու անդամները, պետք է որ մենք՝ հասարակ անդամներս, մեր բոլոր ունեցածը Քրիստոսինը սեպենք: Ինչպես առաքյալների օրոք հասարակաց էր հարստությունը, և հավատացյալները նույն մարմնի անդամներ էին, ոչ ոք չէր կարող ասել, թե այս ստացվածքը իմն է, այլ բերում էին և բաշխում բոլոր նրանց, որոնք կարոտ էին այդ առարկային: Այն էր ասիական սրտագին ողորմությունը, այն էր աստվածապաշտությունը և կատարյալ մարդասիրությունը: Նրանք այնպիսի գթասրտությամբ էին բաշխում, որ մինչև իսկ աղքատի ինչ բանի կարոտ լինելն էին հարցնում, և այնքան նշանակալից էր աղքատների երևումը առաքյալների շուրջը, որ մինչև իսկ նրանք իրենց քարոզության ընթացքում Քրիստոսի պես ողորմություն էին ուսուցանում: Իսկ ունևորներն իրենց հարստությունը բերում և դիզում էին նրանց ոտքերի առջև, որոնց համար մատակարար կարգվեցին ստեփանոսյան սարկավազները: Իսկ նրանք, որոնք աղքատների հանդեպ գթասրտության մղումից չէ, որ բերել էին, այլ պարտականությունից էլնելով, այդպիսիները Անանիայի և Սափիրայի նման սատկեցին: Իսկ Տաբիթան, որ գթառատությամբ և խնամքով էր կերակրում ու հագցնում որբերին և այրիներին, այս վերջինների աղոթքով էլ մեռելներից հարություն առավ: Պողոս առաքյալն ասում էր, թե. «Այս բանը մեզ հրամայվեց, որ աղքատներին հիշենք, որը և ես փութացի կատարել», որովհետև սա է Աստվածային գրքերի պատվիրանը: Ինչպես որ Քրիստոս ասաց հարուստին. «Եթե ուզում ես կատարյալ լինել, գնա բոլոր ունեցածդ ծախիր ու տուր աղքատներին և երկնքի մեջ գանձեր պիտի գտնես» (Մարկ. 10:21): Իսկ ազահներին ասաց. «Ավելի ոյուրին է ուղտը ասեղի ծակով անցնի, քան հարուստը արքայություն մտնի» (Մարկ. 10:21): Քանզի նրանք, որ երկրի վրա հարստություն են դիզում և ողորմություն չեն սերմանում, պարապ և ունայն են մեկնում աշխարհից և զգվում անողորմ և աններելի կրակների մեջ: Այս ծանուցելով, Տերն ասում է. «Դուք ձեր համար բարեկամներ շահեցեք անիրավ մամոնայի միջոցով, որպեսզի երբ այն պակասի, ձեզ ընդունեն հավիտենական հարկի մեջ» (Ղուկ 16:9): Նաև Պողոսը նույնպես ասում է. «Գնացեք սիրո ետևից, նախանձախնդիր եղեք աղքատներին ողորմություն տալու մեջ, քանի որ դուք էլ Քրիստոսից պիտի ստանաք» (Ա Կորնթ 14:1): Իսկ մի ուրիշ տեղ էլ ասում է. «Սփռեց և տվեց աղքատներին, նրա արդարությունը հավիտյանս հավիտենից պիտի մնա» (Բ Կորնթ. 9:9): Պողոսը ոչ միայն իր կամքին էր ապաստանել, այլ նաև հարուստներին էր պատվիրում ասելով. «Ձեր հարստության ավելորդը թող աղքատների կարիքները բավարարի, իսկ



աղքատների աղոթքների ավելորդը ձեր մեղքերին թողություն պիտի հայցի» (Բ Կորնթ. 9:14): Քանզի ոչ մի բան չի կարող մեղքերի ծանրությունը այնքան թեթևացնել, որքան աղքատների հանդեպ գուրբ ու ողորմությունը, ինչպես որ սուրբ Դանիել մարգարեն սովորեցնում էր Նաբուգոդոնոսորին, երբ այս վերջինս հիվանդ ընկած էր մեղքերի պատճառով: Նա հարցնում էր մարգարեին, թե ինչ միջոց կարող է գտնել իր ցավերն անոքելու համար:

Իսկ Դանիելը որպես բժիշկ մոտենալով, ասում էր. «Արքա, ո՛չ պահքը, ո՛չ հսկումը, ո՛չ քուրձը և ո՛չ էլ մենակեցությունը չեն կարող օգնել: Գնա մեղքերդ՝ ողորմությամբ և անօրինություններդ՝ աղքատներին գթալով քավիր», որովհետև սա կաշառք է, որ արդարացնում է քեզ, ճանապարհ, որ հավիտենական կյանքի է առաջնորդում: Տեսնում ես, որքան մեծ է ողորմության զորությունը և որչափ համարձակ երեսով այն ողորմած Աստծու առջև մեզ կկանգնեցնի, նամանավանդ, նրան, որ ի սրտե կերակրում է անոթիներին, ինչպես Եսային էլ ասում է. «Քաղցածներին բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին տար քո տունը, եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրու նրան, ազգիդ տառապալներից երես մի դարձրու, և այն ժամանակ Աստված պիտի լսի քեզ, երբ Իրեն կանչես, և տակավին չաղաղակած՝ քեզ պիտի ասի՝ ահա ես» (Եսայի 58:7):

Այսպիսի արագաթև է ողորմությունը, որ օգնում է ողորմածին և փութապես հասնում Աստծուն: Տակավին Աստված ոչ միայն երկրի վրա է օգնում և փրկում ողորմածին, այլև հանդերձալ կյանքի մեջ բազմապատիկ առատությամբ նրան կվերադարձնի իր տված ողորմությունները: Քանզի Տերն ասում է, թե աղքատների տված ձեր ողորմության համար ես եմ պարտական և ես եմ ձեր դրամների փոխատուն: Քանզի նա, ով ողորմում է աղքատներին, դրամ է փոխ տալիս Աստծուն, փոխարենը հազարապատիկ ստանալով ու արժանանալով հանդերձալի անսպառ բարությանը, նաև նրա մեղքերը կքավվեն և ահեղ տանջանքներից կփրկվի: «Երանի նրան, որ խորհում է տնանկի համար և աղքատի մասին, քանզի նեղության օրը Տերը պիտի փրկի նրան» (Սաղմ. 40:2): Բայց ի՞նչ է նշանակում խորհել աղքատի և տուն չունեցողի մասին: Երբ մտածում ես աղքատի տառապանքների մասին, խորհում ես, թե նա իմ եղբայրն է, իմ անդամից է և իմ մարմնից, իմ նման զանազան պետքեր ունի, կարոտ է ինչքի և պատասպարանքի, թե՛ անոթության վտանգի բռնությունից անհանգստորեն շրջում է հեծելով, տաքից պապակվում է, ցրտից դողում, երբ դատարկ է փորը և մարմինը մերկ, մազերը թաղիքի պես կարծրացած են ու դեմքը դալկացած ու դեղնած, մարմինը անխնամ ու հալունաշ եղած: Թափառում է, տագնապում, դռնեդուռ է ընկնում՝ իջևանելու տեղ փնտրում և իր վշտի ու տագնապի միջից աղեխարշ ողորմուկներ ձայնում: Գիտենալով մեր մտքերի անտարբերությունը, իր անոթալի և տգեղ անդամները հանում է ցուցադրության, որպեսզի մեր անողորմությունը գթով շարժի: Հանդգնում է, լրբանում և նման ծանր աշխատանքով մի կտոր կերակուր է ձեռք օգնում, վախով է մտնում դռնից, գավիթներից և տները, որովհետև սարսափում է



տունը պահպանող շներից և ահաբեկվում անասուններից: Չիերը նրան աքացի են տալիս, եզները սպառնալի շարժում են եղջյուրները, շները կծում, իսկ չար ու անողոր մարդիկ բամբասում և թշնամանում, նետի պես սիրտն են խոցոտում, մանավանդ, երբ ենթական խեղանդամ կամ ցավագար է ու անսովաղությունից (բացարձակ ոչինչ չուտելուց և չխմելուց) տագնապում է, ալեկոծվում է, դիմում անողորներին՝ ինչպես որ պիտի դիմեր զազաններին, ու նրանցից նախ նախատվում է, և ապա բազում բամբասանքներ կրելով ջանում է մի բան ձեռք բերել: Արդ, այս է աղքատների և տնանկների մասին խորհելը, երբ մեկը մտածում և քաղցրաբարբառ խոսքերով գթագին ողորմածությամբ կարոտյալին մխիթարում է և նրանց համար հեծծում և հոգոց հանում: Ահա այսպիսիներին է, որ երանելի է տալիս մարգարեն, սրանք որքան գթասրտությամբ և ողորմանքով ընդունում են աղքատներին, այնքան զերծ պիտի մնան նեղության օրերից: Իսկ ի՞նչ է նեղության օրը մեղավորների և անողորմների համար: Այն Ահեղ Դատաստանի օրն է, երբ երկինքը կսասանվի, և երկիրը կողորդա, երբ արեգակը կխավարի, և լուսինն ու աստղերը կչքվեն, երբ արհավիրքները իրար կբախվեն, և ահարկու սոսկումը կսաստկանա, երբ շեփոթի հնչունները կզորանա ու կզարհուրեցնի, և երբ հրեշտակների ձայնը կապշեցնի: Երբ զորությունները, իշխանությունները ու պետությունները կշարժվեն և հրեշտակների հյուլերը երկրի վրա կտարածվեն, երբ աթոռները կկործանեն, և Քրիստոս Արքայի էջը կտեսնենք: Երբ Դատավորի փառքի ահավորությունից՝ սերովբեներն ու քերովբեները կսարսափեն: Երբ քարերը կպատռվեն և գերեզմանները կբացվեն, և բազմագունդ ննջեցյալները հարություն կառնեն, և բազմաթիվ ողջերը նորոգվեն, երբ սրբոց դասերը ցնծան, և արդարների խմբերը պայծառանան, այնժամ համայն մարդկությունն ի մի կխմբվի, ու կրակը կտարածվի ամբողջ տիեզերքի մեջ և կծավալվի: Ահա այնժամ, մեղքով կաշկանդված մեղավորները և անօրեությունը կապկավածները առաջ պիտի բերվեն, խավարային մեղքով մթապատված աշխարհատես հրապարակի վրա, ծաղր ու ծանակով և անտանելի անոթով պիտի ցուցադրվեն և ահարկու բեմի վրա դեն պիտի գան մեծ և ահավոր Դատավորի առջև:

Որի հուրը վառելով պիտի տոչորի և բորբոքվելով պիտի բարձրանա մինչև կայծակների հնոցը և հրեղեն գետերի հորձանուտները, որտեղից բորբոքված կրակը վայր իջնելով բոցածավալ խարույկների ներքմամասի մեջ, պիտի տարածվի: Այնտեղ՝ խավարային գուրբեր կան և աղջամղջային տարտարոսներ, չարատանջ գեհեն և դառնության որդեր, որոնք սպառնում են և սպանում մեղավորներին, նրանցից վերջին ահեղ օրվա վրեժը լուծելու համար: Ահավասիկ, այս է չար օրը մեղավորների համար, որից կփրկվի ողորմածը շնորհիվ աղքատներին բաշխած իր ողորմության և տուն ու տեղ չունեցողների հանդեպ ցուցաբերած գթության, որոնց համար մեր Տերը երանի է ասում, ավելացնելով. «Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:7): Քանի որ դա-

տաստանը անողորմ պիտի լինի նրա համար, որ ողորմություն չի անում, քանզի միայն ողորմությունը կարող է պարծենալ դատաստանի դիմաց (Չակոբ 2:18):

Անողորմ են դատաստանի դատախազները, անողորմ են տանջանքները, անողորմ է հուր-հնցոցի մեջ կիզումը, անողորմ խորովումը և բոլորովին ու աններելի և անսպասելի՝ ահեղ տազնապների չարչարանքները: Այս է ահավասիկ չգթացողների համար անողորմ դատաստանը և աններելի տանջանքը: Ուր անողորմ մեծահարուստը ենթարկվեց ահեղ կրակի խորովման և աննվազ տաքության, որովհետև բնավ չողորմեց աղքատներին, անօթիներին, մերկերին և հիվանդներին, ու հենց սրա համար էլ ենթարկվեց անողորմ հատուցման: Այս բոլորը իմանալուց հետո մի հապաղեք ողորմություն հասցնել աղքատներին, և առավել՝ խեղանդամներին և հիվանդներին, որբերին և այրիներին, վշտահարներին և օտարներին, հյուրերին և ծերերին և բոլոր կարոտյալներին՝ հոգալու համար իրենց անհրաժեշտ պետքերը, որոնցով հնարավոր լինի նրանց տալ իրենց օրապահիկն այս աշխարհի մեջ, եթե աստվածապաշտ են՝ նրա համար եղիր հոգաբարձու և վերակացու: Եթե ցանկանում ես մեղքերդ փարատել, նրանց կերակրիր և հագցրու, եթե պայծառ դեմքով ուզում ես տեսնել Քրիստոսին, կարոտյալների և մեղյալների երեսը մի տրտմեցրու: Եթե ուզում ես սրբերի խորանները և օթևանները մտնել, անսպառ բարությունները ժառանգել՝ օթևան տուր և ասպնջական եղիր կարոտյալներին, հիվանդներին և վշտահարներին, նրանց հագցրու և մխթարիր երկրային պետքերով, որպեսզի դու էլ ըն վիճակից հանգստանաս և վայելես հոգևոր կերակուրը և մշտատև փրկությունը: Քանզի աստվածապաշտությունը կայանում է առատ ողորմությամբ, նեղության ու վշտի մեջ եղողներին այցելությամբ, այդպիսինը անիմանալի բարության վայելչությանը կարժանանա նաև երկրի վրա, իր բարեգործության փոխարեն առատ բարություն կգտնի:

Եթե երկրի վրա աղքատներ չլինեին, ո՞վ պիտի կարողանար իր բազմաթիվ մեղքերի բեռը թեթևացնել կամ ալեկոծյալ ու ծովածուփ անօրենությունների միջից փրկված դուրս գալ: Աղքատներին տված ողորմությունը մեզ կանցկացնի այս աշխարհի սահուն ու ծփուն կյանքի միջից և կհասցնի խաղաղության նավահանգիստը: Վշտահարների աղոթքները՝ մեր մարմնից հանում են մեղքի փշերը, մաքրում են մեր մեղքերի պղծության թարխը, բժշկում և առողջացնում են սատանայի հասցրած վերքերը, ցրում և թեթևացնում են անօրենության ծանրությունը և արդարացածներին ու քավվածներին երկինք ուղարկում: Սրանք են ողորմության գորությունները, որ դառն բանտից և հանցանքների խորքերից դուրս են հանում մարդուն, շնորհիվ կարոտյալների համար ծախսված մի քիչ դրամի: Բնավ մի տխրիր ունեցվածքներից նվազման համար, որովհետև նրանց նվազման համեմատ մեղքերդ էլ պիտի նվազեն: Երբ դրամը քեզանից հեռու են վանում, դրա հետ միասին մեղքերդ էլ վանած կլինես և պիղծ գործերիդ անօրենությունը սրբած, ինչպես որ ասում է. «Ողորմություն արեք, և ձեր ունեցածները սուրբ պիտի լինի» (Ղուկաս 11:41):

Քանի որ ողորմություն անելով սրբանում է

ողորմածի մարմինը և հոգին, օրհնվում են նրա ինչքերը, հաջողվում աշխատանքները, շատանում են արտերը, բազմանում ոչխարները և պտղավորվում են անդաստանները, եթե միայն նա աստվածային կամքի համեմատ կատարի ողորմությունը: Որովհետև տալով աղքատներին, Աստծուն է փոխ տալիս, և միայն տվածը չի, որ Աստված երկնքի մեջ կվերադարձնի, այլ նաև կփրկի ողորմածին սատանայի թակարդներից, կազատի դժոխքից և Երկնքի Արքայություն կշնորհի նրան: Թեպետև մեծ սրբություն է կուսությունը, սակայն առավել ևս պատվական է ողորմածությունը: Թեպետև մեծ է խիստ պահեցողությունը և մեծամեծ ու շատ առաքինություններ ունի, սակայն ավելի մեծ և աստվածահաճո է ողորմությունը. «Մեծ և պատվական է ողորմած մարդը» (Առակ. 20:6):

Իսկ նա, որ ողորմություն չի գործում, այնպիսինի աստվածաշունչը մարդ չի անվանում, այլ՝ խոզ, շուն և միայն ուտող զազան: Քանի որ առանց լույսի ճրագ և առանց տեսողության աչք են բոլոր նրանք, որոնք միայն անուն ունեն և ոչ մի օգտակարություն: Արդ, ինչպե՞ս պետք է իմանանք, թե անողորմ մա՞րդ է թե՞ ոչ: Քանի որ աղքատը իր ջրի համար է, որ աղքատը է անվանվում, իսկ ճրագը իր լույսի, նույնպես էլ մարդն իր ողորմության համար է, որ ճանաչվում է որպես մարդ, մշտապես իր սրտի մեջ սեր և գութ տածելով աղքատների հանդեպ, ձեռքերը ողորմության համար կարոտյալներին երկարելով և անոթի աղքատների միջոցով Քրիստոսին կերակրելով, քանզի Քրիստոս աղքատների հանդեպ ցույց տրված ընդունելությունը համարում է Իրենը. «Անոթի էի, -ասում է նա, - և Ինձ կերակրեցիք, ծարավ էի և խմեցիք, օտար էի, ընդունեցիք Ինձ, հիվանդ էի ու բանտի մեջ՝ և այցի եկաք Ինձ» (Մատթ. 25:36): Արդ, եթե հավատում ես Աստծո խոսքին ճշմարտապես, մտածիր նրա մասին, որովհետև երբ անոթիներին կերակրես, Քրիստոսին կերակրած կլինես, եթե ծարավին ջուր խմեցնես, Քրիստոսին խմեցրած կլինես, եթե հյուր ընդունես՝ Քրիստոսին ընդունած կլինես, եթե օտարին ասպնջական ոգի ցույց տաս, Քրիստոսին հյուրընկալած կլինես, եթե հիվանդին տեսության գնաս, Քրիստոսին տեսնելու գնացած կլինես, եթե նեղվածներին սփոփես, Քրիստոսին մխիթարած կլինես, եթե անօգնականին օգնես, Քրիստոսին օգնած կլինես, եթե տկարներին սպասավորես, Քրիստոսին սպասավորած կլինես և ինչ որ անոթիներին մատուցես, մատուցած կլինես Քրիստոսին, որ բազմապատիկ պիտի հատուցի քեզ, վերջին դատաստանի օրոք, ուր ոչ սրբերը կարող են օգնել, ոչ էլ արդարները բարեխոսել, ոչ հայրերը կգթան և ոչ եղբայրները կողորմեն, այլ՝ միայն աղքատներին տված ողորմությունը և բարի վարքը կարող են օգնել: Արդ՝ չսպասենք վերջին օրվան, չլինենք ազահ, աղքատներին կարոտ չձգենք, Քրիստոսին չտրտմեցնենք, այլ՝ որբերին կերակրենք, այրիներին խնամարկենք, պանդուխտներին ժողովենք, անոթիներին կերակրենք և Քրիստոսին մխիթարենք: Երկրի վրա առատատուր մխիթարություն սերմանենք և երկնքի մեջ ողորմություն հնձենք, երկնային խորանները բարձրանանք և մեծապայծառ խնդությամբ անսպառ ուրախությունը վայելենք մեր Տիրոջ՝ Քրիստոսի հետ, որին վայելում է փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՆԱՐԵԿ

ԲԱՆ (Է)

Վա՛յ մեղավորիս, որ բարկացրի ինձ ստեղծողին,
 Կորստայն որդուս, որ անմահության ձիրը մոռացա,
 Վա՛յ պարտապանիս անհամար ու բյուր այն քանքարների,
 Որոնք հատուցել չկարողացա,
 Վա՛յ բեռնակրիս դժնի մեղքերի,
 Ձի անկարող եմ հանգստարարի մոտ վերադառնալ,
 Վա՛յ հանցապարտիս Տիրոջ նկատմամբ,
 Որ հնար չունեմ այլևս հզորին ներկայանալու,
 Եղեգնախնիվ ոյուրավառ նյութիս,
 Որ գեհեճի մեջ պիտի տոչորվեմ,
 Վա՛յ, որ մտքիս մեջ շողում եմ անդուլ
 Աստծո բարկության նետերն հրեղեն,
 Վա՛յ հիմարիս, որ չմտառեցի
 Հանդեսն այն, որտեղ ծածկությունները
 Հրապարակավ պիտի տարփողվեն...
 Վա՛յ ամբարշտիս, որ միշտ, անդադրում
 Չարությունների ոստայն հյուսեցի,
 Վա՛յ ինձ, որ մարմինն իմ պարարեցի
 Անմահ որդերին իբրև կերակուր.
 Ինչպե՞ս թունավոր այդ կտտողներին տոկամ, դիմանամ.
 Վա՛յ ինձ, երբ մահվան բաժակը ըմպեմ
 Ինչպե՞ս կրեմ այդ տույժն հավերժական.
 Վա՛յ, երբ եղկելի մարմնիցս ելնի անարժան հոգիս.
 Ինչպե՞ս ճշմարիտ դատավորին ես պիտի երևամ.
 Վա՛յ, երբ սպառվի յուղը լապտերիս.
 Ձի եթե մարեց, չի վառվի այլևս.
 Վա՛յ ինձ բռնելիք այն խուճապահար
 Ու տազնապալի ահ ու սարսափին,
 Երբ առագաստի մուտքը կփակվի.
 Վա՛յ, երբ երկնավոր Արքայի վճռով
 Կնքված ահարկու, սահմռկեցուցիչ այս խոսքը լսեմ՝
 «Քեզ չեմ ճանաչում»:(Աբ. Գրիգոր Նարեկացի)

ԲԱՆ ԽԵ

Արդ, ինչպե՞ս հիմա պիտի բժշկվես, ա՛նձն իմ եղկելի,
 Երբ խոցուտված ես այսքան տեգերով,
 Ըստ մարգարեի՝ ձգված ու լքված,
 Տարագիր մի մարդ անամոք ու հեգ.
 Կուտակված անթիվ ցավերից միայն
 Մեկն իսկ լիովին բավական է քեզ
 Չարաչար մահվան մատնելու համար.
 Այնինչ դեռ որքա՛ն դժնի, սպանող,
 Ժանտ դահիճների հրոսակներ են շրջապատում քեզ:
 Բայց այս էլ քիչ է արտահայտելու
 Տաժանավորիս վիճակը թշվառ:
 Ինչպես վիտացող բազմությունն անթիվ ժանտ կարիճների,
 Որոնք կրում են պոչի վերջույթուն թույն օրհասական,
 Պահած մաշկեղեն մի անոթի մեջ,
 Արգելարանի թույնամուղ ուղին
 Խայթոցն, ամփոփած շրջափակությամբ,
 Արտաքուստ թեև բարի են թվում,
 Սակայն ներքնապես ամբար են չարի,
 Կորստյան պահեստ, կսկիծի կույտեր,
 Մշակներ մահու և սպանության գործոններ դժխեմ,-
 Այդպիսին ես և դու՝ տաժանագին
 Անօրենությամբ ամբարած բոլոր
 Թշվառաքրտինք քո վաստակներով,
 Ա՛նձն իմ, պարտական կրկնակի մահվան:
 Կամավոր քո մեջ ընդունեցիր դու
 Այն բոլորն, ինչ որ թշնամին ցանեց
 Աշխարհի արտում ցորենի վրա,
 Ո՛վ այր անմաքուր,
 Ծույլ ու ամբարիշտ, ատելի իսպառ,
 Ախորժահոժար սիրող ամենի,
 Ինչ որ լցված է անառակությամբ,
 Ինչ առաքյալն է թվել մեկ առ մեկ
 Իր սարսափելի կշտամբանքներով,
 Վերջում գրելով նաև կանոնն այս.
 Նրանք, ասում է, որ վերահասու
 Լինելով հանդերձ Աստծո օրենքին՝
 Գործում են դարձյալ այսպիսի բաներ
 Կամ կամակից են, արժան են մահվան:
 Արդ, ես ինքս եմ ինձ արժանի գտնում կրկնակի պատժի՝
 Կորչել՝ սատկելով որպես մահապարտ:
 Սակայն խնայիր ինձ ողորմությամբ,
 Բարեգո՛ւթ, հզոր, կամարար, կարող,
 Կենսաձիր, օրհնյա՛լ հավիտյանս. ամեն:

ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՍԱՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Խրատ անարգողը աղքատություն և անարգություն կկրի, բայց հանդիսանության ականջ դնողը պատիվ կգտնի (Առակ. 13:18):

Աստվածաշնչից



1. Աղքատին ողորմություն տվողը երանելի է (Առակ. 14:21):
2. Ով որ աղքատին տա, կարոտ չի մնա, բայց ով որ աչքերը թաքցնի՝ շատ անեծքներ կան նրա համար (Առակ. 20:27):
3. Ողորմությամբ և ճշմարտությամբ անօրենությունը կքավվի, Տիրոջ վախով մարդը չարությունից կհեռանա (Առակ. 16:16):
4. Աղքատին ողորմություն տվողը Տիրոջը փոխ է տալիս (Առակ. 19: 17):
5. Եթե թշնամիդ քաղցած է՝ նրան կերակրիր, եթե ծարավ է՝ նրան ջուր տուր, քանի որ այսպես անելով, նրա գլխին կրակի կայծեր պետք է դիզես, և Տերը քեզ հատուցում պետք է անի (Առակ 25:21-22):
6. Քո դրացուն երբեք մի՛ ասա. «Գնա, կգաս վաղը՝ կտամ», երբ քո մոտ կա (Առակ. 3:28):
7. Աղքատին զրկողը նրա ստեղծողին է անարգում, բայց տնանկին ողորմություն անողը Նրան է պատվում (Առակ 14: 31):
8. Ով իր ականջը փակում է (տնանկին) աղքատին չլսելու համար, ինքն էլ, երբ կանչի Տիրոջը, Տերն էլ իրեն չի լսի (Առակ 21: 13):
9. Աստված սիրում է ուրախ և առատածեռն մարդուն. աղքատին ողորմություն անողն ինքն էլ պիտի կերակրվի, որովհետև տնանկին իր հացից է բաժին հանել (Առակ. 22: 9):
10. Մի՛ բռնացիր աղքատի վրա, որովհետև նա խեղճ է, և մի՛ անարգիր տնանկին դատարանի մեջ, որովհետև Տերն է նրա դատն ու դատաստանը անելու և Տերն է, որ անկորուստ պիտի փրկի քո հոգին (Առակ. 22:22-23):
11. Իր ստացվածքը տոկոսով և վաշխով ավելացնողը աղքատին ողորմություն տվողի համար է հավաքում (Առակ 28:8):

12. Ով ցորենը խնայի ժողովրդից, այն պիտի թողնի օտարներին. ով ազահորեն կուտակի, պիտի արժանանա ընդհանուրի անեծքին, բայց ով բաշխի առատորեն՝ օրհնված կլինի: Ով բարիք է անում, նա բարության շնորհ կգտնի, իսկ ով չարիք է նյութում, չարիք կհասնի նրան (Առակ. 11:26-27):
13. Տերը քեզանից ի՞նչ է պահանջում ողորմություն սիրել (Միք. 6:8):
14. Երանի՛ ողորմածներին, քանի որ ողորմություն պիտի գտնեն (Մատթ. 5:7):
15. Իսկ բարիք գործելուց չձանձրանաք, որովհետև հարմար ժամանակ պիտի հնձենք, եթե չթուլանանք: Ահա թե ինչու, քանի դեռ ժամանակ կա, բարին գործենք բոլորի հանդեպ, մանավանդ հավատի մեջ մեր հարազատների հանդեպ (Գաղ. 6: 9-10):
16. Բարերարությունն ու կարոտյալներին ողորմություն տալը մի՛ մոռացեք, քանի որ Աստված այսպիսի պատարագներ է հավանում (Եբր. 13: 16):
17. Դատաստանը անողորմ կլինի նրան, ով որ ողորմություն չի տալիս, և ողորմությունը կպարծենա դատաստանի դիմաց (Հակ. 2: 13):
18. Աստժո՛ մեր Հոր մոտ, մաքուր ու անարատ կրոնասիրությունն այս է. «Որբերին ու որբկայրիներին այցելել նեղության ժամանակ, ու անձը անարատ պահել աշխարհից» (Հակ. 1:27):
19. Երանի նրան, ով աղքատի համար հոգ է տանում: Նեղության օրը Տերը պիտի փրկի նրան (Սաղմ. 40:1):
20. Ջուրը հանգցնում է բորբոքված կրակը, և ողորմածությունը քավում է մեղքերը: Ով բարիք է հատուցում, պիտի հիշվի հետագայում, իսկ սայթաքելիս՝ նեցուկ պիտի գտնի (Սիրաք 3:33-34):
21. Որդյակ, մի՛ գլացիր օգնել աղքատներին և թույլ մի՛ տուր, որ տվայտեն կարոտյալների աչքերը: Քաղցած մարդուն մի՛ տրտմեցրու և մի՛ զայրացրու մարդուն իր չքավորության մեջ: Մի՛ խռովիր արդեն նեղված սիրտը և մի՛ դանդաղիր օգնել կարոտյալներին: Մի՛ մերժիր նեղության մեջ եղողի տառապանքը և քո երեսը մի՛ դարձրու տնանկից: Քո հայացքը մի՛ շրջիր կարոտյալից և առիթ մի՛ տուր, որ մարդը անիծի քեզ, քանզի, երբ նա իր հոգու դառնության պահին քեզ անիծի, նրա խնդրանքը կլսի Տերը (Սիրաք 4:1-6):
22. Ողորմության շնորհը թող բաշխվի բոլոր ողջերին, բայց և մեռածների համար մի՛ խնայիր շնորհներդ (Սիրաք 7:37):
23. Մի՛ հապաղիր հիվանդին տեսության գնալ, և դա շնորհ կհամարվի քեզ համար: Քո բոլոր գործերի մեջ հիշիր վախճանդ և չես մեղանչի երբեք (Սիրաք 7:39 -40):
24. Օգնիր բարեպաշտին և ձեռք մի՛ երկարիր մեղավորին: Բարիք արա խոնարհին և մի օրհնիր ամբարիշտին (Սիրաք 12:4-5):
25. Մինչև վախճանվելը բարիք արա քո բարեկամին, ձեռք մեկնիր ըստ քո կարողության և տուր նրան (Սիրաք 14:13):
26. Քիչ է տալիս, բայց շատ է նախատում, և իր բերանը բացում է իբրև քարոզիչ: Հիմա փոխ կտա, իսկ վաղը հետ կպահանջի. այդպիսին Տիրոջ և

մարդկանց համար ատելի է (Սիրաք 20: 15-16):

27. Տխմարն այսպես է ասում. «Ես բարեկամ չունեմ, և իմ բարի գործերի համար հատուցում չկա: Իմ հացն ուտողները կեղծավորներ են»: Որքան հաճախ և ինչքան շատերը պետք է ծիծաղեն նրանց վրա (Սիրաք 20: 18-19):

28. Ի սեր պատվիրանի, ձեռք մեկնիր աղքատին՝ ըստ նրա կարոտության, և ձեռնունայն մի՛ վերադարձրու նրան: Արծաթը ծախսիր եղբորդ և բարեկամիդ վրա և մի՛ թող, որ ժանգոտվի քարի տակ՝ ի կորուստ: Քո գանձը օգտագործիր համաձայն Բարձրյալի պատվիրանների և դա քեզ օգուտ կլինի ոսկուց ավելի (Սիրաք 29:12-14):

29. Ողորմություն հավաքիր քո շտեմարաններում, և այն կփրկի քեզ գանազան չարչարանքներից: Թշնամու դեմ կճակատի քեզ համար հզոր վահանից և ծանր նիզակից ավելի (Սիրաք 29: 15-16):

30. Եղբայրներն ու օգնությունը փրկում են նեղության ժամանակ, բայց այս երկուսից ավելի՝ ողորմությունը (Սիրաք 40:24):

31. Թող իմ խորհուրդը հաճելի թվա քեզ, քո մեղքերը քավիր ողորմությանը և քո անօրենությունները աղքատներին գթալով, թերևս Աստված համբերատար լինի քո հանդեպ (Դան. 4:24):

32. Քաղցածներին բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին տար քո տունը. եթե մերկ մարդ տեսնես՝ հագցրու նրան, բայց քո ընտանիքի զավակին մի՛ մոռացիր: Այն ժամանակ այգաբացի պես պիտի ծավալվի քո լույսը, և արագորեն պետք է հասնի քո ապաքինումը, քո առջևից պիտի ընթանա քո արդարությունը, և Աստուծո փառքը պիտի պահպանի քեզ: Այն ժամանակ պետք է կանչես, և Աստված պետք է լսի քեզ. մինչև դու խոսես, նա պիտի ասի, թե՛ «Ահա հասել են» (Եսայի 58:7-9):

33. Եթե դու քո միջից հեռացնես խարդախությունը, ձեռնձգությունն ու տրտունջի խոսքը, քո հացը հոժար սրտով քաղցածներին տաս և չքավոր մարդկանց կշտացնես, այն ժամանակ խավարի մեջ կծագի քո լույսը, քո խավարը կվերածվի միջօրեի, և քո Աստվածն ամեն ժամ քեզ հետ կլինի (Եսայի 58: 9-11):

34. Դու կդառնաս քո Աստուծոն, կպահպանես ողորմությունը և արդարությունը, և ամեն ժամ կմերձենաս քո Տեր Աստուծուն (Ովսե 12:6):

35. Բարություն արե՛ք ձեզ ատողներին ու փոխ տվե՛ք նրան, ումից ետ առնելու ակնկալություն չունեք, և ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիներ կլինեք... Գթասիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է (Ղուկ. 6:35-36):

36. Տվե՛ք, և պիտի տրվի ձեզ. ձեր գոգը պիտի լցնեն առատ չափով՝ թաթախուն, շարժուն, լեփ-լեցուն. այն չափով որ չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար (Ղուկ. 6:38):

37. Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես, վաճառիր և տուր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս, և արի՛ իմ ետևից (Ղուկ. 18:22):

38. Երբ ճաշ կան ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին,

ոչ քո եղբայրներին, ոչ քո ազգականներին և ոչ

էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ, երբ ընդունելություն անես, կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը (Ղուկ. 14: 12-13):

39. Մի՛ վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվե՛ք. և ձեզ համար շինեցե՛ք չինացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում և ո՛չ ցեցը՝ փչացնում. որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն (Ղուկ. 12:32-34):

40. Եվ ոչխարները իր աջին պետք է կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին: Այն ժամանակ թագավորը պետք է ասի նրանց, որ իր աջին են. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը. որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք տվեցիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք»: Այն ժամանակ արդարները պետք է պատասխանեն նրան ու ասեն. «Տեր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ ծարավ և ջուր տվեցինք. ե՞րբ տեսանք քեզ օտար և մեր մեջ առանք, կամ մերկ և հագցրինք. ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ ու եկանք այցի»: Թագավորը պետք է պատասխանի ու ասի նրանց. «Ճշմարիտ են ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, այդ Ինձ համար արեցիք»:

Այն ժամանակ նա պետք է ասի նրանց, որ իր ձախին են. «Անիծյալներ, գնացե՛ք ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար, որովհետև քաղցած էի և ինձ ուտելիք չտվիք, ծարավ էի և ինձ ջուր չտվիք, օտար էի և ինձ ձեր մեջ չառաք, մերկ էի և ինձ չհագցրիք, հիվանդ էի ու բանտի մեջ և ինձ տեսնելու չեկաք»: Այն ժամանակ նրանք էլ պետք է պատասխանեն ու ասեն. «Տեր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած կամ ծարավ, կամ օտար, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ ու քեզ չժառայեցինք»: Այն ժամանակ պետք է պատասխանի նրանց ու ասի. «Ճշմարիտ են ասում ձեզ, որովհետև այս փոքրերից մեկին այդ չարեցիք, ինձ համար էլ չարեցիք»:

Եվ նրանք պետք է գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք (Մատթ. 25:33-46):

41. Ով որ մի բան սերմանում է խնայելով, խնայողությամբ էլ կհնձի. և ով առատաձեռնորեն է սերմանում, առատությամբ էլ կհնձի: Յուրաքանչյուրը թող տա, ինչպես հոժար է սրտով և ոչ թե կարգադրաբար և տրտմությամբ, որովհետև Աստված սիրում է զվարթառատ տուրքը (Բ Կորնթ. 10:6-7):

42. Պատվիր Տիրոջը քո արդար վաստակից և քո արդար բերքից պտուղ հատկացրու նրան, որպեսզի քո շտեմարանները լցվեն առատ ցորենով, և քո հնձանները ավելի հորդ գինի բխեն (Առակ.3:9):

43. Եվ Հիսուս նայեց ու տեսավ մեծահարուստներին, որոնք տաճարի գանձանակի մեջ իրենց նվերներն էին գցում: Տեսավ և մի աղքատ այրի կնոջ, որ երկու լումա գցեց այնտեղ: Եվ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ աղքատ այրին ավելի գցեց, քան բոլորը: Նրանք ամենքը իրենց կուտակածներից գցեցին Աստծուն տրված նվերների մեջ, իսկ նա իր կարոտության մեջ իր ունեցած ամբողջ ապրուստը գցեց» (Դուկ. 21: 1-4):

44. Ինձ դարձեք, ու ես ձեզ պիտի դառնամ՝ ասում է ամենակալ Տերը: Սակայն դուք ասում եք՝ ինչո՞վ դառնանք: Միթե մարդ Աստված կկողպատի՞, որ դուք ինձ կողոպտեցիք: Բայց դուք ասում եք. Քեզանից ի՞նչ կողոպտեցինք. տասանորդներ և ընծաներ: Դուք անե՞ծքով անի՞ծված եք, քանզի դուք բոլորդ ինձ կողոպտեցիք: Բոլոր տասանորդները գանձատուն բերեք, որպեսզի իմ տանս մեջ պաշար լինի: Սրանով Ինձ փորձեցեք, ասում է զորքերի Տերը: Թե արդյոք երկնքի պատուհանները պիտի չբացե՞մ ու ձեր համար օրհնություն թափեմ, այնքան շատ, որ բավական տեղ չլինի (Մաղաք. 2:6-10):

45. Թող անիծյալ լինի այն մարդը, որն ունևոր է, իր հոտի մեջ ործ ունի և ուխտ է արել մատուցելու, սակայն արատավորն է մատուցում Տիրոջը (Մաղաք. 1:14):



Հայրեր

1. Ողորմությունները աղոթքի թևեր են, առանց թևերի աղոթքը չի կարող թռչել (Հովհան Ոսկեբերան):

2. Սուրբ հայրերն ասում են, որ մարդկության թշնամին հատկապես ատում է գթասրտությունը (Հովհան Ոսկեբերան):

3. Ողորմություն տվողին ձեռք մեկնողը աղքատ մուրացկանն է, բայց ողորմություն առնողը՝ Աստված է (Հովհան Ոսկեբերան):

4. Քեզ Աստված հարստություն է տալիս, որպեսզի դրանով երկինք գնաս (Հովհան Ոսկեբերան):

5. Հարստությունը միայն այն ժամանակ կլինի մեր սեփականը, եթե այն բաժանենք աղքատներին (Հովհան Ոսկեբերան):

6. Հարստությունը տանը ապահով չէ, իսկ աղքատների ձեռքում՝ ապահով է (Հովհան Ոսկեբերան):

7. Ահա քո ջորիները կանգնել են հագեցած, իսկ Քրիստոս սովից մահանում է քո դռան առաջ (Հովհան Ոսկեբերան):

8. Հավիտենական բարիքներ փնտրիր, կստանաս նաև այժմեականը (Հովհան Ոսկեբերան):

9. Եթե դու նույնիսկ չափազանց կարիքավոր ես, կարիքավոր նույնիսկ նրանցից, ովքեր քեզանից խնդրում են, ամեն դեպքում էլ, եթե դու տաս գոնե երկու լումա, դու ամեն բան կատարած կլինես: Եթե նույնիսկ դու տաս մի կտոր հաց, չունենալով քեզ մոտ ուրիշ ոչինչ դրանից բացի, դու ամեն բան արած կլինես (Հովհան Ոսկեբերան):

10. Ողորմությունը գնահատվում է ոչ թե տվածի քանակությամբ, այլ բարի տրամադրվածության առատությամբ (Հովհան Ոսկեբերան):

11. Ողորմությունը դա արվեստ է, որի ուսումնարանը գտնվում է երկրնքում, իսկ ուսուցիչը մարդ չէ, այլ Աստված (Հովհան Ոսկեբերան):

12. Ողորմությունը պատրաստում է հավիտենական կյանք, փախցնում է մահվան ճիրաններից, փառավորում է թե՛ այս և թե՛ այն կյանքում, երկնքում պատրաստելով քեզ համար հավիտենական կացարաններ: Նա թույլ չի տալիս, որ հանգչեն մեր լապտերները, թույլ չի տալիս հարսանյաց առագաստ մտնել ապականված հանդերձներով, այլ մաքրում է այն դարձնելով ձյունից սպիտակ. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիր լինեն, ձյան պես պիտի սպիտակեցնեն» (Ելից 1:18): Նա թույլ չի տալիս մեզ ընկնել այնտեղ, ուր ընկավ հարուստը և լսել զարհուրելի խոսքերը, այլ առաջնորդում է մեզ դեպի Աբրահամի գոգը (Հովհան Ոսկեբերան):

13. Եվ այսպես, նվիրաբերենք մեզ այս գիտությանը և արվեստին և սկսենք վարժվել նրանում: Տիրապետել սրան առավել է, քան թե թագավոր լինելը ու դավնեպսակներով զարդարվելը: Ողորմությունը շնորհում է անսպառելի հարստություն, դարձնում մահվանը հաղթող, պարտության է մատնում սատանային և նմանեցնում Աստծուն: Եվ այսպես, ի՞նչը կարող է առավել օգտակար լինել այս արվեստից: Մյուս բոլոր արվեստները վերջ են գտնում այս կյանքի հետ միասին, իսկ ողորմությունը աշխարհի վերջին առավել հստակ է ի հայտ բերում իր կարողությունը և չի պահանջում ոչ ժամանակ, ոչ ջանք և ոչ մի այլ դժվար բան: Նա գործում է թե՛ հիվանդության ժամանակ, թե՛ ծերության, ուղեկցում է դեպի հավիտենական կյանք և երբեք քեզ չի թողնում: Այն քեզ դարձնում է ավելի զորեղ իմաստուններից և ճարտասաններից, սրանց նախանձողները շատ են, իսկ նրանք, որոնք ճանաչվել են իրենց ողորմածությամբ, ձեռք են բերել իրենց համար անթիվ քանակությամբ աղոթողներ (Հովհան Ոսկեբերան):

14. Ողորմությունը կանգնում է դատաստանի առջև և ոչ միայն պաշտպանում է, այլև հենց Իրեն, Արդար Դատավորին որպես դատա-

պաշտպան է ունենում (Յովհան Ոսկեբերան):

15. Տույց տանք մեծ առատաձեռնություն ողորմություն տալու մեջ, որպեսզի տալով մի փոքր, արժանանանք մեծ պարգևների: Քանի որ, ասա ինձ, ի՞նչ հավասարություն կա այստեղ, տալ մի փոքր զումար և ստանալ մեղքերի թողություն: Կերակրել քաղցածին, և արժանանալ համարձակության դատաստանի ահավոր օրը և լսել խոսքերը, որ թագավորություններ արժի. «Քաղցած էի, և ինձ կերակրեցիք» (Մատթ. 25:35) (Յովհան Ոսկեբերան):

16. Մի՞թե Նա, որ քեզ արժանացնում է շնորհների, չի՞ կարող նույնը անել և կարիքավորների համար և բավարարել նրանց պակասությունները: Բայց նա թողնում է նրանց աղքատության մեջ այն բանի համար, որպեսզի նրանք արժանանան մեծ պարգևների՝ համբերությամբ այդ բոլորը կրելու համար, և դու էլ ողորմություն տալով, ձեռք բերես անվեհերություն: Տեսա՞ր Տիրոջ մարդասիրությունը, ինչպես է Նա ամեն բան մեր փրկության համար ծառայեցնում: Եվ այսպես, երբ մտածես, որ կարիքավորը պայքարելով աղքատության դեմ տկարանում է սովից, քո օգտի համար, մի անցիր նրա մոտից անտարբեր, այլ եղիր հավատարիմ բաշխող այն բանի, որ վստահված է քեզ Տիրոջ կողմից, որպեսզի բավարարես աղքատի կարիքները և դու էլ ձեռք բերես քեզ համար մեծ օգնություններ: Փառավորիր Տիրոջը այն բանի համար, որ Նա քո փրկության համար թույլ է տվել այդ մարդուն ապրել աղքատության մեջ, որպեսզի դու դրանով կարողանաս գտնել քեզ համար միջոց, թե՛ մեղքերդ սրբելու և թե՛ բարի կերպով օգտագործելու Տիրոջից քեզ վստահված բարիքները և վաստակել այն գովքը, որ վեր է ամեն խոսքերից և մտքից, քանի որ դու կլսես հետևյալը. «Բարի և հավատարիմ ծառա, փոքրի մեջ հավատարիմ եղար, շատի վրա քեզ կկարգեն, մտիր քո Տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25:23) (Յովհան Ոսկեբերան):

17. Եվ այսպես, տանք առատ ողորմություն և ցանենք, քանի դեռ ժամանակ կա, որպեսզի ստանանք առատ բերք, քանի որ ասված է. «Բայց այս իմացեք թե՛ նա, որ խնայելով է սերմանում՝ խնայելով պիտի հնձի ու նա, որ առատությամբ է սերմանում՝ առատությամբ պիտի հնձի» (Բ Կորնթ. 9:6): Եվ այսպես, ժլատության ձեռքով չցանենք այդ բարի սերմերը, որպեսզի իր ժամանակին հնձենք մեր համար լիությանը: Այսօր է սերմանելու ժամը, բաց չթողենք այն, որպեսզի հատուցման օրը հավաքելով պտուղը, արժանանանք Աստծո մարդասիրությանը: Ոչ մի այլ առաքինություն չի կարող այնպես մաքրել մեր մեղքերի հուրը, ինչպես ողորմության առատությունը: Նա և՛ մեր մեղքերն է ոչնչացնում և Աստծո առաջ կանգնեցնում անվեհերորեն և պատրաստում է անպատմելի այն երանություններին (Յովհան Ոսկեբերան):

18. Լինելով ջանասեր բարեգործության մեջ, չմտածենք, թե ամեն բան արդեն իսկ արել ենք՝ ողորմություն տալով մեկ կամ երկու անգամ: Քանի որ այս պետք է անել ամբողջ կյանքի ընթացքում: Քանզի Աստծուն հաճոյանալը այնպիսի գործ չէ, որով պետք է զբաղվել մեկ անգամ, այլ այն

պետք է գործի ամբողջ կյանքի ընթացքում,

անդադար: Եթե մրցասպարեզով վազողը կատարելով տաս պտույտ, ետ մնա վերջին պտույտը վազելու պահին, կկորցնի ամեն ինչ: Այդպես էլ մենք, սկսելով բարի գործեր անել, եթե վերջում թուլանանք, ամեն բան կորցրած կլինենք, բոլորը կփչացնենք. «Թող ողորմությունն ու հավատարմությունը չպակասեն քեզանից» (Առակ. 3:3): Ասված չէ բարեգործություն արա մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ, տաս կամ հարյուր անգամ, այլ ամեն ժամ «թող չպակասեն քեզանից»: Եվ չի ասում, թե դու մի թող, այլ թող քեզանից չպակասի, դրանով ցույց տալով, որ մենք դրանց կարիքն ունենք, այլ ոչ թե նրանք մեր և մեզ մղում են նրան, որ մենք այնպես անենք, որ մշտապես այն՝ բարեգործությունը ունենանք մեր մոտ: Ինչպես որ հարուստների երեխաները մշտապես իրենց վրա կրում են ոսկե զարդեղեններ և երբեք չեն հանում դրանք՝ ցույց տալով իրենց ազնվական ընտանիքից լինելը, այդպես էլ մենք միշտ պիտի ողորմածությունը մեր վրա ունենանք, որպեսզի դրանով երևա, որ մենք Ողորմածի որդիներն ենք: Մեր վրա կրենք այս զարդը, ոսկյա այս վզնոցը հագցնենք մեր հոգուն, այսինքն՝ ողորմությունը, քանի դեռ մենք այս կյանքում ենք: Եվ երբ այս ժամանակն անցնի, այնժամ էլ նրա կարիքը չի լինի, որովհետև այնտեղ չկան աղքատներ, այնտեղ չկա դրամ և ընդհանրապես չկա աղքատություն (Յովհան Ոսկեբերան):

19. Ողորմությունը առաքինությունների թագուհին է, որ շատ մեծ արագությամբ բարձրացնում է մարդուն մինչև երկինք և հանդիսանում է նրա ամենալավ պաշտպանը: Մեծ է թռիչքը ողորմության: Այն ճեղքում է օդը, անցնում է լուսնից վեր, վեր ելնում արևի ճառագայթներից՝ հասնելով բուն երկինք: Բայց այնտեղ էլ նա կանգ չի առնում, ընդհակառակը անցնելով երկինքը, ընդհանում է հրեշտակների դասերի միջով, հրեշտակապետերի կացարաններով և վեր ելնում բոլոր վերին զորություններից առավել, ներկայանալով հենց Թագավորի գահի առջև: Սովորիր այս հենց Սուրբ Գրքից, որում ասվում է. «Կոռնելիոս, քո ողորմությունները հասան Աստծո առջև» (Գործք. 10:4) (Յովհան Ոսկեբերան):

20. Ինչքան էլ որ լինեն քո մեղքերը, ողորմություններն անցնում են նրանցից: Մի՞թե չզիտես առակը տասը կույսերի մասին, որոնցից հինգը որպես ողորմություն չունեցողներ, չնայած որ պահպանել են իրենց կուսությունը մնացին հարսանյաց առազաստից դուրս: Հիմարներն էլ ունեին լապտերներ, բայց յուղ չունեին: Քանի որ կուսությունը կրակ է, իսկ ողորմությունը յուղ: Իսկ ովքե՞ր էին յուղ վաճառողները, աղքատները, որոնք կանգնած են եկեղեցու դռան առջև: Իսկ ինչքանով է այն վաճառվում, ինչքանով որ ցանկանաս: Գին չի նշանակված, որպեսզի դու չպատճառաբանես քո աղքատությունը (Յովհան Ոսկեբերան):

21. Մենք դրված չենք որպես դատավոր ուրիշների կյանքի համար, այլապես մենք ոչ ոքի ողորմություն չենք տա: Երբ դու աղոթում ես մի՞թե չես ասում. «Մի՛ հիշիր իմ մեղքերը» (Սաղմ. 24:7): Այդպես էլ աղքատը, եթե նա նույնիսկ մեծ մեղավոր է, տուր նրան և մի հիշիր նրա մեղքերը: Այսօր է

ժամը մարդասիրության, այլ ոչ թե դատաստանի

խստության, ողորմության և ոչ թե դատելու: Նա ուզում է ուտել, եթե ցանկանում ես տուր նրան, եթե չես ցանկանում, հրաժարվիր առանց քննելու, թե ինչու է նա աղքատ և դժբախտ: Ինչո՞ւ համար դու չես տալիս և ուրիշներին էլ մղում ես այդ բանին: Քանի որ, եթե մեկը քեզանից լսի, որ այս աղքատը խաբեբա է, կեղծավոր է, վաշխառու է, այնժամ ողորմություն չի տա ոչ նրան, ոչ էլ մյուսներին, մտածելով, որ նրանք բոլորն էլ այդպիսին են: Հայտնի է, թե ինչ հեշտ ենք մենք հավատում վատ բաներին և ինչ դժվարությամբ լավ բաներին: Մենք ոչ միայն պիտի լինենք ողորմած, այլ այնպես ինչպես որ մեր Երկնավոր Հայրն է (Մատթ. 5:48), Նա կերակրում է թե՛ շնացողներին, թե՛ պոռնիկներին, թե՛ խաբեբաներին և ընդհանրապես ամեն տեսակ չարագործություն անողներին (Հովհան Ոսկեբերան):

22. Եվ այսպես, լինենք ողորմած, որպեսզի մենք ինքներս գտնենք ողորմություն: Ոչ այնքան նրանց համար, այլ ինքներս մեր համար, որովհետև մենք այդպիսով յուր ենք հավաքում մեր լապտերներին այն ահավոր օրվա համար: Երբ կլինի հուժկու կրակ և բոցեր, այնժամ այս յուրը կհանգցնի այդ կրակը և կդառնա մեզ համար լույսի պատճառ: Նման ձևով մենք կփրկվենք գեհեների կրակներից: Հակառակ դեպքում, ինչպիսի՞ գթասրտություն պիտի ցույց տա մեր հանդեպ Աստված, ինչպե՞ս պիտի ողորմի մեզ: Ողորմությունն առաջանում է սիրուց: Եվ ոչինչ այնպես չի բարկացնում Աստծուն, ինչպես անողորմ լինելը: Նրա մոտ բերեցին բազմաթիվ տաղանդների պարտք ունեցող մեկին, և Նա գթալով ազատ արձակեց նրան, թողնելով նրա պարտքը: Իսկ սա, երբ սկսեց խեղդել նրան, ով իրեն մի քանի դիմար էր պարտք, սրա համար Տերը նրան մատնեց տանջանքների (Մատթ.18), մինչև որ վճարի ամբողջ պարտքը (Հովհան Ոսկեբերան):

23. Ինչպես որ ճնճողուկը, եթե նույնիսկ ամբողջ մարմնով չի, որ ընկնում է ցանցի մեջ, այլ միայն մարմնի մի մասով, օրինակ, ոտքով, միևնույն է, գտնվում է ցանցը զցողի իշխանության տակ: Այսպես էլ և մենք: Ոչ միայն ամբողջ կյանքի համար, այլ նույնիսկ ընդամենը մի արատի պատճառով մարդիկ զգվել են գեհեն, եթե չեն ունեցել համազոր բարեգործություն: Այդպես և հիմար կույսերը դատապարտվեցին ոչ թե անառակության կամ պոռնկության, կամ նախանձի, թշնամության, կամ հարբեցողության, կամ էլ ոչ ուղղափառ հավատքի, այլ յուրի պակասության համար, այսինքն՝ նրա համար, որ ողորմություն չեն տվել, քանի որ դա է յուրը: Եվ նրանք էլ դատապարտվեցին, որոնց ասվեց. «Հեռացեք ինձանից, անիծյալներ, հավիտենական հուրը», սման մի բանի համար, այսինքն, որ չհագեցրին Քրիստոսի ծարավը: Տեսնում ես, որ միայն ողորմություն չտալու արատը կարող է զգել գեհեների կրակների մեջ: Ասա ինձ, ո՞ւմ է պետք, որ ողորմություն չի տալիս: Դու պահեք ես պահում ամեն օր, բայց այն կույսերն էլ էին պահում, սակայն ոչ մի օգուտ չստացան: Դու աղոթո՞ւմ ես, բայց ի՞նչ օգուտ, առանց ողորմության աղոթքն անպտուղ է: Առանց նրա ամեն բան

անմաքուր է, անօգուտ, առանց նրա իզուր է առաքինությունների մեծամասնությունը (Հովհան Ոսկեբերան):

24. Ջանա՞ք նմանվել Աբրահամին: Նա նստելով իր դռան առջև, որսում էր բոլոր եկվորներին ինչպես ձկնորսը, որն իր ցանցը զցում է ծովը և ձուկ բռնում: Երբեմն էլ դուրս է հանում թե՛ ոսկի և թե՛ մարգարիտ, այդպես էլ Աբրահամը, որսալով մարդկանց, մի անգամ էլ որսաց հրեշտակներին: Եվ ինչն է զարմանալի, որ ինքը դա չգիտեր, ինչի վրա և զարմացավ Պողոսը (Եբր. 13:2): Քանի որ եթե նա իմանար, թե ովքեր են եկվորները և ընդունեն նրանց այդ պատրաստակամությամբ, ոչ մի մեծ բան արած չէր լինի, այլ գովասանքը նրանում է, որ չիմանալով, թե ովքեր են նրանք և կարծելով, թե սովորական անցորդներ են, նա այդպիսի մեծ ջանասիրությամբ ընդունեց նրանց իր տունը: Եվ դու էլ, եթե մեծ ջանասիրություն ցուցաբերես՝ ընդունելով մի ինչ-որ հեղինակավոր և փառավոր մարդու, ոչ մի զարմանալի բան արած չես լինի, քանի որ հեղինակավոր հյուրին հաճախ անհյուրընկալ մարդիկ էլ մեծ պատրաստակամություն են ցուցաբերում: Բայց ահա, թե ինչն է ամենամեծը և զարմանալին: Երբ մենք սովորական մարդկանց մերժվածներին և չնչիններին ընդունում ենք մեծ ուրախությամբ, սրա համար էլ Քրիստոսն ասաց՝ գովալով նման ձևով վարվողներին. «Ինչ որ արեցիք այս փոքրերից մեկին՝ Ինձ արեցիք» (Մատթ. 25:40) (Հովհան Ոսկեբերան):

25. Լվացի՞ր մարմնավոր ձեռքերդ ջրով, լվա հոգևոր ձեռքերդ ողորմությամբ: Մի պատճառաբանիր քո աղքատությունը: Այրի կինն իր ծայր աստիճան աղքատության մեջ իր տուն հրավիրեց Եղիային, և աղքատությունը արգելք չհանդիսացավ նրան, այլ մեծ ուրախությամբ ընդունեց և ստացավ արժանի պտուղը՝ հավաքելով ողորմության հունձքը: Ի՞նչ է, փնտրում ես Եղիայի՞ն: Եղիայի Տիրոջն են քեզ տալիս, և չես կերակրում նրան: Քրիստոս Տերն ասաց. «Ով տվեց այս փոքրերից մեկին, Ինձ տվեց»: Եթե թագավորը կանչի ինչ որ մեկին ընթրիքի և ասի իր ծառաներին. «Շնորհակալ եղեք իմ փոխարեն, ամեն կերպ գոհացրեք այս մարդուն, քանի որ նա կերակրեց և ընդունեց ինձ իր տանը, երբ ես գտնվում էի աղքատության մեջ, նա ինձ մեծ բարիքներ արեց իմ կարիքավորության ժամանակ»: Ամեն մեկն էլ իր հարստությունը կդներ և իր բոլոր դրամները կծախսեր նրա համար, ում թագավորը հայտնել է իր երախտագիտությունը: Մի՞թե բոլորն էլ չէին ցանկանա մոտենալ և բարեկամանալ նրա հետ: Եվ եթե թագավորը մարդ լինելով, ունի այդպիսի պատիվ, պատկերացրու քեզ, որ Քրիստոս այն օրը կանչելով բոլոր հրեշտակներին և բոլոր զորություններին, կասի. «Այս մարդը երկրի վրա ընդունեց ինձ իր տունը, նա ցույց տվեց ինձ բազում բարեգործություններ, նա ընդունեց Ինձ՝ Օտարականիս»: Այնժամ պատկերացրու անվեհերությունդ հրեշտակների մեջ, խնդությունդ հրեշտակների դասերի հետ: Այսպես, եղբայր, մեծ գործ է ողորմությունը: Սիրիր այն, որին հավասար ոչինչ չկա, նա կարող է և հարթել մեղքերը և ազատել դատաստանից: Դու լուռ

կանգնած ես, իսկ նա կանգնել և պաշտպանում է քեզ, երբ դու դեռ լռում ես, հազարավոր բերաններ շնորհակալ են լինում քեզանից: Որքան բարիք է լինում ողորմությունից, իսկ մենք հեղգանում ենք և հոգ չենք տանում: Տուր հնարավորությանդ չափով հաց: Հաց չունես, մի գրոշ տուր: Այդ էլ չունես՝ տուր մի բաժակ սառը ջուր: Այդ էլ չկա՝ լացիր տարաբախտի հետ և կստանաս պարգև, քանի որ պարգևը տրվում է ոչ ստիպողաբար տալու ժամանակ, այլ բարի կամեցողության ժամանակ (Հովհան Ոսկեբերան):

26. Ով զիջում է, նա ավելի է ձեռք բերում (Անտոն Անապատական):

27. Պարզ և սպասիր ոչ թե այստեղ, այլ երկնքում (Անտոն Անապատական):

28. Իմացիր, ողորմություն տալն արվեստ է և բոլոր արվեստներից գերազանց, որը դժոխքից փրկելով՝ Արքայություն է պարգևում (Բարսեղ Կեսարացի):

29. Աղքատները, երբ ողորմություն տաս՝ մեղքեր սրբող թաշկինակ են (Բարսեղ Կեսարացի):

30. Ապաշխարությունն ու խոնարհությունը կանգնեցնում են անձը՝ ողորմությունը և հեզությունը ամրապնդում են նրան (Եվագր Պոնտացի):

31. Ով չար բան է խոսում եղբոր դեմ՝ նա կոչնչացվի, իսկ կարիքավորների՝ արհամարհողը լույս չի տեսնի (Եվագր Պոնտացի):

32. Հավատքը՝ խոնարհությամբ մնալն է և ողորմություն անելը (Հայր Պիմեն):

33. Որքան որ կարող ես՝ ողորմություն տուր, որովհետև գրված է, թե ողորմությունով և հավատքով սրբվում են մեղքերը (Հայր Պիմեն):

34. Ճանապարհը դառնում է հարթ՝ ողորմություն տալուց (Մարկոս Եզնավոր):

35. Հարց. -Իսկ նա, ով սովոր չէր ողորմություն անելու, ի՞նչ պետք է անի, որպեսզի վարժվի ողորմություն բաժանելուն:

Պատ. -Նա պետք է ինքն իրեն հիշեցնի Աստծո այն խոստումները, որոնք տվել է ողորմածներին, և սկսի ամենավերջին առարկաներից, միշտ գիտակցելով, որ քիչ է տալիս, քիչ էլ ստանում է: Իսկ նա, ով շատ է տալիս, շատ էլ ստանում է: Հիշելով ասվածը, թե. «Յուրաքանչյուրը թող տա, ինչպես հոժար է սրտով, և ոչ թե հարկադրաբար և տրտմությամբ, որովհետև Աստված սիրում է զվարթառատ տուրքը» (Կորնթ. 2:9-7):

Եվ այսպես, կամաց-կամաց նրա մեջ կուժեղանա ավելի շատ անելու պահանջ, և նա էլ այս առաքինության մեջ աստիճանաբար կառաջադիմի: Նա կարող է կատարելության անպիսի չափանիշների հասնել, որ կձերբազատվի երկրայինից և հոգով երկնայինների հետ կլինի (Բարսիլիսկոս Մեծ):

36. Հարց. -Երբ ես ուզում եմ ողորմություն անել, իսկ միտքս ներշնչում է չտալ, ապա ինչպե՞ս վարվել նման դեպքում:

Պատ. -Քննիր միտքդ, և եթե տեսնես, որ այսպես ես վարվում ժլատությունից դրդված, ապա նախատեսվածից ավելին տուր, թեկուզ մի

պղնձադրամ ավելի, և դա ողորմություն կհամարվի (Բարսիլիսկոս Մեծ):

37. Ուզու՞մ ես հոգով հարաբերվել Աստծո հետ, վայելել այն քաղցրությունը, որ բռնադատված չէ զգացմունքներով՝ հետևի որ ողորմությանը (Իսահակ Ասորի):

38. Տալիս եմ քեզ, ով եղբայր, հետևյալ պատվիրանը. քեզ մոտ թող միշտ առաջնային լինի ողորմությունը, մինչև որ մեր մեջ զգանք այն ողորմածությունը, ինչպիսին որ Աստված ունի աշխարհի հանդեպ: Մեր գթարտությունը մեզ համար թող հայելի լինի, որպեսզի նրանում ինքներս մեր մեջ տեսնենք նմանությունը և ճշմարիտ կերպարը, որ կա Աստծո էության մեջ: Այս նմանողականությամբ լուսավորվենք այն բանի համար, որպեսզի սթափ կամեցողությամբ ջանանք կենցաղավարել Աստվածահաճո կերպով (Իսահակ Ասորի):

39. Կարծրացած և անգութ սիրտը երբեք չի մաքրվում: Իսկ ողորմած մարդն իր հոգու բժիշկն է, որովհետև ուժգին քամու պես իր միջից դուրս է քշում մթազնած կրքերը: Սա՝ ողորմածություն է: Ավետարանական Կենաց խոսքի համեմատ բարի պարտք է, որ փոխ ենք տալիս Աստծուն (Իսահակ Ասորի):

40. Ցանիր ողորմություն խոնարհության վրա և կինձես ողորմածություն դատաստանի օրը (Իսահակ Ասորի):

41. Ինչով որ դու կործանել ես բարին, նույնով էլ հենց ջանա այն վերագտնել: Որովհետև, եթե դու Աստծուց պարտքով վերցրել ես մի բան, դրա փոխարեն նա չի վերցնի քեզանից մեկ ուրիշը: Աստված չի ընդունի քեզանից ողորմություն, եթե դու հարատևում ես շնության մեջ, որովհետև քեզանից ցանկանում է մարմնի սրբություն, քանի որ դու խախտել ես օրենքը (Իսահակ Ասորի):

42. Ոչինչ չի կարող սիրտն այնպես մերձեցնել Աստծուն, ինչպես ողորմությունը, և ոչինչ այնպիսի հանդարտություն չի տալիս մտքին, ինչպես որ կամավոր աղքատությունը (Իսահակ Ասորի):

43. Եթե մեկը նստած լինելով՝ մտուզի վրա, ձեռք երկարի քեզ ողորմություն ստանալու ակնկալիքով, մի մերժիր նրան, քանի որ այդ պահին նա անկասկած կարիքավոր է, ինչպես որ աղքատներից յուրաքանչյուրը: Եվ երբ տաս, այդ արա մեծահոգությամբ և դեմքի բարեհամբույր արտահայտությամբ և տուր նրան առավել, քան իր ակնկալիքն է: Քանի որ ասված է. «Հացդ ջրին տուր՝ թող տանի, շատ օրեր անց պիտի նորից գտնես այն» (Ժողով. 11:1): (Իսահակ Ասորի):

44. Եթե բարիք ես անում մեկին, ապա նրանից մի սպասիր փոխհատուցում, քանի որ Տերը հետագայում կրկնակին կշնորհի քեզ: Եվ եթե հնարավոր է քեզ համար, ողորմություն տալուց մի ակնկալիր փոխհատուցում, նույնիսկ ապագայում (Իսահակ Ասորի):

45. Սրբերից մեկն ասել է. «Եթե ցանկանում ես սերմանել աղքատների մեջ, ցանիր քո սեփականից: Իսկ եթե մտադրվել ես ցանել ուրիշինից, այնժամ իմացիր, որ դա ամենադառը որոնմ է» (Իսահակ Ասորի):

46. Եթե ողորմածն իր անձի արդարությունից

վեր չի կանգնած, նա ողորմած չէ, այսինքն՝ ողորմածը ոչ միայն ողորմություն է տալիս մարդկանց իր սեփականից, այլ նաև ուրախությամբ համբերում է այլոց կողմից իր հանդեպ եղած ստությանը և գթությամբ է վերաբերվում նրանց (Իսահակ Ասորի):

47. Քո ողորմությունը թաքցրու աղքատի ծոցում, որպեսզի Դատաստանի օրն այն գտնես Քրիստոսի ծոցում (Վարդապետների գրվածքներից):

48. Սերը ցուցաբերվում է քաղցր խոսքով և առատատրությամբ (Վարդապետների գրվածքներից):

49. Ողորմություն պետք է համարել միայն այն նվիրատվությունները, որ Աստծո սիրո համար արդար վաստակից բաշխվում են կարոտյալներին, ըստ կարողության չափի, վարթադեմ, անտրտուն, անմիջապես և ծածուկ (Պողոս Պատրիարք):

50. Գթություն կարելի է անել ըստ կարողության և ցանկության: Եթե մեկը չունի կարողություն և ունեցվածք՝ կարոտյալներին առատաձեռն օգնելու, թող այնքան տա, որքան կարող է: Մեր Տերն ասում է. «Ով որ այս փոքրիկներից մեկին միայն մի բաժակ սառը ջուր խմեցնի աշակերտի անունով, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա իր վարձքը չի կորցնի» (Մատթ. 10:42) (Պողոս Պատրիարք):

51. Չարություն անելուց չզղջացողները, թող չհուսան, թե միայն ողորմություն տալով կհասնեն փրկության: Հանդգնություն է հուսալ ողորմության արդյունքների վրա և անխիղճ մեղանչել ու մեղքերից չդառնալ: Ողորմությունը կաշառք չէ, որ ծռի Աստծո իրավունքները և խափանի Նրա արդարությունները (Պողոս Պատրիարք):

52. Ողորմություն սերմանեցիր՝ հավիտենական կյանք հնձիր նրանից. մարդասիրություն սերմանեցիր՝ Աստծո գթությունը հնձիր. անողորմություն սերմանեցիր՝ փուշ ու տատասկ քաղիք (Սարգիս Շնորհալի):

53. Աստծո համար մեկ դահեկան քո ձեռքով աղքատին տալը շատ անգամ ավելի արժի, քան ուրիշների ձեռքով տաս դահեկան տալը (Սարգիս Շնորհալի):

54. Երբ այսպիսի առատաձեռն և բարերար Տեր ունենք, չխնայենք Նրան տալ, ինչ- որ մեր ձեռքին ունենք, որովհետև Նա անարգամեծար Տեր է, փուչը և չնչինը վերցնում է և մեծ տոկոսով վերադարձնում: Ոսկի՝ տալ և փոխարենը մեղքերի թողություն գտնել. սրանից ավելի մեծ էլ ի՞նչ ես ուզում. տակավին սրա վրա Երկնքի Արքայությունը իբրև տոկոս կստանաս. մի կտոր հաց տալ և Արքայության սեղանին սեղանակից և մասնակից լինել. մի բաժակ ջուր տալ և համազոյական աղբյուրներից խմել. հագուստ հագցնել և առաջին լուսեղեն պատմունճանին արժանի լինել (Սարգիս Շնորհալի):

55. Պահք են պահում, աղոթում են, հառաչում են, չոր գետնի վրա են պառկում և ժուժկալում, բայց ի՞նչ օգուտ ունեն այս ամենից, երբ աղքատներին մի դահեկան իսկ չեն տալիս: Եթե ողորմած չենք, մնացածը

ոչ մի օգուտ չունի, որովհետև մնացյալը

առաքինության ճրագներն են, իսկ սա յուզն է՝ ճրագների լուսավորության պատճառը: Եթե մեկը յուզ չունի, ի՞նչ օգուտ պիտ գտնի ճրագներից. հիմար կույսերն էլ, որոնք շատ բաներով կատարյալ էին, բայց որովհետև տմարդի էին և ողորմության յուզ չվերցրեցին իրենց հետ, խավարի մեջ բնակվեցին, հարսանիքի առագաստին արժանի չեղան և կորստյան դատապարտվեցին (Սարգիս Շնորհալի):

56. Արդարև, առաքինությունների մեջ չկա ուրիշ մեկը, որ մարդուն Աստծո նմանությամբ վեր բարձրացնի, ինչպես ողորմածությունը. և բոլոր առաքինությունների կատարումը Աստծուն նմանվելն է, ինչպես Տերն էլ ասաց. «Նմանվեցեք ձեր Հորը, որ երկնքում է. Նա Իր արևը ծագեցնում է թե՛ չարերի և թե՛ բարիների վրա, և անձրև է բերում թե՛ արդարների վրա և թե՛ մեղավորների վրա» (Մատթ. 5:45): Տեսար, թե ողորմության շահը քեզ ում կարող է նմանեցնել և ում մոտ բնակեցնել: Սրանով կբացվեն երկնքի դռները և կմտնենք լույսի առագաստը, կպայծառանան մեր լապտերները և ուրախությամբ Փեսային կդիմավորենք. կջնջվի մեր մեղքերը և կծածկվի մեր անօրենությունները: Սրանով ավելի վեր կիրավիրի թագավորը և գովասանքի կարժանացնի (Սարգիս Շնորհալի):

57. Բացի սեփական կամքից, ոչ մի ուրիշ բան չի կարող մարդուն ետ պահել ողորմություն տալուց, ոչ ժամանակը, ոչ չքավորությունը, ոչ այլ խանգարող հանգամանք: Եթե ոսկի չունես ողորմելու, սակայն ձեռքեր ունես, որով կարող ես կարոտյալներին օգնել, հաց չունես, որպեսզի աղքատին կերակրես, սակայն լեզու ունես, որով Կենաց հացը կարող ես տալ և հասարակության օգուտի համար աղոթք կարող ես մատուցել: Հիվանդին դարմանելու կարողություն չունես, սակայն ոչ մի բան քեզ չի արգելում հիվանդատես գնալ: Բանտարկյալին ազատելու կարողություն չունես, սակայն ոտք ունես նրա մոտ գնալու և նրան տեսնելու, քաջալերելու, մխիթարելու և նրան ցավակցելու, հառաչելու և Աստծուն աղաչելու, վշտակից լինելու նրա վշտերին և արձակիչ կապանքներին:

Այս բոլորը հարստությունից պակաս ողորմություններ չեն, միայն թե հոժարությամբ կատարվեն, որովհետև Աստված ոչ թե տրվածին է նայում, այլ հոժար կամքին (Սարգիս Շնորհալի):

58. Պետք է շնորհք համարես, երբ աղքատը վերցնում է քեզանից, որովհետև աղքատները եթե չլինեին, չէիր կարող մեղքի վերքերդ բուժել: Աղքատի ձեռքերը վերքեր դարձանող են: Բժիշկը ձեռքերը երկարելով չի կարող քեզ ցավերից այնպես բուժել, ինչպես աղքատը, երբ նա իր ձեռքը երկարելով քեզանից վերցնում է (Բարսեղ Մաշկակորցի):

59. Նա, որ ստիպողաբար է տալիս, մեղքերի թողություն չի գտնի, որովհետև Աստված ուրախ սրտով տրվածն է սիրում: Իսկապես, ողորմությունն այն է, երբ ուրախությամբ են տալիս և ոչ թե տրտմությամբ: Ինչո՞ւ են տրտմում, որովհետև ինչքերդ պակասեցի՞ն: Եթե հույս չունես, որ երկնքում բազմապատիկ ավելի շատ պիտի ունենաս, բնավ մի՛ տուր

(Բարսեղ Մաշկևորցի):

60. Երբ ուզում եմ ողորմություն տալ, սատանան հիշեցնում է ինձ իմ աղքատությունը (Հովհան Մանդակունի):

61. Աստված ոչ թե տվածի չափին է նայում, այլ տվողի տրամադրությանը (Հովհան Մանդակունի):

62. Մինչև իսկ բարեպաշտ գործերի առաքինությունը կարող է նսեմացվել ողորմություն տվողների լուսավորության մեջ (Հովհան Մանդակունի):

63. Ահա թե ինչ է ուսուցանում քեզ Քրիստոս. «Զգույշ եղիր, ողորմություն մի կատարիր մարդկանց առջև, որովհետև այն, ինչ որ մարդկանց աչքերի առջև կատարվի, իր հատուցումը մարդկանցից կընդունի, այլ ջանա ողորմությունդ գաղտնի գործել և քո Հայրդ, որ ծածկապես տեսնում է, պիտի հայտնապես հատուցի քեզ» (Մատթ. 6:1): Արդ, մի զրկվիր այդպիսի վարձատրությունից, ողորմությունդ տեսնողների առջև մի արա, այլ զգուշությամբ և ծածկորեն, քանի որ շատ մոտ է գողը, որպեսզի վարձքդ գողանա: Դարանակալ սպասում է ավազակը, որ հափշտակի ողորմությունդ, մերձ են նենգավորները, նենգելու և հանելու համար քո մեջ եղած բարին: Ամբարիշտները շրջապատած շրջում են շուրջդ և ջանում անարդյունք և անվաստակ դարձնել աշխատությունդ, այս բոլորից խուսափիր զգուշությամբ և իմաստությամբ, զգուշացիր մարդահաճության ակտից և սնամիառության դեհից, որպեսզի բարիքդ չարիքի չվերածեն և լույսդ չխավարեցնեն: Որովհետև մեջդ եղող լույսդ եթե խավար լինի, այլևս որչափ ավելի մութ պիտի լինի բուն խավարը, այսինքն, եթե ողորմությունդ չարիքի վերածվեց, որքան առավել և ահավոր պիտի լինեն չարիքներդ (Հովհան Մանդակունի):

64. Սրանից հետո ծածուկ կերպով կատարիր ողորմություններդ, այնպես, ինչպես որ չես ուզում մեղքերիդ պղծությունը ցույց տալ, այնպես էլ ապաշխարությանդ ողորմությունը մի ցուցադրիր, այլ՝ ապաշխարության առաքինությունը մեղքերիդ զազրության նման քողարկիր և դրանից հետո ապաշխարություններդ ընդունելի կլինեն և մեղքերիդ համար թողություն կգտնես (Հովհան Մանդակունի):

65. Սնամիառության հաճույքի համար ընդունելության կոչումքներ մի սարքիր, ի ցույց մարդկանց աղքատներին ողորմություն մի տուր, կարոտյալ չքավորների համար կազմակերպված ընդունելության ժամանակ հարուստներ և ունևորներ մի կանչիր (Հովհան Մանդակունի):

66. Եթե աղքատների կարոտությունն ամբողջովին բավարարել չենք կարող, մի պատառի և բաժակի կարոտ չթողնենք նրանց: Մեր ստացվածքների մեջ որբերից և այրիներից հափշտակված որևէ բան թող չգտնվի: Ինչ որ ունենք, Աստծուն նվիրված թող լինի: Այնժամ մեր անձերն էլ Նրան հաճելի և ընդունելի պատարագ կլինեն (Եղիշե):

67. Դևերը հավաքվում են հարստություն և կուտակելիս, իսկ հրեշտակները՝ այն բաշխելիս (Եզնիկ Կողբացի):

68. Այգեկութին ձեր բերքի մի մասը Աստծուն տվեք՝ աղքատների և կարոտյալների միջոցով և պտուղ խնդրողներին դատարկ ու ձեռնունայն

ես մի դարձրեք, որպեսզի Աստված էլ ձեզ Իր

տնկած դրախտից ունայն ետ չդարձնի: Տալիս խոժոռ դեմքով, զայրացած սրտով ու դժկամ խոսքերով չտաք Կայենի գոհի նման, որ հաճելի չէ Աստծուն, այլ ընդհակառակը՝ զայրացնում է, այլ զվարթառատ կամքով տվեք, ինչպես որ Աստված սիրում և խնդրում է: Գինու ժամանակ ևս այդ գինուց բաժին հանեք Աստծուն: Եվ երբ ձեզ պետք եղածից ավելին ստանաք, և հարկ լինի վաճառել, վաճառքի դրամից ավելի պտղաբերեք Քրիստոսին՝ տառապյալներին և գերյալներին տալով (Ներսես Շնորհալի):

69. Առաքյալի հրամանով պատվեցեք ծերերին և հոգ տարեք նրանց մասին (Ա Թեսաղ. 5:12) և խնամեք տկարներին՝ ձեր կարողության չափով հսկելով և նրանց պետքերը հոգալով: Գիտենք, որ այսպիսի բարեկարգությունների խափանման պատճառը ժամանակիս աղքատությունն է, բայց Աստված մեզանից ավելին չէ, որ պահանջում է, այլ՝ կամքի հոժարությունն ու հնարավորը (Ներսես Շնորհալի):

70. Ինչպես մարգարեն է պատգամում՝ ձեր դրամը վարձով մի՛ տվեք նրանց, ովքեր իշխողների բռնությունից նեղվում են (Եզեկ. 18:8), և վաշխերի շահով մի կերեք նրանց աղքատ վաստակը, այլ որպես եղբայրներ կարեկից և օգնական եղեք միմյանց: Ինչ-որ փոխ եք տալիս նրանց, այն միայն պահանջեցեք նրանցից և անանց կյանքում բազմապատիկ վարձք կստանաք Աստծուց, քանզի Քրիստոս հրամայում է ոչ միայն առանց վաշխի տալ, այլև՝ տալ նրանց, ումից ետ ստանալու ակնկալիք չունեք:

Նաև՝ ձեր բոլոր ունեցվածքից ողորմություն տվեք կարոտյալներին և աղքատներին, որպեսզի դրանով սրբվի ձեր անեն ինչը, և Դատաստանի Օրը Քրիստոսից ստանաք փոխարենը (Ներսես Շնորհալի):

71. Ավելի դյուրին ուրիշ ի՞նչ արվեստ կա, քան ողորմությունը, որով սրբվում են մեղքերը: Արդարև, երբ խոստովանես և ողորմություն տաս ու հավատաս, կսրբվես մեղքերիցդ և կարդարանաս (Սահակ Պարթև):

72. Անհրաժեշտ է ոչ միայն ողորմություն գործել, այլև մեծ փափագով խնդրել Աստծուց, որ բացի մեր միտքը՝ առատապես հորդորվելու ողորմածության սիրով, որպեսզի պատշաճ ժամին արժանի լինենք փոխարենն ստանալու երկնքի արքայությունում (Խոսրով Անձևացի):

73. Այնտեղ (դատաստանի ժամանակ) սաստիկ ողբ կլինի, անբավ աղաղակ կտիրի, և կլսվեն դատապարտված անձանց հույժ ողորմագին ձայներ: Քանզի մեկը կմատնվի գեհեցի հրին, մեկը կդատապարտվի տարտարոսի, մեկ ուրիշը՝ հրեղեն որդերի կեր կդառնա, մյուսը միշտ կտանջվի հրեղեն սրով: Եվ անենքին կհատուցի ըստ իրենց արժանի չափի, քանզի ահավոր է այն Առյանը, ահեղ և զարհուրելի է հրապարակը, և անաչառ՝ գործերի քննությունը: Թագավորներից չի աչառում և քահանաներից չի հարկադրվում, մեծամեծներին պատիվ չի տալիս և ծերերի ակեհերությամբ չի մեղմանում: Ովքեր ողորմություն չեն գործել, այնտեղ էլ ողորմություն չեն գտնում: Ովքեր առավել սիրեցին արձաթը, քան Քրիստոսին և զարդարեցին ձիերին, ջորիներին ու շներին, իսկ

աղքատներին անտեսեցին, այնտեղ կղատվեն Քրիստոսի կողմից և կայրվեն գեհեների հրում: Եվ միայն արդար-ները կպսակվեն Աստծո արքայության մեջ, որին և մենք բոլորս արժանանանք Քրիստոսի շնորհներով, որ օրհնյալ է Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն (խոսքով Անձևացի):

74. Ողորմության տուրքը երկու կերպ է լինում՝ ողորմություն աղքատ-ներին և ընծա՝ Աստծուն (Գրիգոր Տաթևացի):

75. Նախ պետք է մեր ունեցածից բաժին տանք Աստծուն, և քանի որ մարդու երկրային գոյությունը պայմանավորված է ինչպես հոգով ու մարմնով, այնպես էլ ունեցվածքով, ուստի և պետք է հոգու կողմից՝ աղոթ-քը, մարմնի կողմից՝ ծունր, իսկ ունեցվածքից՝ մի մաս ընծայել Աստծուն (Գրիգոր Տաթևացի):

76. Աստված Օրենքում Մովսեսին հրամայեց ամեն ինչից տասանորդ տալ, քանզի տասը կատարյալ թիվ է և նվեր Աստծուն. սակայն Օրենքը կատարելը պարտադիր է, իսկ աղքատներին ողորմելը՝ կամավոր (Գրիգոր Տաթևացի):

77. Ողորմությունը վարձատրվում է միայն հանդերձյալ կյանքում, իսկ Աստծուն մատուցած ընծան՝ երկու կյանքում էլ. այնտեղ Տերը հոգևորն է փոխհատուցում, իսկ այստեղ՝ նյութականը, ինչպես որ գրված է. «Որպես-զի լցվեն քո շտեմարանները ցորենի լիությամբ, և հնձաններդ ավելի շատ գինի բխեցնեն» (Առակ. 3:10) (Գրիգոր Տաթևացի):

78. Ինչպես թագավորին բերված ընծան հանձնվում է նրա սպասավոր-ներին, իսկ նրանք տալիս են թագավորին, այդպես էլ Աստծո ընծան մա-տուցվում է քահանաներին, որովհետև երկրի վրա նրանք են Աստծո տան սպասավորները, ինչպես որ երկնքում հրեշտակներն են (Գրիգոր Տա-թևացի):

79. Եթե նվիրողի կամքը բարի է և չարիքից հեռու, նվերն ընդունելի է, և այն, ինչ էլ որ լինի, Աստված մեղքերի դիմաց ապաշխարություն է համա-րում (Գրիգոր Տաթևացի):

80. Եթե Աստծո բաժինը թաքցնելիս վերանում է Նրա պահպանությունը, և հափշտակություն է վրա հասնում, ապա հավատով ու հույսով ընծայող-ների ունեցվածքը հույժ առատանում է (Գրիգոր Տաթևացի):

81. Պետք է արդարությամբ պատվել Աստծուն, այսինքն՝ մարմնավոր գործերում չպիտի լինեն կեղծավորություն, փառասիրություն և այլն, քան-զի հենց այդ է մեր վարձը, երբ ի ցույց մարդկանց ենք գործում: Մինչդեռ ամեն բարի գործ պետք է ծածուկ և անխարդախ արվի Աստծու առջև: «Եվ քո Հայրը, որ տեսնում է, ինչ-որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:4) (Գրիգոր Տաթևացի):

82. Կալի և հունձքի վատորակ մասը Աստծուն մի նվիրիր և եկեղեցու քահանաներին պտղի տուրքը ծակաչքությամբ մի տուր, որի համար՝

Կայենը հանդիմանվեց: Մեր հոտերի գերերին և մաքուրներին անտեսելով՝ անօգտակար և նիհար չմորթենք աղքատների ընդունելության սեղանի համար (Հովհան Մանդակունի):

83. Անիրավությամբ, ազահությամբ և հափշտակությամբ յուրացրած մեր ստացվածներից Աստծուն ընծա չմատուցեն, քանի որ բոլոր նրանք, որոնք զրկում են ուրիշներին, պիղծ են և պիղծ է նրանց ստացվածքն Աստծո առջև: Ամեն բան Աստծո կամքի համեմատ կատարեք, որպեսզի հաճի և ընդունի Նա ու մեղքերին թողություն շնորհի: Սրբությամբ ու անմեղությամբ ապրենք, Փառք ու պատվով երկինք կժառանգենք և խոս-տացված բարությանը արժանանանք մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի միջո-ցով, որին վայելում է փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավի-տենից: Ամեն (Հովհան Մանդակունի):

Հայրերի վարքից



1. Մի անգամ արքա Սրապիոնը տեսնելով մի աղքատի, որ մերկ էր ու ցրտից դողում էր, հանեց իր պարեգուտը և տվեց նրան: Երբ մարդիկ նրան հարցրին. «Հայր, քեզ ո՞վ մերկացրեց», նա ցույց տվեց Ավետարանը՝ ասե-լով. «Սա մերկացրեց ինձ»: Եվ մեկին էլ պարտատիրոջից ազատելու համար, ծախեց փոքրիկ Ավետարանը: Երբ խուցը դարձավ, իր աշակերտը՝ Չաքարիան հարցրեց նրան. «Հայր, ու՞ր է պարեգուտդ», իսկ նա պա-տասխանեց. «Որոյա՛կ, ուղարկեցի այնտեղ, ուր որ պետք էր»:

- Իսկ ու՞ր է Ավետարանդ:

Եվ ծերն ասաց.

-Նա, ով ինձ ասաց՝ ծախիր բոլոր ինչքերդ և տու՛ր աղքատներին, ես էլ Իրեն ծախեցի և Իրեն տվի, որ Իր առաջ համարձակությամբ կանգնեմ (Վարք սրբոց):

2. Մի ծեր պատմում էր. «Պատահում է, որ երբ մեկը գործում է բազում բարի գործեր, այնժամ չարը նրա սիրտն է զցում մանրուքների հանդեպ հաշվեմկատություն, որպեսզի հափշտակի նրանից այն վարձքը, որն Աստ-ծուց պիտի ստանար իր բարեգործության համար:

Երբ ես հյուր էի մի վանահոր մոտ, որը առատորեն ողորմություն էր տալիս, նրա մոտ եկավ մի այրի կին և խնդրեց մի քիչ ցորեն տալ իրեն: Վանահայրն ուղարկեց այրուն, որպեսզի չափելու համար աման բերի: Չեռքով չափելով ամանը, վանահայրն ասաց, որ այն չափազանց մեծ է: Այս խոսքերն այրուն ստիպեցին կարմրել: Երբ այրին դուրս եկավ, ես

հարցրեցի վանահորը. «Աբբա, դու պարտքով տվեցիր ցորենը»: «Ոչ, ես նվիրեցի», - պատասխանեց վանահայրը: Իսկ ես ասացի. «Քանի որ այդ բոլորը անվճար տվեցիր, էլ ինչո՞ւ խռովքի մատնեցիր այրուն ու հաշվենկատ եղար այդ մանրուքի համար» (Հարանց Վարք):

3. Թեոդոս ինքնակալի ժամանակ, երբ սաստիկ սով էր Բուրգունդիա գավառում, մի Սինկտոս անունով հռոմեացի հավաքեց ավելի քան չորս հազար աղքատի, ովքեր ոչինչ չուներին ուտելու, և սովի բոլոր օրերին կերակրեց նրանց: Երբ սովն անցավ, ամենքն իրենց տեղը գնացին: Եվ ահա երկնքից մի ձայն լսվեց, որ ասում էր. «Ով սիրելի, քեզ և քո գավակներին հավիտյան չի պակասի հացը, որովհետև սովի ժամանակ անդրա՛նկներիս խնամեցիր ինձ խնամեցիր» (Հայելի Վարուց):

4. Հայր Ագաֆոնը, իր ժամանակվա վանականների մեջ ամենափորձառուն էր և բոլորից առավել միայնակեցության և լռակյացության գնահատողը: Այս սքանչելի այրը, մի անգամ գալով շուկա, որպեսզի վաճառի իր ձեռքի աշխատանքները տոնավաճառում, գտավ հիվանդ պառկած մի ուխտավորի, նրա համար տուն վարձեց և մնաց նրա հետ՝ աշխատելով իր ձեռքերով և ստացվածքը ծախսելով նրա վրա: Ծառայեց նրան վեց ամիս, մինչև որ հիվանդն առողջացավ: Այս Ագաֆոնը, ինչպես որ պատմում են, իր մասին ասում էր. «Կուզենայի գտնել մի բորոտածի և նրան տալ իմ մարմինը, իսկ իրենը վերցնել ինձ»: Ահա կատարյալ սերը (Իսահակ Ասորի):

5. Մի ոմն ճգնավոր, որ միայն հոգում էր երկնայինի համար և թոթափել էր իրենից ամեն երկրավոր բան, ապրում էր աղքատության մեջ: Մի անգամ նրան մոտեցավ մի աղքատ մարդ և սկսեց պաղատանքով ողորմություն խնդրել՝ ասելով, թե խիստ մեծ կարիքի մեջ է: Գնավորը ոչինչ չուներ և ասելով, որոշեց հրաժարվել ձեռքից ցրտից պաշտպանվելու իր միակ մխիթարությունից և աղքատին տվեց իր վերարկուն և ինքն էլ սկսեց կրել ձմեռային ցրտի տառապանքները: Մի օր, երբ ճգնավորը մտավ շուկա իր կողովները վաճառելու, հանկարծ աչքն ընկավ գինետան մոտ հավաքված մարդկանց, որոնց մեջ էր նաև այն աղքատը: Այդ պահին աղքատը պատմում էր իր բաժակակիցներին հետևյալը. «Իմենք եղբայրներ, քանզի այս գինին ձեռք է բերված մի վանականի վերարկուի վաճաված գումարից, ես ձևացրեցի, թե հույժ կարիքավոր մեկն եմ և խաբելով նրանից ձեռք գցեցի այս վերարկուն»: Այս լսելով, գինուց հարբած սկսեցին բարձրաձայն ծիծաղել: Գնավորը լսելով այս խոսակցությունը, հույժ տրտմեց և վշտացավ, որ իզուր տեղն է գրկվել իր վերարկուից և ընկավ մեծ թախիծի մեջ: Երեկոյան, երբ տրտմած մտած էր իր խցում, թմրությունից ննջեց և տեսավ մի տեսիլք: Արեգակի պես պայծառ, սքանչելի մի երիտասարդ կանգնել էր իր առջև և ասում էր. «Ինչո՞ւ ես այդպես տրտմել, մայրի և տես, թե ինչ է իմ հագին» և ճգնավորը նկատեց, որ իր վերարկուն էր նրա վրա, և Տերն ասաց. «Մի վշտացիր, քանի որ ինչ տվեցիր՝ ինձ տվեցիր»: Սթափվելով քնից, ճգնավորը գոհացավ Տիրոջից և մխիթարվելով իր վշտից, մեծ ցնծությամբ փառավորեց բարերար Աստուծուն

(Հոգեշահ գրքերից):

6. Եղբայրը հարցրեց հայր Պիմենին. «Աբբա, երբ ես եղբորս մի քիչ հաց եմ տալիս կամ մի ուրիշ բան, դեռըր նսենացնում են այն, որպես թե մարդահաճությունից տվեց»: Ծերն ասաց նրան. «Եթե նույնիսկ դա արվում է մարդահաճությունից, միևնույն է, մենք պետք է տանք եղբորը պետքականը»: Եվ պատմեց նրան հետևյալը. «Երկու հողագործ ապրում էին նույն քաղաքում: Նրանցից մեկը ցանեց քիչ և անմաքուր, մյուսը ծուլությունից մղված՝ ոչինչ չցանեց: Եթե սով լինի, երկուսից ո՞ր մեկը ուտելիք կունենա»: Եղբայրն ասաց. «Քիչ և անմաքուր ցանողը»: Ծերն ասաց նրան. «Այդպես էլ մենք ցանենք, թեկուզ և՛ քիչ, և՛ անմաքուր, որպեսզի սովից չմեռնենք»:

Մի ուրիշ անգամ էլ մի այլ եղբայր խնդրեց ծերին, որ իրեն մի հոգեշահ բան ասի: Ծերն ասաց. «Որքան կարող ես՝ զբաղվիր ձեռքի աշխատանքով, որպեսզի քո ձեռքի գործից տաս կարիքավորներին, քանի որ գրված է. «Ողորմությունը և հավատը մաքրում են մեղքերից» (Առակ. 15:27): Եղբայրը հարցրեց. «Ի՞նչ է հավատը»: Հայր Պիմենը պատասխանեց. «Հավատն այստեղ նշանակվում է՝ ապրել խոնարհությամբ և ողորմություն տալով» (Հարանց Վարք):

7. Մայր Սառան ասում էր. «Լավ է ողորմություն տալ, թեկուզ մեկն այդ անի մարդահաճությունից դրդված, որովհետև նա աստիճանաբար մարդահաճությունից կգա Աստծո երկիրը» (Հարանց վարք):

8. Ալեքսանդրիայում պատրիարքն էր Հովհաննեսը, որին չքավորների հանդեպ ունեցած իր սիրո համար Ողորմած էին անվանում: Ամեն բան տալով, որպեսզի թեթևացնի չքավորների վիճակը, ինքը մնում էր ծայր աստիճան չքավորության մեջ: Հասարակ հագուստը, փոքր ննջարանը՝ մաշված ծածկոցով, որը գործված էր կոպիտ թելից, կազմում էր նրա ողջ ունեցվածքը: Մի անվանի քաղաքացի Ալեքսանդրիայից սուրբ Հովհաննեսին մի ծածկոց նվիրեց, որն արժեր 36 արծաթ, և իր հանդեպ ունեցած սիրուց խնդրեց, որ անպայման սա օգտագործի իր կարիքների համար: Սուրբ Հովհաննեսը այդ գիշեր ծածկվեց նոր ծածկոցով, բայց միտքը 36 արծաթի կողմն էր, որը ծախսվել էր մի ծածկոցի վրա, երբ քանի մարդ կարելի էր կերակրել այդ գումարով: Այս միտքն ամբողջ գիշեր նրան հանգիստ չէր տալիս: Նրա առջև էին գալիս բոլոր տեսակի թշվառությունները, որոնց կարելի էր հաղթահարել այդ գումարով և նա ամբողջ գիշեր այք չկպրեց: Վաղ առավոտյան, երբ լույսը բացվեց, սուրբ Հովհաննեսն իսկույն ուղարկեց, որ վաճառեն այդ ծածկոցը, որը հանգիստ չէր տալիս նրան: Վերցնելով գումարը, իր սովորության համեմատ բաժանեց աղքատներին: Քաղաքացին, տեսնելով իր ծածկոցը շուկայում, գնեց այն և նորից նվիրեց սբ. Հովհաննեսին: Բայց հոգատար հովիվն այս անգամ չուզեց փորձ անել և մինչև երեկո վաճառեց ծածկոցը, գումարը նորից բաժանեց աղքատներին, որպեսզի քնելու գնա հանդարտ հոգով: Վերջապես ջանասեր քաղաքացին երրորդ անգամ բերեց նույն ծածկոցը: Սբ. Հովհաննեսն ասաց. «Ես միշտ կվաճառեմ այն ապրանքը, որ ինձ

պետք չէ, տեսնենք թե մեզանից որ մեկն առաջինը կդադարեցնի անել իրենը» (Յոզեֆի գրքերից):

9. Ալեքսանդրիայի պատրիարք Յովհաննես Ողորմածի օրոք կար մի եպիսկոպոս՝ Թռչիկուս անվամբ, որ շատ ժլատ և հաշվենկատ մարդ էր: Մի անգամ Յովհաննեսը հրավիրեց նրան իր հետ հիվանդանոց՝ այցելելու հիվանդ աղքատներին: Անցնելով հիվանդների միջով, Սբ. Յովհաննեսն ասաց Թռչիկուսին. «Ահա քեզ, աբբա, հիասքանչ առիթ՝ մխիթարելու աղքատ եղբայրներին և ողորմություն տալու նրանց»: Թռչիկուսն անհարմար զգաց հրաժարվել բարի գործից և մի-մի ոսկի դրամ տվեց, որը կազմեց 30 ոսկի, բայց երբ տուն եկավ, այն աստիճան ավստսաց այդ փողը, որ հիվանդացավ և ընկավ անկողին: Այդ ժամանակ Յովհաննեսը մարդ է ուղարկում նրա մոտ և հրավիրում իր մոտ ճաշի: Թռչիկուսը հրաժարվում է պատճառաբանելով հիվանդությունը: Այնժամ սուրբ Յովհաննեսը հասկանալով, թե ինչու է բանը, վերցնում է 30 ոսկին և գնում հիվանդ եպիսկոպոսի մոտ. «Ես բերել եմ այն գումարը, որ վերցրի քեզանից հիվանդներին բաշխելու համար: Ահա վերցրու այն, միայն ջանա քո ձեռքով գրել, որ Տերը ինձ տա այն վարձքը, որն այդ գումարի փոխարեն քեզ պիտի տրվեր»: Թռչիկուսը ուրախությամբ վեր կացավ անկողնուց և իսկույն գրեց հետևյալը. «Ողորմած Տեր, տուր վարձքը իմ տեր Յովհաննեսին, այն ոսկու փոխարեն, որ ես մեղավոր Թռչիկուսս բաժանեցի հիվանդներին, քանի որ նա իմը վերադարձրեց ինձ»: Տալով գրությունը Յովհաննեսին Թռչիկուսը մոռացավ իր հիվանդությունը և գնաց Յովհաննեսի մոտ ճաշելու: Ցավալի էր տեսնել Աստծո մարդու՝ եպիսկոպոսի այսպիսի դրամապաշտությունը, և այն էլ ո՞ւմ մեջ՝ եկեղեցու հովվի: Եվ սբ. Յովհաննեսը ամբողջ սրտով սկսեց աղոթել, որպեսզի Տերը խելքի բերի Թռչիկուսին, և Տերը լսեց նրա սուրբ աղոթքները: Հաջորդ գիշեր Թռչիկուսը երազում տեսավ սքանչելի մի տուն, որի դռների վրա գրված էր ոսկե տառերով. «Թռչիկուս եպիսկոպոսի հավիտենական կացարանը և հանգրվանը»: Անպատմելի ուրախությամբ ուրախացավ նա այս տեսիլքի համար, բայց հանկարծ հայտնվեց մի ահեղ մարդ և ասաց այնտեղ գտնվող ծառաներին. «Տերն ամբողջ աշխարհի հանձնարարեց ջնջել Թռչիկուսի անունը այստեղից և նրա փոխարեն գրել Յովհաննեսի՝ Ալեքսանդրիայի պատրիարքի անունը, որ գնեց այս տունը 30 ոսկով: Եվ այսպես, փոխեք գրվածքը»: Այս խոսքի վրա Թռչիկուսն արթնացավ սարսափած և խեղճացած: Առավոտյան նա շտապեց սբ. Յովհաննեսի մոտ և արցունքաթաթախ պատմեց նրան իր տեսիլքը՝ զղջալով իր դրամապաշտության համար և այդ պահից դարձավ բոլորի հանդեպ առատաձեռն և ողորմած: Այսպիսով Տերը խելամտության բերեց ժլատ Թռչիկուսին՝ թույլ չտալով կործանվի նրա հոգին, երևի նրա անցած կյանքում բարին էլ է եղել, որը և հիշեց Տերը սբ. Յովհաննես Ողորմածի աղոթքներով, քանի որ Տեր Աստծու մոտ սրտից բխած ոչ մի հոգուց անտես չի լինում և ոչ մի կաթիլ արցունք չի մոռացվում: Նա Ողորմած է և կարող է մեր բարի գործերի համար մեզ՝ մեղավորներին տալ այնպիսի վշտեր,

որոնք մենք կրում ենք մեր կամքից անկախ, մեր մեղքերի համար: Միայն թե չտրտնջանք այդ վշտերի ժամանակ և ապաշխարենք մեր մեղքերի համար (Յոզեֆի գրքերից):

10. Ահա նմանօրինակ մի այլ պատմություն, որից կայլայվի նույնիսկ ամենաշահամոլ սիրտը: Կոստանդնուպոլսեցի մի մարդ ծանր հիվանդ էր և վախենալով մահվանից, Թռչիկուսի նման աղքատներին բաժանեց 30 ոսկեդրամ: Աստված ողորմաց նրան և նրա տված ողորմության համար նրան առողջություն շնորհեց: Բայց ամախոս սկսեց զղջալ վատնած գումարի համար և հայտնեց իր վիշտը իրեն ծանոթ մի հարուստ մարդու: Հարուստը համոզում էր նրան չզղջալ տված ոսկիների համար. «Տես, որ չբարկացնես Տիրոջը», ասում էր նա. «Զե՞ որ Աստված քո տված ողորմության համար համարյա թե մեռելներից հարություն տվեց քեզ: Տես, որ չմահանաս առանց ապաշխարության այդ բանի համար»: Բայց նա չէր դադարում ավստսալ փողերի համար: Այդժամ ծանոթն ասաց նրան. «Եթե դու չես ուզում լսել ինձ, ուրեմն գնանք եկեղեցի, այնտեղ միայն ասա՝ Տեր, ես չեմ տվել ողորմությունը այլ այս մարդը: Հենց նույն պահին ես քեզ կտամ քո ոսկիները»: Դժբախտ արժաթասերն ուրախությամբ համաձայնվեց: Եվ հենց որ նա իր ձեռքը վերցրեց գումարը և ասաց վերը հիշատակված խոսքերը, հենց այդ պահին ընկնելով եկեղեցու մեջ՝ մահացավ: Եկեղեցու սպասավորները առաջարկեցին հարուստին ետ վերցնել 30 ոսկին, բայց Աստծո ծառան պատասխանեց. «Աստված ինձ պահի նման բանից, որ ես վերցնեմ այն, ինչը ես արդեն տվել եմ Տեր Աստծուն: Մի՞թե դա հնարավոր է: Աստված չի ծաղրվում»: Եվ այդ փողերը բաժանվեցին աղքատներին: Ահա այսպես եղավ Աստծո դատաստանը այն մարդու հանդեպ, որ չամաչեց շահամոլությունից դրդված հրաժարվել այն բարի գործից, որի փոխարեն նա արդեն ստացել էր մեծ ողորմություն Աստծուց (Յոզեֆի գրքերից):

11. Մի քաղաքում, որի հոգևոր առաջնորդն էր Նիկողայոս Աքանջելագործը, կար մի մարդ, որ նախկինում հարուստ էր, սակայն հետո ընկավ ծայրահեղ աղքատության մեջ: Այս մարդն ուներ երեք հասուն աղջիկներ: Զուներակով հնարավորություն ոչ միայն այն բանի համար, որ նրանց ամուսնացնի, այլև որպեսզի նրանց կերակրի և հագցնի, նա հաճախ ընկնում էր հուսահատության մեջ: Եվ հուսահատությունը հասնում էր այն վիճակի, որ մտածում էր վաճառքի դնել իր աղջիկների պատիվը և այս ամոթալի եղանակով հոգալ թե՛ իր և թե՛ աղջիկների ապրուստը: Սուրբ Նիկողայոսը իմանալով այս ընտանիքի վատթար վիճակի մասին, որոշեց օգնել նրանց: Իր մտադրությունը նա իրագործեց արագ և շատ պարզ եղանակով: Վեր կենալով կեսգիշերին և իր հետ վերցնելով ոսկով լցված մի քսակ, նա բոլորից աննկատ գալիս է այդ տարաբախտի տան մոտ և կիսաբաց լուսամուտից ներս է գցում այդ քսակը և շտապ հեռանում: Առավոտյան արթնանալով, տանտերը տեսավ իր մոտ քսակը: Իրեն թվաց, թե աչքին է երևում, բայց երբ համոզվում է իրողության մեջ, սկսում է արցունքաթաթախ գոհություն հայտնել Աստծուն նման մեծ ողորմության

համար: Շուտով ամուսնացրեց իր ավագ աղջկան: Տեսնելով ոսկու նման բարի ձևով օգտագործունը, սուրբը որոշեց նույն կերպ վարվել նաև խեղճ հոր երկրորդ աղջկա հետ: Նորից գալով գիշերով այնտեղ թողեց ևս մի ոսկով լեցուն քսակ: Այս անգամ էլ գտնելով իր մոտ գանձը, մարդն աղաղակեց. «Տեր, ցույց տուր Քո մեծ ողորմությունը և ցույց տուր ինձ այն հրեշտակին կամ մարդուն, որ ազատեց ինձ աղքատությունից և չար մտքերից: Նրա գթասրտության հետևանքով այժմ կարող եմ հոգալ երկրորդ աղջկաս համար՝ փրկելով նրան սատանայական ցանցի կորուսիչ որոգայթից»: Եվ իսկապես, շատ արագ ամուսնացրեց նաև երկրորդ աղջկան: Մարդու տալով իր երկրորդ աղջկան, նա դադարեց վշտանալ՝ համոզված լինելով, որ Տերը երրորդ աղջկան էլ կօգնի՝ իրեն էլ ցույց տալով իր բարերարին: Այնժամ նա, համարյա թե միանգամայն երջանիկ, սկսեց գիշերները արթուն մնալ՝ հուսալով, որ կհանդիպի այն առատաձեռնին և ողորմածին: Հույսը նրան չխաբեց: Նիկողայոս Աքանչելագործը երրորդ անգամ նորից գիշերով գցեց լուսամուտից քսակը և առաջվա պես ուզեց արագ հեռանալ: Բայց անչափ ուրախացած հայրը նույն պահին հասավ Աստծո այրի հետևից և ընկնելով նրա ոտքերի առջև, թրջեց այն իր արցունքներով և սկսեց իր շնորհակալությունները հայտնել այս մեծ ողորմության համար: Եվ ի՞նչ պատասխանեց նրան սուրբ հայրապետը: Նա երդումով նրանից խոստում վերցրեց, որպեսզի մինչև իր կյանքի վերջը լռություն պահպանի իր արածի մասին և սովորոցնելով հոգշահ բաներ, արձակեց նրան: Ահա թե ինչպիսին պետք է լինի ճշմարիտ և աստվածահաճո ողորմությունը (Հոգեշահ գրքերից):

12. Մի ագարակատեր, Հովհաննես անունով, այն աստիճան ողորմած էր աղքատների հանդեպ, որ իր ամբողջ եկամուտը, որ ստանում էր իր հողից, բաժանում էր չքավորներին, թողնելով իրեն միայն ամենաանհրաժեշտը: Այս մարդու վրա փորձություններ եկան սատանայի կողմից: Ագարակատերն սկսեց մտահոգվել, որ ծերության ժամանակ ինքն էլ կարող է հասնել աղքատության, հատկապես եթե կորցնի առողջությունը, և սրանից ելնելով, սկսեց նվազեցնել ողորմությունները: Եվ ամենաանհրաժեշտից բացի սկսեց կուտակել բավականին արծաթե դրամ: Այս ագարակատիրոջ ոտքը հիվանդացավ, և ինչքան էլ նա գումար ծախսեց, բաժանեց բժիշկներին, չստացավ թեթևություն ցավերից: Վերջապես բըժիշկները եկան այն եզրակացության, որ պիտի անդամահատեն ոտքը: Վիրահատման նախօրյակին նա հիշեց իր արարքը, զղջաց, Աստծու առջև արցունքներով աղաղակեց Տիրոջը. «Հիշիր, Տեր, իմ առաջվա գործերը, թե ինչպես էի ես օգնում աղքատներին»: Եվ երբ նա այս խոսքերն էր ասում, նրա առջև հայտնվեց Տիրոջ հրեշտակը և ասաց նրան. «Ո՞ր եմ քո արծաթադրամները, որ դու կուտակել էիր»: Ձղջալով նա ասաց. «Մեղանչեցի ես, Տեր, թողություն տուր ինձ, էլ նման բան չեմ անի»: Այնժամ Տիրոջ հրեշտակը կպավ նրա հիվանդ ոտքին և հիվանդությունը նույն պահին դադարեց: Առավոտյան նա գնաց իր ագարակը: Նորից

աշխատելու համար: Իսկ այդ ընթացքում եկավ բժիշկը, որխեսզի կտրի նրա ոտքը և տեսնելով նրան աշխատելուց, միանգամայն առողջ վիճակում ու փառավորեց Աստծուն՝ ասելով. «Երանելի է ողորմածը, քանի որ նա ողորմություն կգտնի» (Հոգեշահ գրքերից):

13. Մի բարի և առաքինի մեծատոհմիկ աստիճանավոր կար, որը ցավոք, կորցրել էր թագավորի բարեհաճությունը: Քանի որ նրան ստույգամբ զրպարտել էին թագավորի առջև, գործը տվել դատարան, որը և սպառնում էր բանտով: Այս խեղճ մեծատոհմիկը վշտից հիվանդացավ և անկողին ընկավ: Այդ ժամանակ քաղաք եկավ մի մեծանուն և խստակրոն ճգնավոր: Նա ծանոթ էր այս տարաբախտ աստիճանավորին և այցելեց նրան՝ մխիթարելու նպատակով: Այս ազնվագարն մեծատուն մարդու կինը դիմավորելով ճգնավորին, ասաց. «Աղոթիր հայր, որպեսզի իմ ամուսնու գործը բարի ավարտ ունենա»: «Լավ,-պատասխանեց ծերը,-հիարկե, պետք է աղոթել Տիրոջը, բայց անհրաժեշտ է խնդրել նաև թագավորների մերձավորներից բարեխոսություն: Տվեք ինձ մի քիչ գումար և ես ինքս կխնդրեմ նրանց ձեր համար»: Ծերին ոսկի տվեցին: «Ոչ,-ասաց նա,-սա ինձ պիտանի չէ: Չունե՞ք արդյոք, պղնձադրամ կամ մանր արծաթ»: Տվեցին թե՛ այն, թե՛ մյուսը: Ճգնավորը վերցնելով փողերը՝ գնաց: Ուշ երեկոյան նա նորից եկավ այդ աստիճանավորի մոտ և ասաց նրան. «Թագավորի բոլոր մերձավորները խոստացան ամեն ջանք գործադրել ձեր համար: Հանգստացեք և սպասեք ուրախ լուրի»: Եվ ի՞նչ, ծերը դեռ նըստած էր հիվանդի անկողնու մոտ, երբ լուր ստացան գործի բարեհաջող ավարտի մասին: Բարի լուրը նպաստավոր ազդեցություն թողեց հիվանդի վրա: Նա սկսեց իր գոհությունը հայտնել ճգնավորին և խնդրեց, որ ասի, թե թագավորի մերձավորներից որը մյուսներից առավել մասնակցություն ունեցավ այդ գործում: Այստեղ նոր միայն պարզվեց, որ ճգնավորը թագավորի մերձավորներից ոչ ոքի մոտ չի եղել և չի խնդրել: Դրա փոխարեն նա ամբողջ օրը քայլել էր քաղաքի փողոցներով և բաժանել աղքատներին իր մոտ եղած մետաղադրամները, որը վերցրել էր մեծատոհմիկից: «Եվ այսպես գոհացեք Տիրոջից, -վերջում ասաց ծերը, -նա ողորմած է և լսելով չքավորների աղոթքները, թագավորի սրտում դրեց, որ նա վերստին անդրադառնա քո գործին: Դրա համար էլ մի՛ սոռացեք նրա մեծագարմիկներին, այսինքն, ձեր բարեգործներին՝ աղքատներին և մուրացիկներին, նրանք շատ բան կարող են Տեր Աստծու մոտ» (Հոգեշահ գրքերից):

14. Տասերորդ դարում հայոց թագավորն էր Աշոտ Ողորմածը: Աշոտի բարեպաշտ և գթասեր գործերն առատ են պատմության մեջ: Իր ժամանակի պատմիչ Ասողիկը հաստատում է, որ. «խոնարհությամբ և ողորմությամբ գերազանցեց ամենքին»: Աշոտ թագավորը եկեղեցիների հետ միասին շինել է նաև հիվանդանոցներ և բորոտանոցներ, որոնց մեջ շատ անգամ ինքն անձամբ սպասավորում էր այդ վարակիչ ախտերով վարակված հիվանդներին: Պատմվում է նաև, որ գոնջերին, կաղերին և

կույրերին հավաքում էր իր պալատը և իրեն սեղանակից էր անում, իր արքայական բաժակով նրանց ընկալելիք էր մատուցում և գավաթի տակը մնացածն էլ ինքն էր խմում: Իսկ իր առատածեռնությանը չափ ու սահման չկար, այնպես, վերոհիշյալ պատմիչը հաստատում է, որ թե իր մահվանից հետո արքայական գանձարանի մեջ դրան չէր մնացել, մինչև իսկ զարդերը դրամի վերածելով՝ բաշխել էր կարոտյալներին: Աշոտը Հայաստանում նշված է որպես տոնելի սուրբ, մայիսի 20-ին: Բազմաթիվ ներբողական արտահայտությունների հետ միասին ասված է իր մասին. «Աշոտը զարդարված էր հոգևոր և մարմնավոր ծիրքերով և ամենքին սիրելի էր իր առաքելի վարքով: Շինեց բազմաթիվ եկեղեցիներ Անի քաղաքի մեջ և ուրիշ տեղեր: Հնացածները նորոգեց և վայելուչ վիճակի մեջ դրեց, բազմաթիվ հիվանդանոցներ և անկեղանոցներ հաստատեց մշտնջենավոր եկամուտներով»: Այս Աշոտն էլ իր պապի՝ Աշոտ Առաջինի պես կատարյալ թագավորի տիտղոսով էր ներկայանում: Նա՝ Աշոտ Գ-ն, որքան բարի ու առաքինի՝ նույնքան էլ քաջ, կորովի և վեհանձն թագավոր էր: Իր օրով կովկասյան լեռնականները արշավել էին Հայաստան: Աշոտը նրանց դեմ ելավ 45 հազարանոց բանակով և երեք տարի հարատևորեն պայքարելով՝ երկիրը մաքրեց այս անգուսպ ու անհակ ասպատակողներից: Նույնպես դրացի երկրներից մի իշխան ապստամբելով իր ամիրապետից, աջ ու ձախ ասպատակում էր: Աշոտը ջախջախեց ասպտամբի բանակը և իր երկրից դուրս վռնդեց նրան: Նա վախճանվեց լեցուն տարիքի մեջ՝ 977-ին, գրեթե քառորդ դար թագավորելուց հետո, երկիրը շեն ու խաղաղ վիճակի մեջ պահելով (Շնորհք Պատրիարք):

15. Երբ երանելի Խաղ եպիսկոպոսը խնամում էր աղքատներին, դատարկելով և աղքատներին բաժանելով բոլոր կճուճները, ամանները և կարասները, մյուս օրը գնում և տեսնում է, որ ամանները նորից լցվել են, կարծես Աստօծ հրամանով: Եվ այսպես ամեն օր մատակարարում էր աղքատներին, իսկ անոթները շարունակ լիքն էին:

Ներսես Մեծ հայրապետը երբեք սեղան չէր նստում, մինչև որ սեղանի շուրջը չհավաքվեին աղքատներն ու հիվանդները, և նա իր ձեռքերով լվանում էր նրանց ոտքերն ու վերքերը, և ապա նոր նրանց հետ միասին սկսում ճաշկերույթը (Փավստոս Բուզանդ):



Աղ ո թ ք

Գանձդ բոլոր բարիքների, շնորհի՛ր ինձ դյուզն-ինչ Քո հոգնառատ բարիքներից, որ չարաչար աղքատացած ու մերկացած եմ, հագցրու՛ և կերակրի՛ր ինձ ապաշխարության արտասուքներով:

Շատ է ինձ, Տե՛ր, բայց հույս եմ դնում Քո ողորմության վրա, քանզի շներն էլ կերակրվում են իրենց տիրոջ սեղանից ընկած կերակրի փըշանքներով:

Շուն կոչիր ինձ, Տե՛ր, որպեսզի գամ Քո ետևից:

Հովիվ բարի, փնտրի՛ր ինձ՝ մոլորյալիս:

Նավապետ բարի, Հիսու՛ս, փրկի՛ր ինձ իմ մեղքերի ծովի ալիքների բազմությունից և տու՛ր ինձ խաղաղության նավահանգիստը:

Ընդունի՛ր, Տե՛ր, մոլորվածիս, որ փախել եմ լեռները՝ մեղքերի պատճառով տիրոջից հալածված չար ծառայի պես: Եվ հրաժարված սուրբ եղբայրներից, հեռացած՝ սուրբ ծառայությունից, քանզի սիրող էի մեղքերի և նախատինք էի կրոնավորների համար, անհա՛գ մեղքերից և զրկանքներից: Անգուժ էի աղքատների և հակառակվող՝ սպասավորների հանդեպ, անողորմ էի հիվանդների և անմխիթար՝ նեղվածների հանդեպ:

Աղքնացրու ինձ, Տե՛ր, իմ մեղքերի քնի ահավոր խորությունից և զգաստացրու իմ տարակուսյալ մարմինը բոլոր բարի գործերի մեջ, որ միշտ խորհեմ մեծ երկյուղով և Քո կամքը գործեմ ամեն ժամ:

Մի հապաղիր ողորմել ինձ, Տե՛ր, քանզի առանց Քո ներգործության, իմ մեջ երբեք չի գործում բարին և չի բուսում սերմանվածը իմ հոգու անդաստանում, քանզի Քո խոսքի սերմը, որ սերմանվեց իմ մեջ, քաղվեց չար թշնամու կողմից, և բուսածը չորացավ տապից, իսկ մյուսը, փշերի մեջ ընկնելով, խեղդվելով չորացավ: Մշակելով իմ մեջ, Տե՛ր, որպես եզների լծի՛ր իմ երկու աչքերը՝ արտասվագոչ ձայնով հարաժամ պաղատելու Քեզ, որ արժանի լինեմ Քո ողորմությանը:

Քո սիրո գուժը, Տե՛ր, միավորի՛ր ինձ հետ և արձակի՛ր բանտի կապանքներով արգելվածիս, խզի՛ր իմ մեղքերի կապանքները, առաջնորդի՛ր ինձ փրկության ճանապարհով, ինձ օթևաններ՝ պատրաստիր և պսակի՛ր Քո սուրբերի հետ:

Ողորմի՛ր, Տե՛ր Հիսուս Քրիստոս, կարոտյալներին և տարակուսյալներին, որբերին և այրիներին, տմանկներին և հավատացյալ ընտանիքներին, կենդանիներին, մեջեջյալներին և Եկեղեցուն ընծայաբերություն անողների: Աղքատներին կերակրողներին, ողորմածներին, երկյուղածներին և

հիվանդներին, նավորդներին և ճանապարհորդ-
ներին, խոստովանողներին, ապաշխարողներին և անդարձ
մեղավորներին ողորմիր, Տեր և ապաշխարության բեր նրանց:
Բևեռիր, Տեր, իմ մարմինը Քո երկյուղով և Քո պատվիրանների
սիրով և առաջնորդիր երկյուղով լսելու նրանցում հրամայվածները,
կատարելու առանց ծանձրության, մերկանալու մեղքերից և այս կենցաղի
ցանկություններից և պայծառամալու առաքինի վարքով և զոհանալով
պիտի փառավորեմ Քեզ՝ Հոր և Ամենատուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և
հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):



ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՎ ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Այս առակի մեջ դատավորը ներկայացվում է որպես մի անխիղճ և ան-
աստված մարդ, իսկ այրի կինը առաջին հայացքից որպես մի համառ և իր
գործը մինչև վերջ հասցնող մեկը: Ինչ վերաբերվում է դատավորին, դա
այդպես է, իսկ այրին իրականում միզուցե եղել է հեզ, խոնարհ և անպաշտ-
պան մեկը: Եվ լինելով այդպիսին, ի՞նչ հույսով նա այդպես հաճախակի
պիտի դիմեր դատավորին: Չէ որ գիտեր որ նա ամբարտապան է, և նրա
մոտ կարելի է հաջողություն գտնել կամ կաշառքի միջոցով, որի
հնարավորությունը չունեն խեղճ այրին, կամ ծանոթի միջնորդությամբ,
որից էլ նա զրկված էր, կամ միզուցե բողոքելու և վախեցնելու միջոցով,
որը և նույնպես այրի կնոջ թշվառության համար չէր: Ուրեմն, ի՞նչ հույսով
էր նա գալիս, միզուցե մտածում էր, թե համառությամբ վերջ ի վերջո իր
դատը կլսվի, բայց նման դատավորի մոտ համառությամբ հաղթելու միտ-
քը ուղղակի ծիծաղելի էր, չնայած, կարծես թե հենց դա հանդիսացավ նրա
դատը լսելու պատճառը: Դատավորը միզուցե դա ընդունեց որպես
համառություն, բայց այրի կնոջ մղումը երբեք էլ համառությամբ գործին
լուծում տալը չէր: Ուրեմն, ի՞նչն էր այդ անձանձրույթ երթի պատճառը,
ուղղակի միզուցե այն մեծ վիշտը, որ համակել էր նրան, մղում էր մշտա-
պես դիմել այդ անհույս թվացող քայլին, այսինքն՝ ինքն էլ միզուցե շատ
անգամ տեսել կամ լսել էր, թե քանի-քանիս իրենից շատ ավելի
կարողություն, զորություն և հեղինակություն ունեցողների էր դատավորը
ոչ ըստ արդարության, այլ ըստ իր ցանկացածի դատավճիռ կայացրել:

Ուրեմն իր վիճակը կարծես լիովին անհույս էր:
Քանի-քանիսները միզուցե խորհուրդ են տվել այրուն, որ
իզուր չիզուցեցնի ինքն իրեն՝ դատավորի մոտ իզուր գնալ-գալով,
համարելով գործի նման լուծումը անհնարին: Բայց այրին չէր
դադարում կոշիկ մաշեցնել դատավորի դռան առջև: Ուրեմն, ի՞նչ վիշտ
ունեն նա, որից մղվելով դիմում էր այս անհույս քայլին: Միզուցե այրին
զրկվելով ամուսնուց, զրկվել էր և ապրելու միջոցներից և ընկել
պարտքերի տակ, որի դիմաց պարտատերն ուզում էր վաճառել այրու
ունեցվածքը և ստրկացնել երեխաներին: Սա իսկապես մեծ մղում էր, որ
այդ խեղճ, թշվառ կինը արցունքաթաթախ դիմեր այդ անիրավ
դատավորին: Այսպիսի օրինակներ կան Սուրբ Գրքում, հիշեք Եղիսե
մարգարեին դիմող այրու խոսքերը. «Իմ ամուսինը քո ծառան, մեռավ: Դու
գիտես, որ նա Տիրոջ երկյուղած ծառան էր, և ահա պարտատերը եկել է, որ
իմ երկու որդիներին որպես ստրուկ տանի իր մոտ» (Դ Թագ 4:1):
Նմանօրինակ մի բան կատարվել էր միզուցե այս այրի կնոջ հետ: Հիշե՛ք
նաև այն փյունիկ-ասորի կնոջը, որն իր դիվահար աղջկա բժշկության
մղումով դիմեց Հիսուսին, քաջ գիտե՛նալով, որ հրեաները չեն
հարաբերվում հեթանոսների հետ, և եթե հասարակ ժողովուրդը միզուցե
ինչ-որ չափով հաղորդակցվում էր, ապա վարդապետներն ընդհանրապես
դա մեղք էին համարում: Բայց աղջկա տառապանքներն այս կնոջը մղեցին
նորից կարծես անհույս եղող քայլի, խնդրելով, որ Տերը բժշկի աղջկան:
Սակայն Տերը նրան ասաց. «Թույլ տուր, որ նախ մանուկները կշտանան,
քանի որ լավ չէ մանուկների հացը առնել և շների առաջ գցել» (Մարկ.
7:24-28): Քանի որ հեթանոսների անօրեն կենցաղի համար հրեաները
նրանց շուն էին անվանում: Սակայն որքան էլ որ վիրավորական թվար այդ
խոսքերը, դրանք պատճառ չեղան, որ այրի կինը վրդովված հեռանա, այլ
իր վշտից մղված իր անձը խոնարհեցրեց և իրեն իսկապես այդպիսին
համարելով ասեց. «Տե՛ր, շներն էլ մանուկների սեղանի փշրանքներից են
կերակրվում»: Եվ այդ խոնարհությունը, որ մեծ վշտի պատճառով էր,
արժանացրեց հետևյալ ավետիսին. «Այդ խոսքիդ համար գնա՛՛ դևը քո
աղջկանից դուրս եկավ»: Ուրեմն տեսնում ենք, որ մեծ վշտից եղած մղումն
էր, որ պատճառ էր դարձել այրի կնոջ անձանձրույթ դիմումներին, որի
վախճանը եղավ այն, որ դատավորն այսպես խորհեց. «Թեև Աստուծուց չեմ
վախենում և մարդկանցից չեմ անաչում, բայց այն բանի համար, որ այրի
կինն ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անդադար չգա և
ինձ չանհամազուտացնի»: Եվ Տերն ասաց. «Լսեցեք, թե ինչ էր ասում
անիրավ դատավորը: Իսկ Աստված արդարություն չի անի իր այն
ծառաներին, որոնք գիշեր ու ցերեկ աղաղակում են, և նրանց հանդեպ
միայն համբերատար կլինի: Այո, ասում են ձեզ, նրանց իսկույն
արդարություն կանի, իսկ երբ Մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա
հավատ կգտնի»: Եվ այս առակով Տերը ուսուցանում էր, որ պետք է գիշեր
ու ցերեկ անձանձրույթ աղոթել: Բայց հարց է առաջ գալիս. չէ՞ որ այս այրի
կինը մեծ վիշտ ուներ, որից և մղված անձանձրույթ դիմում էր կարծես

անհույս քայլի: Իսկ մենք՝ քրիստոնյաներս, ի՞նչ մղմամբ պիտի հանապազ աղոթքի մեջ լինենք, ի՞նչ վիշտ կարող է մեզ մղել այդ անձանձրույթ քայլին: Իրականում, մեզ հետապնդող վշտերն ավելի մեծ և զարհուրելի է, քան այրի կնոջ վիշտը, այսինքն՝ առջևում եղող մահը, ահավոր Դատաստանը և գեհեմի անվախճան տառապանքները: Տերն ասաց. «Չեք կարող ինձ հետևել, եթե չուրանաք ձեր հորը, մորը, կնոջը, երեխաներին և եթե ինքներդ ձեզ էլ չուրանաք, չեք կարող ձեր խաչը վերցնել և իմ հետևից գալ»: Այսինքն՝ ինչի համար որ ջանում էր այրի կինը երեխաների: Տեսնում ենք, որ այն ահավոր մեծ վշտից խուսափելու համար պետք է ուրանանք նաև երեխաներին, որի համար վերը նշված այրի կանայք այդպես անկոտրում էլք էին փնտրում: Ուրեմն, ավելի մեծ մղում, ավելի մեծ պատճառ ունենք անդադար առ Աստված աղաղակելու: Ճիշտ է, չափազանց ավելի մեծ է պատճառը, բայց և անհամեմատելի է անհրաժեշտ և Արդար Դատավորը, որն այսօր դեռ նստած չէ դատավորի գահին, այլ շնորհի և Իր անհուն ողորմության գահին: Բայց քանի որ գրված է անհրաժեշտ տնտեսի առակի մեջ թե այս աշխարհի որդիներն ավելի խելամիտ են իրենց ճանապարհներում, քան լուստ որդիներն իրենցում, ապա կարող ենք իսկույն գլխի ընկնել, թե ինչու այրի կինն իր վշտի համար այսպես նախանձախնդիր էր, իսկ մենք՝ քրիստոնյաներիցս շատ-շատերն այսպես անհոգ: Դրա համար միգուցե ասվեց. «Ինչ որ հավատով խնդրեք, ձեզ կտրվի, բայց երբ որ գամ, երկրի վրա հավատք կգտնե՞մ»: Այսինքն՝ ձեր նյութական, կենցաղային, անձնական և այլ հարցերի համար, որ հավատքով խնդրում եք, ըստ ձեր հավատքի կստանաք, բայց երկրորդ գալուստին կգտնվե՞մ արդյոք իրենց հոգու փրկության համար հավատքով աղաղակողներ: Հոգու փրկության համար պետք է ավելի հզոր հավատք, քան կենցաղայինի, որովհետև, նյութականը՝ մարմնավորը, աչքի առջև է և դրա կորուստն իսկույն ցավ է պատճառում և ըստ այնմ մեծ մղում և ջանք է արվում և ի սրտե աղոթք հղվում առ Աստված: Իսկ դատաստանի ահավորությունը, դժոխքի դառնությունները աչքի առջև չեն, այլ առայժմ մեզ համար անտեսանելի, անշոշափելի և աննյութական է, դրա համար ընկալվում է միայն հավատքով: Այսինքն՝ հավատքով ընդունել դրանց լինելիությունը և էլ ավելի մեծ հավատքով հանապազ աղաղակել առ Աստված՝ դրանցից խուսափելու համար: Իսկ ի՞նչ անել, որպեսզի այդ հոգու փրկության համար աղոթելու և ջանալու մղումը մեր մեջ վառ մնա: Նախ պետք է աղոթքով խնդրել հենց դրա համար, այսինքն՝ այդ երկյուղը ստանալու, առանց որի քրիստոնյան իր դիրքի մեջ չի կարող լինել, այլ կգտնվի մի ծանծաղ վիճակում, որի ժամանակ շատ հեշտությամբ կարելի է խաբվել և շեղվել փրկարար ուղուց: Քանի որ միայն իմաստություն ունեցող մարդը կարող է քայլել այդ ուղով՝ առանց գայթակղվելու և շեղվելու: Իսկ ո՞վ է իմաստուն, Սուրբ Գրքում ասվում է. «Իմաստության սկիզբն Աստծո հանդեպ ունեցած վախն է», որը և փրկարար է, որովհետև գրված է. «Մի վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, այլ վախեցեք նրանից, ով

մարմինն ու հոգին գեհեղ նետելու կարողություն ունի»: Այդ թանկարժեք վախը ձեռք բերելու համար այսպես էր աղոթք հղում առ Տեր սբ. Ներսես Շնորհալիկ. «Մոլորվածներին դարձի բերող, դարձրու ինձ իմ չար սովորություններից, բարի սովորության և բեռնիր իմ հոգին մահվան սոսկալի օրվան, գեհեմի երկյուղին և Արքայության սիրուն, որպեսզի զղջամ մեղքերիս համար և չմեղանչեմ, այլ գործեմ արդարություն»: Տեսնում ենք, որ որպես մեծ շնորհ է համարել գեհեմի և մահվան, նաև արքայության հիշողությունը մեր սուրբ հայրապետը: Նման դիրք են ունեցել մեր բոլոր սուրբ հայրերը: Ահա ինչպես էր նույնը խնդրում սբ. Եփրեմ Ասորին. «Շնորհիր ինձ, Տեր աչքերի լաց, արցունքների հոսում, մեղքերի սուգ, սրտի երկյուղ, ոսկորներիս սարսափ ու դող՝ տանջանքների ահից, կենաց ճանապարհ և անդադար պաղատանքներ»:

Այս վերջին ժամանակներում բազում քրիստոնյաների մեջ սողոսկել է մի վարդապետություն, որի հետևանքով աշխատում են ամեն կերպ խուսափել այդ փրկարար երկյուղալի հիշողություններից և միայն հիշում են արքայության մասին, ինքնըստինքյան կորցնելով Աստծո հանդեպ ունեցած երկյուղը, այսինքն՝ իմաստությունը: Այնինչ դրանց մասին հիշողությունը փրկության համար խիստ նպաստավոր է, իսկ դրանք անուշադրության մատնելը խիստ վտանգավոր ըստ սբ. Հովհան Ոսկեբերանի. «Նրանք, ովքեր արհամարհեցին դժոխքը, չեն խուսափի դժոխքից: Իսկ հիշողությունը դժոխքի մասին չի թողնի, որ մենք ընկնենք դժոխք»: Եվ մի ուրիշ տեղ էլ ասում է. «Եթե երկյուղը բարիք չլիներ, ապա հայրերը իրենց երեխաների վրա հսկիչ չէին կարգի, ոչ էլ օրենսդիրները քաղաքների վրա քաղաքապետեր: Ի՞նչն է ավելի սարսափելի գեհեմից: Բայց չկա ավելի օգտակար այդ վախից, որովհետև գեհեմի վախն արժանացնում է մեզ արքայության պսակների: Որտեղ երկյուղն է, այնտեղ չկա նախանձ, որտեղ երկյուղն է, այնտեղ դրամապաշտությունը գլուխ չի բարձրացնի, որտեղ վախն է՝ այնտեղ մարած է բարկությունը, սանձված է չար վավաշտությունը, և արմատախիլ է արված ամեն մի անմիտ կիրք: Այսպես սա մեծ գեներ է, եթե երկյուղը պատի մեր անձը, ոչ մի ստորացուցիչ կիրք չի կարող հեշտությամբ սողոսկել մեր մեջ, սա բոլորին դուրս է վռնդում և դուրս քշում փախուստի մատնելով իր գործությամբ: Եվ ոչ միայն այս, այլ և մի ուրիշ օգտակար, սրանից շատ ավելի մեծ օգուտ կարող ենք ստանալ: Նախ՝ վախը ոչ միայն քշում է մեզանից չարիքները, այլ և ներքնակեցնում է մեր մեջ առաքինության գործերի մղում: Որտեղ երկյուղն է, այնտեղ հոգատարությունը, ողորմածությունը, ջանասիրությունը աղոթքի մեջ, ջերմ արցունքները, նաև կոտրած սիրտը և խոնարհ հոգին: Ոչինչ այնպես չի ոչնչացնում մեղքը և օգնում առաքինության աճին և ծաղկմանը, ինչպես հարատև երկյուղը: Այսպիսով, ով չի ապրում երկյուղով, այդպիսիներին անհնար է լինել բարեպաշտ, ինչպես որ երկյուղածությամբ ապրողը չի կարող մեղանչել: Եթե վախը գեհեմի հանդեպ բարիք չլիներ, Քրիստոս այդքան երկար և շարունակաբար չէր խոսի

խրատելով անդենական պատիժների և տառապանքների մասին: Վախը տանջանքների հանդեպ ոչ այլ ինչ է, եթե ոչ պատ, արգելք և անկործանելի ամրոց, իսկ մեզ պետք է մեծ պարիսպ, որովհետև ամեն կողմից մեծ և բազմաթիվ որոգայթներ են լարված»:

Եթե մենք ցանկանում ենք ելնել Տիրոջ սուրբ լեռը, ապա մեզ պետք է օգնություն: Դժոխքի մասին հիշողությունը մեզ օգնում էր վեր բարձրանալ, այդ երկյուղը կարծես մեզ ներքևից հրում է բարձրացնելով դեպի վեր, հիշողությունը երկնքի արքայության մասին մեզ ձգում է վերևից և օգնում բարձրանալ: Սրանցից որ մեկից էլ որ զրկվենք, կմանք լեռան վրա անշարժ գամված մի վիճակում, և եթե դա երկար տևի, միգուցե ընդհանրապես գլորվենք ցած: «Ինչպես որ չի կարող սոված մարդը չհիշել հացի մասին, այնպես էլ հնարավոր չէ փրկվել՝ առանց հիշելու դժոխքը, մահը և վերջին դատաստանը» (Յովհաննես Սանդուխտ): Տեսնում ենք, որ այս մահվան, դատաստանի և դժոխքի մասին հիշողությունը բարի է և փրկարար, դրա համար էլ սատանան ամեն կերպ ուզում է մեր մտքից հանել և մոռացության մատնել այդ հիշողությունը, և բոլոր նրանք, որ ապահովության են մղում քրիստոնյաներին, ասելով, թե նրանք էլ վախ պիտի չունենան իրենց փրկության համար, նրանք սատանայի ջրաղացին ջուր են լցնում: Իսկ սուրբ հայրերը տեսնելով, որ դա սատանայական խաղ է, ամեն կերպ ջանում էին, որ չարը չհափշտակի իրենցից այդ փրկարար հիշողությունը: «Փրկիր ինձ, Տեր, որսողներից, որոնք գալիս են ինձ վրա՝ բռնելու մեղքով և անժուժկալության ծուլությամբ մոռացնելու իմ հանցանքները և թույլ չտալու հիշել հատուցման օրը և սարսռելի պատասխանը, որ ասում է. «Չեռու գնացեք ինձանից անիծյալներ, դեպի հավիտենական հուրը» (Եփրեմ Ասորի): Եվ նույն սուրբ Եփրեմը բնորոշում է Աստծո վախը, որից շատերը ջանասիրաբար ուզում են խուսափել, այսպես. «Երկնքում ամենագորեղը բոլոր թռչուններից արծիվն է: Երկրի վրա բոլոր գազաններից՝ առյուծը, իսկ մարդկանց որդիների մեջ՝ Աստծուց վախեցողը»: Այսպես զովաբանում են Աստծո հանդեպ եղող երկյուղը բոլոր հայրերը. «Աստծո վախը ձեռք բերողը՝ շնորհաց լիություն է ձեռք բերել, որովհետև Աստծո վախը մարդուն փրկում է մեղքից» (Յայր Մովսես), «Ինչպես ճրագն է մուօ սենյակում լուսավորում, այնպես էլ Աստծո վախը, երբ բնակվում է մարդու սրտում, լուսավորում ու սովորեցնում է բոլոր առաքինությունները ու Տիրոջ պատվիրանները» (Աբբա Յակոբ):

Այս պատճառով էլ հայրերը ամեն կերպ ջանում էին, որ այդ հիշողությունը՝ վախը, որպես զանձ միշտ և հաստատուն իրենց մեջ ունենան և ջանում էին խուսափել այն ամենից, ինչը կարող էր վնասել այդ մեծ շնորհին. «Ինչպես ծուխն է մեղուներին քշում, որից հետո հանում են նրանց աշխատած քաղցրությունը, այդպես էլ մարմնավոր ցանկությունները քշում հեռացնում են մեր հոգուց Աստծո վախը և ամեն բարիք» (Յայր Պիմեն), «Չեռու ստությունից, քանզի այն վանում է Աստծո վախը» (Յայր Անտոն):

Սուրբ Գիրքն էլ հորդորում է, որպեսզի քրիստոնյան ձեռք բերի Աստծո

վախը և ամեն ջանք թափի այն որպես զանձ պահպանելու համար: «Ես եղա ընկեր նրանց, ովքեր վախենում են Քեզանից» (Սաղմ. 119:63), «Տիրոջ երկյուղը կյանք է մարդու համար, ով չունի այդ երկյուղը, մոլորված շրջում է դռներին, ապրում է այն տեղերում, ուր հավիտյան այցելու չի ունենա» (Առակ. 19:24), «Տիրոջ երկյուղը իմաստության սկիզբն է, դա է և՛ հարստությունը, և՛ փառքը և կյանքը» (Առակ. 22:4):

Սակայն շատ կարևոր է հավասարակշիռ դիրք պահպանել: Ճիշտ է, գրված է, որ «Աստված մաշող կրակ է» և «սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնել», սակայն պետք է միշտ հիշել նաև նրա անձայրածիր ողորմության և մարդասիրության, նաև երկնքի արքայության բարիքների մասին, որպեսզի մի ծայրահեղությունից՝ այսինքն՝ փրկված լինելու անհոգությունից, չընկնենք մյուսի, այսինքն՝ անհուսության մեջ: «Աղոթքից առաջ անհրաժեշտ է հիշել մեր ոչնչությունը և սգալ մեղքերի համար, դա փրկարար է անմահ հոգու համար: Սակայն ով չափազանց ողբա իր պղծության համար և հետևաբար չիուսա Աստծո ողորմության վրա, այդպիսիներին, իբր բարի պատրվակով, դեերը կարող են ենթարկել ծայրագույն տրտմության և անհուսության առ Աստված, մինչև իսկ հասցնելով ինքնասպանության: Դևերի այսպիսի հարձակումը պետք է ետ մղել՝ ասելով. «Չենց այսպիսի մեղավորի համար, ինչպիսին ես եմ, Տեր Աստված իջավ երկնքից երկիր և խաչի մահը կրեց բոլորի և հատկապես իմ համար» («Վանական ուսմունք» գրքից):

Եվ այսպես, տեսնում ենք, որ այրի կինն իր ընտանիքի ունեցվածքի վշտից մղվում էր անձանձրույթ խնդրանքների, և այդ վիշտը դարձավ պատճառ հաջողության հասնելու: Մենք էլ անհոգ չլինենք, այլ ջանանք ձեռք բերել չնայած ծանր, ինչ-որ տեղ անախորժ այդ երկյուղը, որը նման է թեկուզ և դառնահամ, բայց և բժշկող և փրկարար դեղամիջոցի՝ այսինքն՝ մահվան, դատաստանի և դժոխքի հիշողության: Եվ մենք էլ աղաղակենք առ Աստված ըստ սուրբ հայրերի, որ արժանանանք հարատև մեր մեջ ունենալու այդ երկյուղը: «Չիշեցրու, Տեր, իմ զբաղված և մոռացկոտ մտքին Քո ահավոր և սոսկալի Դատաստանը, արդարների պատիվն ու փառքը և մեղավորների աններելի տանջանքները, և նրանցով զարհուրեցնելով, դողացրու իմ մարմինը, որ իմ աչքերի առջև հանապազ տեսնեմ մահը: Ամրացրու ինձ, Տեր, Քո երկյուղով, զորացրու Քո զորությամբ, առողջացրու իմ հոգու հիվանդությունը, բժշկիր ցավերը և հաստատիր իմ սրտում Քո սրտի ջերմությունը, որ չարչարանակից լինեմ Քո սուրբերին: Եվ անդադար երգով փառավորեմ Ամենասուրբ Երրորդությունդ այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն» (Եփրեմ Ասորի):



**ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ
ԽՈՍՔԸ ԳԵՀԵՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ՆՐԱ ՇՈՒՐՋ ԶՐՈՒՅՑԻ
ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նա, ով լիովին բարեպաշտ է, առաջնորդվում է ոչ թե պատժի հանդեպ ունեցած վախով և ոչ արքայությունը ժառանգելու ցանկությամբ, այլ Քրիստոսով: Իսկ մենք խորհենք արքայության երանությունների և գեհեների տանջանքների մասին, և զոնե այսպիսով ճշմարտության մեջ ուսուցանենք և դաստիարակենք մեզ, սրա միջոցով մղենք մեզ կատարելու այն, ինչը որ պարտ ենք կատարել: Երբ այս կյանքում կտեսնենս ինչ որ մեծ և լավ բան, այնժամ մտածիր երկնային արքայության մասին, և կհամոզվես, որ քո տեսածը չնչին բան է: Երբ տեսնես որևէ զարհուրելի բան, այնժամ մտածիր գեհեների մասին և դու կծիծաղես դրա վրա: Երբ քեզ կլանում է մարմնավոր տռփանքը, խորհիր կրակների մասին և մտածիր այդ մեղքի պատճառած հաճույքի մասին այնպես, որ այն չնչին մի բան է, նույնիսկ իր հետ հաճույք իսկ չի բերում: Եթե վտանգավոր է խախտել օրենքը, որն այստեղ է կարգվել և ունի այնպիսի զորություն, որ մեզ ետ է պահում չարագործությունից, ուրեմն առավել մեզ զգոն կպահի ապագայի անվախճան չարչարանքներից հավիտենական պատժի հիշողությունը: Եթե երկրավոր թագավորի հանդեպ ունեցած երկյուղը մեզ ետ է պահում բազում հանցանքներից, ինչքան առավել մեզ ետ կպահի երկնավոր Թագավորի հանդեպ եղող երկյուղը: Ի՞նչ կերպով մենք կարող ենք բորբոքել մեր մեջ այդ երկյուղը: Եթե ուշադիր լինենք Սուրբ Գրքի խոսքերին: Քանի որ միայն մահացածի տեսքը խոնարհեցնում է մեր միտքը, ուրեմն առավել ևս

գեհեները և անմար կրակները, առավել ևս սատկող որդերը: Եթե մենք մշտապես խորհենք գեհեների մասին, ապա շուտով և փութապես չենք գահավիժի նրա մեջ: Դրա համար էլ Աստված սպառնում է պատժով: Եթե խորհելը գեհեների մասին, մեզ մեծ օգուտ չբերեր ապա Աստված չէր խոսի այդ սպառնալիքի մասին բայց քանի որ հիշողությունը սրա մասին կարող է նպաստել մեծամեծ գործերի իրականացման համար, դրա համար էլ Նա կարծես այս բանը որպես փրկարար միջոց է ուղարկել մեր հոգիներին՝ այն սարսափը, որ բորբոքվում է մեր մեջ այդ հիշողությունից: Այդ պատճառով էլ անհոգ չգտնվենք օգուտի հանդեպ, որ ծնվում է այստեղից այլ այն ունենանք որպես մշտական խոսակցության առարկա՝ առավոտյան և երեկոյան սեղանի շուրջ: Հաճելի բանի շուրջ խոսակցությունը ամենափոքր օգուտ իսկ չի բերի մեր հոգիներին, հակառակը, այն կդարձնի ավելի տկար, իսկ զրույցը ավելի վշտագին և տխուր բաների շուրջ, կհեռացնի մեր անձից ցրվածությունը և փափկակեցությունը, և ուղղելով մեզ, կկանգնեցնի ճշմարտության ճանապարհի վրա: Այն կպահի նույնիսկ այն ժամանակ, երբ անձն ընկնի տկարության մեջ: Ով պատմում է թատրոնների և դերասանների մասին, նա սրանով մեր հոգուն ոչ մի օգուտ չի բերում, հակառակը, առավել թուլացնում է նրան՝ այն դարձնելով ավելի թեթևամիտ: Ով զբաղվում է ուրիշի գործերին հետաքրքրություն ցուցաբերելով, ուզում է հաղորդակից լինել այդ բանին, նա այդ հետաքրքրասիրության հետևանքով վտանգների է ենթարկվում իրեն: Իսկ նա, որ խոսում է գեհեների մասին, ոչ մի վտանգի չի ենթարկվում, այլ իր անձը դարձնում է առավել ողջախոհ: Միգուցե դու վախենում ես այդպիսի զարհուրելի զրույցներից: Մի՞թե կարծում ես, թե կհանգցնես գեհեները, եթե չխոսես դրա մասին: Կամ մի՞թե էլ ավելի կբոցավառես, եթե խոսես նրա մասին: Խոսես թե չխոսես այդ մասին, միևնույն է, կրակը պիտի վառվի: Մշտապես խորհիր այդ բանի մասին, որպեսզի երբեք չընկնես այնտեղ: Քանի որ անհնարին է անձի համար՝ ընկնել մեղքի մեջ, եթե նա հարատև զբաղված է գեհեների մասին խորհելու հիշողությամբ: Լսիր, ուրեմն, այս սքանչելի խրատը. «Հիշիր քո վերջը և հավիտյան չես մեղանչի» (Սիրաբ 7:39): Անհնար է այն անձի համար, որը վախենում է իր գործերի համար պատասխանատվության ենթարկվելուց, չծուլանա չարիք գործելու մեջ: Քանզի վախը, որ անրանում է մեր մտքում, թույլ չի տալիս, որ նրանում որևէ աշխարհային բան տեղ գտնի: Եթե խոսքը գեհեների մասին է, որ երբեմն է միայն զբաղեցնում մեզ, այսպես խոնարհեցնում և սանձահարում է մեր անձը, ապա միտքը նրա մասին, որ հարատև մնում է մեր մեջ, արդյո՞ք ամեն կրակից առավել չի՞ մաքրի մեր անձը: Այնքան չմտաբերենք երկնային արքայությունը, որքան գեհեների կրակները: Քանի որ երկյուղը առավել մեծ ուժ ունի մեր վրա, քան Ավետյաց Երկիրը, և ես գիտեմ, որ շատերը կիրառվեին հազարավոր երանություններից, միայն թե ազատվեին պատժից: Այդպես էլ ինձ համար այժմ բավարար եմ համարում միայն այն, որ չենթարկվեմ քննության և խուսափեմ պատժից: Երբեք չի ընկնի գեհեն նա ով մշտապես այն իր աչքերի

առաջ է ունենում: Երբեք չի խուսափի գեհեմից

Նա, ով արհամարհում է նրան, ինչպես որ մեզ մոտ այն մարդիկ, որոնք վախենում են արդարադատությունից, զգուշանում են և չեն ընկնում դատավորի մոտ, և հակառակը, ովքեր անտարբեր են, նրանք հաճախ ենթարկվում են դատի, այդպես է և այնտեղ: Եթե միևնույնը չվախենային կործանումից, ապա նրանք կկործանվեին: Բայց բանի որ նրանք վախեցան, դրա համար խուսափեցին պատժից: Եթե Նոյի ժամանակ մարդիկ վախենային ջրհեղեղից, ապա չէին կործանվի նրանով: Եվ սողոմացիները, եթե վախենային, ապա կխուսափեին երկնառաք կրակից: Մեծ չարիք է սպառնալիքների հանդեպ անհոգությունը: Ով անտես է անում սպառնալիքները, նա սեփական փորձով է իմանում հետևանքները: Ոչինչ ավելի օգտակար չէ գեհեմի մասին զրույցից, այն դարձնում է մեր հոգին ամեն տեսակի արծաթից էլ մաքուր: Լսիր, թե ինչ է ասում մարգարեն. «Նրա բոլոր օրենքները իմ առջև են» (Սաղմ. 17:23):

Քրիստոսն էլ միշտ խոսում էր գեհեմի մասին: Չմայած սա տրտմեցնում է լսողներին, սակայն նրան տալիս է մեծ օգուտ: Այսպիսի բաներ պարունակում է այն ամենը, ինչը օգտակար է, քանի որ դեղերն ու սպեղանիներն էլ սկզբում տհաճություն են պատճառում հիվանդին, բայց հետո նրան մեծ օգուտ են տալիս: Եթե մենք չենք կարողանում տանել մեզ համար տհաճ նման խոսակցություն, ապա պարզ է, որ մենք ի վիճակի չենք լինի կրելու մեր վրա եկող ծանր փորձությունները գործնականում: Եթե մեզանից ոչ ոք չի կարող կրել գեհեմի մասին խոսակցությունը, ապա պարզ է, որ եթե մենք ենթարկվենք հալածանքների, ապա մեզանից ոչ ոք չպիտի կարողանա դիմադրել կրակներին և սրերին: Վարժեցնենք մեր լսողությունը գեհեմին, որպեսզի չդառնանք փափկասուն: Եթե սովորենք սարսափազդու գրույցներին, այնժամ կսովորենք նաև կրել ահավոր նեղությունները և վշտերը: Իսկ եթե լինենք այն աստիճան փափկասուն, որ ի վիճակի չլինենք կրելու նույնիսկ խոսքը, ուրեմն ինչպե՞ս պիտի կարողանանք դիմակայել դեպքերին: Բայց ես աղաչում եմ ձեզ, եթե ձեր մեջ կա զոհն մի փոքր սեր, մշտապես զբաղվեք նման առարկայի շուրջ եղած գրույցներով: Ծայրահեղ դեպքում, սա ձեզ ոչ մի վնաս չի տա, եթե նույնիսկ օգուտ էլ չտա, բայց անկասկած է, որ հույժ օգտակար կլինի: Քանզի ինչպիսին որ մեր խոսակցության թեման է, այնպիսին էլ դառնում է մեր հոգին: «Մի խաբվեք, վատ խոսքերը ապականում են լավ բարքերը» (Ա Կորնթ. 15:33), հետևաբար, բարենպաստ գրույցները մեծ օգուտ են բերում, քանի որ նրանք երկյուղ են առաջացնում և դարձնում մեզ ողջախոհ: Մեր հոգիները նման են մոմի, եթե սառը գրույցներով նրան կերակրենք, այն կդառնա պինդ և կարծր, իսկ եթե բոցավառ գրույցներով, ապա այն կփափկի: Իսկ երբ այն փափկի, նրան կարող ես տալ այնպիսի տեսք, ինչպիսին որ ցանկանաս և կարող ես գծագրել նրա վրա Արքայական կերպարանք: Դրա համար պարսպապատենք մեր լսողությունը դատարկ խոսակցությունների դեմ, նրանք քիչ չարիք չէ, որ կրում են իրենց մեջ: Նրանցից է, որ

առաջանում է ամեն տեսակի չար բան: Եթե մեր


միտքը սովորի ընկալել Աստվածային խոսքերը, այնժամ նա ոչ մի ուրիշ բանի վրա ուշադրություն չի դարձնի և ուշադրություն չդարձնելով ուրիշ այլ բանի վրա, նա երբեք չի որոշի գործել վատ արարքներ: Քանի որ խոսքը դա ճանապարհ է դեպի գործերը, սկզբից մտածում ենք, հետո խոսում, իսկ հետո՝ գործում: Հաճախ շատերը, նույնիսկ ողջախոհ մարդիկ, ամոթալի խոսակցություններից անցել են ամոթալի գործերի: Քանի որ մեր անձը իր բնությամբ ոչ բարի է, ոչ էլ չար, այլ թե մեկը և թե մյուսը կախված է մեր սեփական կամքից: Նման նրան, ինչպես առաջաստը, որ կողմ որ փչի քամին, այն կողմ էլ նավը կշարժվի: Սա ավելի լավ է դեկավարում նավը, քան դեկը, երբ լինում է համընթաց քամի, այնպես էլ մեր միտքը՝ եթե բարեհաճ քամին իր կողմ է բերում բարի խոսքեր, նա անվտանգ լողում է, իսկ եթե փչում են հակառակ քամիներ, այնժամ այն շատ հաճախ խորտակվում է: Ինչ որ է, քամիները նավի համար, նույնն էլ խոսքերը հոգու համար: Որ կողմ ուզես, այն կողմ էլ կարող ես այն թեքել և ընթացք տալ: Այս բանի համար էլիմաստուններից մեկը խրատելով մեզ ասում է. «Թող քո բոլոր գրույցները լինեն Բարձրյալի օրենքի շուրջ» (Սիրաք 9:23):

Սրանից ելնելով, աղաչում եմ ձեզ, կտրելով երեխային մայրական կրծքից, չսկսենք նրանց պատմել պառավական հեքիաթներ, այլ փոքրիկը մանկական տարիքից թող սովորի, թե ինչ է Դատաստանը, ինչ է պատիժը, թող արմատանա նրա մեջ միտք՝ այդ երկյուղի և երբ դա արմատանա, նրան մեծ օգուտ կլինի, քանի որ անձը՝ ընտելանալով վաղ հասակից այս բանին, տագնապ է ապրում այդպիսի վիճակի սպասումից և չի կարող հեշտությամբ ազատվել այդ երկյուղից, այլ նմանվելով հեշտ դեկավարվող ձիու, որն իր վրա ունի որպես ձիավոր՝ գեհեմի մասին մտքերը, ամեն կերպ կջանա ուղիղ վարք ունենալ: Կխոսի ու մասնակցություն կունենա միայն հոգեշահ գրույցներին: Ո՛չ երիտասարդությունը, ո՛չ հարստությունը, ո՛չ որբանալը և ուրիշ ոչ մի այլ բան կարողություն չեն ունենա նրան վնաս հասցնելու, ահա այդպես ամուր կլինի նրա միտքը, և այսպիսով նա կարող է դիմակայել ամեն ինչի դեմ: Նման խոսակցություններով խրատենք նաև ինքներս մեզ և մեր մանկանց, մեր ծառաներին և երեխաներին, ընկերներին, և եթե նույնիսկ հնարավոր է, նաև թշնամիներին: Քանզի նման գրույցների միջոցով մենք ի վիճակի կլինենք կանխարգելել բազում մեղքեր և ավելի բարվոք կերպով ապրել վշտերի մեջ, քան բարենպաստ իրավիճակներում: Դա երևում է նրանցից, ինչի մասին որ հիմա մենք կխոսենք: Ասա ինձ, եթե դու մտնես տուն, որտեղ կատարվում է հարսանեկան տոնակատարություն, արդյոք մի քանի ժամ չի՞ լինելու այն հաճույքը, որ դու կստանաս այդ զվարճանքից, և ապա հեռանալով կտրտմես, որ դու զրկված ես նման լիությունից: Բայց եթե դու մտնես սզի՝ լացողների տուն, թեկուզ և նրանք լինեն մեծահարուստ մարդիկ, դուրս գալով այնտեղից, դու իսկույն հանգստություն կզգաս: Քանզի դու քեզ հետ նախանձ չէիր տանի այդտեղից, այլ մխիթարություն և սրտապնդում քո

աղքատության մեջ: Դու փորձով կտեսնեիր, որ հարստությունը բարիք չէ և ոչ էլ աղքատությունը՝ չարիք, այլ թե՛ մեկը և թե՛ մյուսը առաջացնում են միայն անտարբերություն: Այնպես էլ ներկա պահին, եթե զբաղվես հաճույքների մասին գրույցներով, ավելի կտրտմեցնես քո անձն այն բանի համար, որ նա կարողություն չունի ճաշակելու այդ բաներից: Բայց եթե հաճույքների մեջ քո խոսակցությունների նյութը լինի գեհեների մասին այդժամ դա կծառայի քեզ համար որպես ուրախության աղբյուր և մեծ մխիթարություն: Քանզի եթե դու մտածես, որ այս հաճույքները ամենաչնչին կերպով չեն կարող քեզ օգնել այս կրակների դեմ, այնժամ չես փնտրի էլ դրանք, իսկ երբ մտածես, որ նրանք սովորաբար ավելի հուժկու են, բորբոքում այդ կրակը դու ոչ միայն չես փնտրի նրանց, այլ նրանց հանդեպ նողկանք կզգաս կմերժես նրանց: Այս պատճառով էլ, չխուսափենք գեհեների մասին խոսակցությունից, որպեսզի խուսափենք գեհեներից: Չխուսափենք պատժի մասին, հիշողությունից, որպեսզի չարժանանանք այդ պատժին: Եթե այն հարուստը խորհեր գեհեների մասին չէր մեղանչի, բայց քանի որ երբեք իր հիշողության մեջ այն չունեցավ, դրա համար էլ ընկավ դրա մեջ: Ասա ինձ, ով մարդ, երբ հասնի քո ժամը Քրիստոսի Դատաստանի առջև կանգնելու, մի՞թե այնժամ էլ ամեն ինչի մասին կխոսես միայն ոչ այս մասին: Երբ դու գործ ունենաս դատարանում, և եթե այդ գործը նույնիսկ արժանի էլ չլինի ուշադրության, որպեսզի նրա մասին խոսվի, միևնույն է, դու գիշեր թե ցերեկ և ամեն ժամ ուրիշ այլ բանի մասին չես խոսի, այլ միայն այդ գործի վերաբերյալ: Մինչդեռ պարտավոր լինելով ամբողջ կյանքիդ համար հաշվետվություն տալու Աստծու առջև և կանչվելու պատասխանատվության, դու չես կարողանում տանել նույնիսկ այն, որ ուրիշները քեզ ընդամենը հիշեցնում են այդ դատաստանի մասին: Այն բանի համար է, որ բոլորը ձգտում են կորստի և ապակամության, որ մենք երբ պատրաստվում ենք կանգնել մարդկային դատաստանի առջև՝ կենցաղային հարցերի պատճառով, ամեն բան շարժման մեջ ենք գցում: Բոլորին դիմում ենք խնդրանքով, մշտապես անհանգստանում ենք այդ պատճառով, ամեն բան անում, ինչ անհրաժեշտ է այս բանի համար: Մինչդեռ շուտով Քրիստոսի Ատյանի առջև պիտի կանգնենք, և մենք ոչինչ չենք անում. ո՛չ անձամբ, ոչ էլ ուրիշների միջոցով չենք պաղատում Դատավորին: Չնայած այդ բանին, Նա մեզ շատ ժամանակ է տալիս, և հանկարծ չի, որ կանչում է մեզ մեղքերի մեջ եղած վիճակում, ընդհակառակը, մեզ հնարավորություն է տալիս ազատվելու նրանցից, և Նրա բարությունը և մարդասիրությունը առանց ուշադրության չեն թողնում այն բաները, որոնք Իր կողմից կարող էին արվել մեզ համար: Բայց շատերն իրենց կողմից ոչինչ չեն անում, դրա համար էլ ենթարկվում են մեծ պատիժների, և Աստված չանի, որ դա մեզ հետ էլ կատարվի: Դրա համար էլ աղաչում են ձեզ, խելքի գանք գոնե հիմա: Մեր աչքի առջև ունենանք գեհեները, խորհենք այս պատժի անխուսափելիության մասին, որպեսզի խորհելով այս մասին, մենք թե՛ չարից խուսափենք և թե՛ ձեռք բերենք առաքինության գործեր և

արժանանանք ստանալու օրհնություններ, որոնք խոստացված են Իրեն սիրողների համար՝ օրհնությամբ և մարդասիրությամբ Տեր Աստծու և մեր Փրկչի Հիսուս Քրիստոսի, որին փառք հավիտյանս: Ամեն:


Տեր, նեղության մեջ հիշեցի՞նք Քեզ, որովհետև Քո տված փոքր նեղությունը խրատ է մեզ համար (Եսայի 26:Օ6):
Տիրոջ խրատը կբացի իմ ականջները, և ես խստասիրտ չեմ դառնա ու չեմ ընդդիմանա (Եսայի 50:5):



« Դժոխք բացեալ » գրքից

Ի ձեռք հայցեմ եղբարք, դուք ինձ լուարուք. զբանըս կենաց խօսիմ, ունկնդիր լերուք: Եթէ կամիք անսալ դուք բանից իմոց. գիրս այս եղիցի լոյս հոգւոց ձերոց: Նման է գիրս այս Յորդանան գետոյ. զի է մաքրիչ աղտից՝ լուացիչ հոգւոյ: Լուսաւորէ գմիտս և զհոգիս մարդկան. որք փրկութեան իւրեանց փափաեալ ցանկան: Առիթ է սա ունելոյ շնորիս եօթնարփեան. որով բացեալ լինի դուռն արքայութեան. փակէ և խորտակէ զդրունըս դժոխոց. ուր վառի հուրն անշէշ, չարչարիչ հոգւոց: Յերթիչ է սա դիւաց, որք յերկնից անկան. և կորստեան մարդկան ուժգնակի բաղձան: Կոչէ հրեշտակս յերկնից, զի առ մեզ գայցեն. և զօգնութիւնս իւրեանց մեզ մի խնայիցեն: Առէք զբարի խրատ յայսմանէ զըրոյս.

զի յաւելցի ի ձեզ հաւատ սէր և յոյս.
 աստ կարիցէք ունիլ զօգնութիւն շնորհաց.
 և անդ արժանացէք երկնային փառաց:
 Պահպանիչ է զիրս այս իւր ընթերցողաց.
 ապաւէն և յոյս իւրոց սիրողաց:
 Է առաջնորդ նոցա յերկինս այն բարեաց.
 ուր ոչ գոյ տառապանք, և ոչ վիշտք չարեաց:
 Երանի այնոցիկ, որք զայս ընթեռնուն.
 զի փրկին ի չարեաց անթիւ և անհուն:
 Ժառանգեն զերկինս, ուր գոյ գանձ անթիւ.
 որուն միշտ փափաքին՝ որք սուրբք են սրտիւ:
 Տէրունական ազնիւ անդ խրախճանք կազմին,
 և խրախճանակիցքն ընդ սեղան բազմին,
 ուր ճաշակեն խորտիկս զուտ անապական,
 որք ոչ երբէք տեսան ի յաչաց մարդկան:
 Էր ձեռացագիր իմ, զիրս այս պիտանի.
 զոր ետու տպել ծախիւքս ընտանի,
 և զոտանաւորս զայս, զոր շարադրեցի.
 ընդ գրքիս բոլոր՝ ձեզ ընծայեցի:
 Սիրով ընկալարուք ըզգիրս զայս ցանկալի.
 որ է այգի ծաղկեալ պարտեզ պտղալի:
 Ուր կարէք ճաշակել զքաղցրութիւն զայն. զոր ճաշակելոց
 են արդարքն միայն:



*Պարծուցիչ նոլորելոց, դարձո՛ր զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի
 սովորութիւն եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ
 գեհեմոյն եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից
 զարդարութիվն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:*
 (Յաւատով խոստովանիմ)



Նախնիներին ողբալու և սգալու մասին

Վա՛յ այն օրվան, որ ստեղծվեցի,
 Վա՛յ այն ժամին, որ խաբվեցի,
 Յոգիս այրվում, խորհուրդս եռում,
 Որ անհուն չար վաստակեցի:

Վա՛յ, որ պտուղն առա կերա,
Վա՛յ, որ պատճառն դրի եվա,
Նրան մատնելով՝ չարդարացա,
Միայն Աստծու աչքից ընկա:

Վա՛յ այն պահին, որ թաքնվեցի,
Վա՛յ թզենուն, որ ծածկվեցի,
Վա՛յ, որ չասացի Տիրոջը մեղա,
Վա՛յ, որ պատճառը համարեցի Նա:

Վա՛յ, որ անճառ կյանքից զրկվեցի,
Վա՛յ, որ դրախտից արտաքսվեցի,
Վա՛յ, որ այս չար աշխարհն ընկա,
Վա՛յ, որ անհոյալ է երկիրը հիմա:

Վա՛յ, որ մեղքով ես հղացա,
Վա՛յ, որ որդիքս ցավով ծնա,
Վա՛յ, որ մահն է իմ առջևում,
Վա՛յ, որ դժոխքն է մեզ հետևում:

Վա՛յ, որ հոգիս ինձնից ելնում
Եվ մարմինս է հողին դառնում,
Վա՛յ, որ բնությամբս ոչնչացա,
Վա՛յ, որ ոչինչ համարվեցա:

Փոշիանալով անարգվեցի,
Նեխած թարախի վերածվեցի,
Մարմինս որդերի կերակուր դարձավ,
Չորս տարրերի մեջ չքացավ:

Ոչ էր և չի լինելու սա,
Ոչ էլ հայտնի է տեղը նրա,
Մահվան հողմն է հնչում նրանում
Ու ինձ պատեցնելով՝ իր հետ տանում:

Եվ հոգիս լուռ առանձնանում,
Եվ ինքն իր մեջ տխուր խորհում,
Թե ինչ էի և ինչ դարձա
Եվ գալիքում դեռ ինչե՞ր կա:

Վա՛յ, որ դևերն են չարախնդում,
Վա՛յ, որ հոգիս են գերում, տանում,
Վա՛յ իմ սերնդին, որ պիտ բազմանան,

Որքան դժնդակ օրեր պիտի գան:

Վա՛յ ինձ, որ անշեշ հրի մեջ ընկա,
Վա՛յ, որ որդերին բնավ քուն չկա:
Սառույց է պատել հոգուս ճացող,
Վա՛յ այս խավարին՝ էլ չլուսացող:

Վա՛յ, որ հոգիներն են մաշվում նրանում,
Վա՛յ տանջանքներից, որ չեն դադարում,
Վա՛յ իմ սերնդին՝ խավարին գերված,
Վա՛յ և եղուկ՝ և՛ ինձ, և՛ նրանց:



Հոգեվարքի, Հոգու ճանապարհի, դևերի պատերազմի և Հոգիների կայանի մասին

Վա՛յ հոգեվարքի իմ դառն օրվան,
Վա՛յ, որ հոգիս առած գնան,
Վա՛յ ապշեցնող ճանապարհին,
Վա՛յ, որ չգիտեմ, թե ուր կտանի:

Վա՛յ, որ դևերն են ինձ հայտնվում
Ու իմ դեմ են պատերազմում,
Վա՛յ, որ մեղքերիս ցուցակն ունեն,
Վա՛յ, որ մեկ առ մեկ կիրապարակեն:



Վա՛յ, որ վկաները չար կհառնեն
Վա՛յ, որ բերաններն իրենց կբացեն,
Աչքերի տեսածն իրենց կպատմեն,
Եվ մեր արածները կթվարկեն:

Վա՛յ, որ հրեշտակը թույլատրի
Ինձ ներսն առնեն իրենց խաղի,
Տանջելով անձն իմ՝ կկռվեն
Եվ իմ վրա կկատաղեն:

Վա՛յ, որ գնդերը չար՝ զանազան
Ահեղագոյու դեմքերով գան,
Ըստ այն չար խորհուրդների,
Որ ինձ գործել տվին մի-մի:

Կերպավորված պես-պես դեմքով,
Սարսափագոյու, չարավորով
Մռլտուն են ու փնչացնուն,
Հոգիս պատռել են նրանք ջանուն:

Ըստ հոգու տասը զորության
Տասը ձևով պատերազմում,
Ձի արժանվույն առնի հոգին
Առհավատչյան դատաստանին:

Դեմքեր սոսկալի և դժնդակ
Հանց մղձավանց քարաքանդակ,
Ցայտուն է հուր նրանց ռնգից
Եվ պաշարում գերված հոգիս:

Չար բանակը դաս-դաս հատված
Խառնիխուռն անդ ժողովված,

Խու՛նք-խու՛նք բերում են գործերը չարի
Ներկայացնում դատաստանի:

Գոչում ծայնով հույժ սաստկագին
Իբրև ճայթունը որոտնամպին,
Եվ գոչումի ծայնից նրանց՝
Կարկանդակ են հոգիս ճնշված:

Դեմքեր են հայտնվում ինձ զանազան
Անուններով հայտնի ու բազմազան.
Դեք, սատանա, քաջքերից և ալքերից,
Եվ հալվում են հոգիները նրանց ահից:



Հոտը գարշության և հույժ նողկալի
Փչում է դևերի դասից զագրելի,
Եվ աղտեղության գարշ տաղտուկում
Հոգիներն են տարրալուծում:

Պատում հոգին շուրջանակի
Ըստ վեց շարժման սխալանքի,
Դեպ վեր, դեպ վար, դեպ ձախ, դեպ այջ
Մրցում, կռվում հետ ու առաջ:

Պատերազմում ծածուկ, հայտնի,
Ըստ զգայության կրկնակի՝
Ըստ խորհրդի մտքի, սրտի
Եվ ըստ հայտնի չարի գործերի:

Խավարամած օդի միջին
Իրենց դեմքերով պիղծ դիվային,
Ապշեցնում են, ու մտքերը ցնդեցնում,
Այնուհետև մեջքից բեկում:

Արձագանքում է ծայնը նրանց՝
Այո, այո, մեր աչքերով տեսած
Գործերը չար մեր կատարած.
Առաջիմից վերջինն արած:

Առևանգել են ջանում հոգին՝
Նման Մովսեսի մարմնին,
Ապա հրեշտակն է վերից ծայնում՝
«Կսաստի Տերը ձեզ», ու նրանց քշում:
Ահագնակերպ նրանց տեսքից,

Յալած ինչպես մոմը հրից,
Մարտի միջին նվաղ հոգին
Մեջքը կոտրած կսկծագին:

Վերև տարված հրեշտակից
Յոգին տրվում է կայանին,
Այնտեղ տեսնելով պարզորոշ
Դատավճիռն իր վճռորոշ:

Եվ տեսնում է կայանած
Յոգիներին ամբարված,
Դասակարգված ու բաժանված
Ըստ մեղքերի տարբեր գործած:

Պոռնկաց դասն առանձին,
Մարդասպանները՝ այլ բաժին
Ձրկողները շարված խմբով առանձին,
Չարագործներն էլ իրենց հերթին:

Ահա տեսնում է վեր ելած հոգին
Յրապարակն այն կսկծագին,
Լացող դասերով ողորմագին
Խոււմբ-խոււմբ հենված հրապարակին:

Այլևս կցված հրապարակին
Լալիս են նրանք հառաչագին,
Եվ մորմոքում, մանում փոշին
Մինչև հասնեն Դատաստանին:


Վա՛յ իմ վերջին գիշերին,
Երբ մեղքերն իմ հայտնեցին
Վա՛յ, երբ փողը վերջին հնչի
Ի մեջ բերի գործն իմ անձի:

Երկինք, երկիր ի լուր ծայնին
Յավաքվելու են միասին,
Եվ ինձ բերեն-դնեն բեմին
Ի տես, ի ցույց ամենքին:

Ասելու են. -Սա է այն այրը մահածին,
Որ միշտ սիրեց կորուստն անձի,
Որ կոչ արեց բոլորին
Խառնվել գարշ դիվաց դասին:

Վա՛յ և եղուկ են ինձ կարդում
Բոլորն, ովքեր ինձ են նայում,
Ի՞նչ շահեցիր չար գործերում.
Գեհե՞նն ու հուրն են քեզ սպասում:

Չհավատացիր Փրկչի խոսքին,
Որ այդ է լինելու քո ապառնին
Այժմ աղաչում է Արքային,
Խնդիր դնում Դատավորին:



Ահեղ Դատաստանի Հարցաքննուժյան մասին

Երբ երկնքի դուռը բացվի
Եվ ահագնագին ծայնը հնչի,
Դասը հրեղենաց ներքև կիջնի,
Եվ երկինքը կդատարկվի:

Այնժամ կհնչի բառբառը փողի
Յանց բարձրագոյ ռոտո երկնի,
Եվ կիրավիրվեն չորս տարրերը նյութի,
Աստծուն վկայելու գործերն աշխարհի:

Այնժամ մեռյալքն նույնպես կարթնանան,
Յարություն առած Դատաստան կգան,
Ոմանք ինչպես լույսն արեգական,
Ոմանք էլ՝ խավարած դևերի նման:

Չորեքերայան աթոռ պիտ դնեն,
Որի տեսնողները հույժ կսարսափեն
Չիտուս Աստվածն է բազմելու, որին
Եվ հարցաքննելու է Նա ամենեքին:



Չարքեր է տալու Նա սիրալիր,
Որից կդողան երկինքն ու երկիր,
Ընկեր, այդ ինչո՞ւ ներս խուժեցիր,
Եթե հարսանյաց հանդերձ չունեիր:

Այնժամ շուրթերը պիտի պապանձվեն,
Ձի պատասխանելու բնավ բան չունեն,
Այլ ինչպես մոռնը կրակից,
Նրանք կհալվեն Աստծո ահից:

Ոտքը և ձեռքը նրանց կկապի,
Ապա սրով միջից կկտրի,
Անհավատների կարգը կդասի,
Ու տարտարոսը նրանց կզցի: